

Ս Մ Բ Ա Տ Բ Ի Ի Ր Ա Տ

[Տ Է Ր Ղ Ա Ջ Ա Ր Ե Ն Ց]

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն Ե Ր Կ Ե Ր

Ա .

Ա Ի Ա Ր Ա Յ Ր Ի Ա Ր Ծ Ի Ի Ը

Կ Ա Մ

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ք

Ո Ղ Բ Ե Ր Դ .

[ 5 Ա Ր Ա Ր Ե Ա 4 Պ ա ս կ ե Ր ]



[Առաջին անգամ ներկայացուած Գառնի, Խախախան  
Թատրոնին մէջ, 1900ի Վարդանանց գիշերը, Հասուկա-  
նեան-Պէնկեան միացեալ Թատերախումբին կողմէ.]

Տպագր. ԶԱՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, 1909

Ներկայացման իրաւունքը վերապահուած ։

Հեղինակին ստորագրութիւնը չկրող օրինակները վաւերական չեն ։



Երևան, 1954 թ.

ԻՐ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄԻՆ


ԱԶՆՈՒԱՇՈՒՔ

ՅԱԿՈԲ ԷՖԷՆՏԻ Գ, ԶԱՄՊԱԳՃԵԱՆԻ

[ ԳՕԱԹ՝ԱՆՁԱ ]

Կը ձօնէ

ՀԳԳ,ԻՆՍՍ.ԿԸ



Ազն.

Յակոբ ԷՅ. Գ. Զամպազնեան

Գօսթանձա

Բարեկա՛ւ,

Անշուշտ պէտք է յիշես, որ ես երբե՛ք չեմ կրնար  
մոռնալ, երբ որ դէտ հերու, Տօյրուճայի սիւսար  
Ոստիկանապետը, սկի երկու վարկոց արարածներէ  
քերսորուած, երկրէն քանուչորս ժամուան մէջ հե-  
նացուես հրամայեց, չի նայելով ստուած օղիէ ու  
կասղած ծովիւն. երբ որ, հաշածուած, ընկճուած ու  
շքուած, ա՛յ չէի գօրեք կեանքի շուծը կրելու, դո՛ւն  
երեւցար այն ստե՛ն, մոռցար դիրքիդ փափկութիւնը,  
սարիներու քրտնոյն ստեղծած հարստութիւնդ արեւ-  
մարհեցիր, անկէ հաւանական վսակց աչքդ առիւր ու  
քարեկամի ձեռք վը կարկանդեցիր, Զեքուի ազատ  
շեռներէն հեռու վսարուած ու կրկնակի արտորուած  
փախսականի վը խորունկ վերքիւն վրայ սիւնակի  
սպեղանի վը դիտելու համար...:

Ընդունե՛ք ներեմն այս փոքրիկ երկը, իբրեւ սքը-  
սագիւն նուէր վը՝ Քեզի միշտ հաւատարիմ քարեկամեդ:

1909 Յունիսար 1

Կ. Պոլիս

ՍՄՐԱՆ ԲԻՒՐԱՆ



Ա Ն Ձ Ի Ն Ի

---

ՅԱԶԿԵՐՏ ԱՐՔԱՅ ՊԱՐՍԻՑ

ՎԱՍԱԿ ՍԻՒՆԵԱՅ ԻՇԽԱՆ

**ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ**

ՏԻԿ ԶԱՐՈՒՀԻ »

ՕՐ . ՇՈՒՇԱՆԻԿ »

ՎՐՈՅՐ (ՇՈՒՇԱՆԻԿԻ ԽՕՍԵԳԽԱԼԸ)

ՅՈՎԱԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿ . ՌՇՏՈՒՆԵԱՅ

ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ

ԶԱՆԳԱԿ ԵՐԷՑ (ՄԱՍՆԻՆ)

ԴԵՆՊԵՏ

ՄՈԳՊԵՏ

ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՀԱԶԱՐԱՊԵՏ

ՆԵՐՇԱՊՈՒՀ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՆՁԱՐ ԱՄԱՏՈՒՆԻ

ՎԱՀՐԱՄ ԶԻՆԱԿԻՐ

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ , ԶՕՐՔԵՐ , ՔՈՒՐՄԵՐ ,

ԵԻԱՅԼՆ







# ԱՒԱՐԱՅՐԻ ԱՐԾԻԻԸ



Ա Ր Ա Ր Ա .

Տ Ե Ս Ա Ր Ա Ն , Ա .

**ՎԱՐԳԱՆ** (Տիւն, իր սպարաւի սրահը) — Այս՝ կըռուելի՛լ կամ ուրանա՛լ, ա՛յս է Յազկերտի կամքը . Միհրըններսեհ պատասխան կ'ուզէ, Դենչապուհ մարզպանը բնաջինջ ընել կը սպառնայ բոլոր հայութիւնը, եթէ մերժենք հրովարտակը . իսկ եթէ չը մերժենք զայն, պէտք է ուրեմն մերժենք մեր Աստուածը, մեր Եկեղեցին, մեր Ազգը . պէտք է թաղենք մեր անկախութիւնը: Եթէ ո՛չ, պէտք է ընդունինք պատերազմը, սո՛ւրբ պատերազմը . . . (Տե՛ծ + Ելե՛ր՝ Չ սրահը կը շփէ): Ու միթէ կա՞յ ուրիշ ելք մը: Յազկերտ՝ արիւնի ու մոխիրի թագաւո՛րն է . Արեւելքին բռնակալը, Արեւմուտքին Սարսափը . ա՛նձ ու գանձ սպառեց արդէն, բայց դեռ պարտութիւն չի՛ խոստովանիր . ան՝ մէ՛կ երազ ունի . ազգերը տաղաւարել Որմիզդի շուքին տակ, «Մի հօր և մի հօղի» . Զրադաշտի դիւանկար դրօշակը ծածանեցնել խաւարամիտ խուժանին

վրայ . . . : Զառանցանք . . . (+բէջէր-վ) : Ո՛րքան ալ  
 դիւրին բան . բայց վարդանի երակներուն մէջ դեռ  
 կը հասի արիւնի կաթիլ մը՝ Ս. Եկեղեցիին , կաթիլ մը  
 Ս. Վրէժին , վերջին կաթիլ մըն ալ՝ Ս. Ազատութեան  
 համար . . . : Սթափէ՛ , Յաղկե՛րտ , սթափէ՛ ցնորքէդ ,  
 վարդան դեռ ո՞ղջ է . (Բ-բ-բ-+աձ) վահրա՛մ . . . (վահ-  
 բաճ Ներս կը ճարէ) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

Վ Ա Ր Գ Ա Ն , Վ Ա Հ Ր Ա Մ

Վ Ա Հ Ր Ա Մ — Տէ՛ր Սպարապետ :

Վ Ա Ր Գ Ա Ն — Պատրաստ է ամեն բան :

Վ Ա Հ Ր Ա Մ — Կազմ ու պատրաստ , ձեր հրամա-  
 նին համեմատ :

(Ներս կը ճարէ ՏԻԿԻՆ Զ-բ-բ-հի)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ .

Ն Ա Խ Ո Ր Գ Ն Ե Ր Ը , Զ Ա Ր Ո Ւ Հ Ի

Զ Ա Ր Ո Ւ Հ Ի — Ի՞նչ պատրաստութիւն դարձեալ :

Վ Ա Ր Գ Ա Ն — Ի՞նչ կայ սր . . .

Զ Ա Ր Ո Ւ Հ Ի — Ի՞նչ պիտի ըլլայ , արեւմուտքէն ա-  
 րեւելք , հարաւէն հիւսիս , արշաւեցիր ու դեռ կ'ար-  
 շաւես . առ ի՞նչ է . Կովկասի կիրճերէ՞ն ալ չը ձանձ-  
 րացար . ա՛լ հերիք է , քիչ մըն ալ տունդ կեցի՛ր :

Վ Ա Ր Գ Ա Ն — Ի՞նչ կը խօսիս , Զարուհի՛ , ի՞նչ .  
 Թողում սր Պարսիկը պղծէ՞ մեր տաճարները . մոխի՛ր  
 դառնան դիւղորէներն ու քաղաքները , արեւապաշտ  
 քուրմերը դան թափին Հայաստանի գոգը . մեր խո-

րաններէն Որմի՞զդը քարոզեն, Ա՞րհմնը աւետարանեն, Միհրը փառաւորեն ու մեր Փրկի՞չը նախատեն, ծէսերնի՞ս ծաղրեն... (հեռզհեռե «բարեբաշխի կը պարզաբ») ո՞ր գեղդ մնաց կոյս. մնաց քաղաք մը, ուր մուտ գտած չըլլան այդ գարշելի առաքեալները... : Ահ, Զարուհի՛, սոսկալի՛ վիճակ է :

**ԶԱՐՈՒՀԻ** — Միայն քո՞ւ աչքիդ առջեւ կ'ըլլան այդ ամեն բաները... :

**Վ.Ա.ՐԳՒԱՆ** («բարեբաշխ») — Դուն չի՞ պիտի հասկնաս իմ կոչումս. երբ կրօնք ու հայրենիք կը խօսին, ամէն բան կը լռէ. ի՞նչ կ'ուզէիր, լուռ մուռ ահանաւեսները ըլլայինք այդ բոլորին : Հայաստանը մոխրակոյտ մը պիտի դառնայ. մոխրակոյտ մը, անհուն ատրուշա՛ն մը... :

**ԶԱՐՈՒՀԻ** — Դիւրի՞ն բան է, դարերու գործ է ադ. քեզի ո՞վ ըսաւ թէ Յազկերտ անմահ է, միթէ երաշխաւորած է յաւիտենականութիւնը. իր պաշտած Միհրին տակ օր մըն ալ ինք պիտի գլտորի. այսօր կայ, վաղը չը կայ, վաղուան տէրը չէ՛. ծագող արշալոյսը թերեւս իր գերեզմա՛նը պիտի լուսաւորէ. մինչդեռ Եկեղեցի, Հայրենիք անմահ են :

**Վ.Ա.ՐԳՒԱՆ** — Խաչ ու Աւետարան, Գողգոթա ու Արարատ մէ՛կ բերան վրէժ կ'ազաղակեն, իսկ դուն անտարբեր կը մնաս. Զարուհի՛, ու կ'ուզես որ ե՛ս ալ քեզի պէս ձեռքերս ծալած նստիմ :

**ԶԱՐՈՒՀԻ** — Քեզի՞ միայն, քեզի՞ մնաց, Տէ՛ր Սպարապետ, պաշտպանել այս ապերախտ ազգը. չը նայի՞ս ի՞նչ կ'ընէ վասակ. ինքը տէրը չէ՞ աշխարհիս, ի՞նքը, Սիւնեաց իշխանը, նախարարներուն Գլուխը, Հայոց մարզպա՛նը. ան ինչո՞ւ չի շարժիր. ինքը չէ՞

ամենէն իմաստունը, փորձառուն ու զիւանագէտը .  
ան ինչո՞ւ չը վրդովիր, դո՞ւն միայն եղար Հայաս-  
տանի բաղգին վարիչը . (—չ+երբ —բց—ն+—) ընտանի՛քդ,  
մէկ հատիկ Եռչանի՛կդ յիշէ՛ . . . :

**ՎԱՐԳՍԱՆ** — Մի՛, մի՛ առներ բերանդ այդ բա-  
ռերը, գիտե՞ս ս'վ ես դուն . գիտե՞ս, Տիկին Մամի-  
կանեանը . մա՛յրը մեծ ազգին, որուն բաղգը սեւցեր,  
արեւը մարելու մօ՛տ է . մեր անկախութեան վերջա-  
լոյսը կը թաղուի գերութեան գիշերուան մէջ ու դուն  
ընտանեկան յարկի, սիրոյ և երջանկութեան արշա-  
լոյսները կ'երգես . . . :

**ԶԱՐՈՒՀԻ** — Բայց ինչո՞ւ ամուսնացար :

**ՎԱՐԳՍԱՆ** — Զգո՛յշ, Զարուհի՛, մոռցա՞ր տոհմդ :

**ԶԱՐՈՒՀԻ** — Սիրտս փղծկա՛ծ է . ի՛նչ խօսիլս  
չեմ գիտեր, Սպարապե՛տ . ե՛ս ալ գիտեմ թէ՛ ի՛նչ  
ճգնաժամէ կ'անցնի ազգս, ե՛ս ալ կը պաշտեմ հայրե-  
նի՛քը . հագի՛ս կը նուիրեմ Հայաստանիս արեւուն .  
բայց երբ որ շուրջս կը գալարուին սողուններ, գա-  
ւաճաններու սերո՞ւնդ մը . կը սառի՛ այն ատեն սիրտս,  
կը կարմրի՛մ անուէնէս : Պարտիկին ի՛նչ է յանցանքը,  
երբ մերինները, կղեր թէ աշխարհական, եղած են  
Յազկերտի խորհրդատուները, թունատու կարիճ-  
ները . . . :

**ՎԱՐԳՍԱՆ** — Մաքրե՛լ պիտի տամ մեր մէջէն,  
բոլոր պիղծերը . պիտի կոխկռտե՛լ տամ զեռունները .  
գիմակները պիտի պատուեմ կեղծ հայրենասէրներուն .  
աշխարհի երեսին պիտի պոռամ թէ՛ հայ ազգը՝ մար-  
տիրոս ա՛զգն է, ազգերուն է՛ն ազնիւը :

**ԶԱՐՈՒՀԻ** — Կարմի՛ր սպարապետ, թողութի՛ւն,  
հանդարտէ՛ քիչ մը . . . : Այո՛, իրաւունք ունիս, ե՛ս  
ալ գիտեմ, սո՛ւրբ է, նուիրակա՛ն է հայրենիքը .

բայց սաղիսն ունիս ընտանիք մը, որ քեզմով միայն կրնայ ապրիլ. ընտանիք մը, որ առանց քեզի, քանդուած ապարանք մըն է, գերեզման մը: Քաշուէ՛ արիւնի տապարէզէն, պատերազմներու փոշին թօթուէ՛ վրայէդ, մտի՛ր ընտանեկան յարկը, ապրէ՛ խաղաղ կեանքը, մոռցի՛ր զէնքերուն փառքը . . . :

**Վ.Ա.ՐԳԱՆ** — Ա՛լ բաւական է, դուն քաշուէ՛ սենեակդ, ապրէ՛ խաղաղաւէտ կեանքդ. ես ամեն բան խորհած եմ ու վճռած: (Նոյն ժըղջիւ վահր-ժ շէր-կը հըմէ շո-ղ-ժ)

**Վ.Ա.ՀՐԱՄ** — Տէ՛ր սպարապետ, Ս. Հայրապետին կողմէն բանրեր մը կըւպասէ դուրսը, այս գրութիւնը յանձնեց:

**Վ.Ա.ՐԳԱՆ** — (Ն-ճ-կիւ զրայ շոյելով, վահր-ժ) Ըսէ՛ բանրերին, թող չըսպասէ:

**Վ.Ա.ՀՐԱՄ** — Արդէն վար չէ՛ իջեր ձիէն. ա՛յնչափ կ'աճապարէ.

**Վ.Ա.ՐԳԱՆ** — Զարուհի՛, զիս քիչ մը մինակ թողէ՛ք. տեսնե՛նք ի՛նչ պիտի ընենք:

**ԶԱՐՈՒՀԻ** — (Տ-ճ-լով Դ-ժ-ժ կ'ելլէ). Նո՞ր պիտի խորհիս ի՛նչ ընելիքդ. արդէն ըղեղիդ մէջ դրած ես կռուիլ:

**Վ.Ա.ՐԳԱՆ** (Բ-ժ-ժ-ժ-ժ կ-ր-լ-ով Ն-ճ-կը). —

«Առ արի Սպարապետն Հայոց Մեծաց Վարդան ի Տանէն Մամիկոնեանից, սղջոյն և օրհնութիւն ի Տեառնէ մերմէ և ի Փրկչէն Յիսուսէ Քրիստոսէ:

«Յայտ լիցի Սիրելութեանդ մերում զի այսօր յեա միջաւուր եղիցի ժողովս համագումար ի քաղաքի աստ յԱրտաշատ, յոր հրաւիրեալք են ի նախարարաց որոց յայտնի են անուանք յաշխարհիս Հայոց, առ ի

գրել և յղել զպատշաճ պատասխանիս հրովարտակին  
Յազկերտի արքայից արքային Պարսից :

«Հաճեսցի ուրեմն և Սիրելութիւն քո ժամանել  
այսր ի սերկեանս՝ ժողովոյս այսմիկ գոլ մասնակից  
և փուլթալ ի խորհրդակցութիւն :

«Ողջունիւ սիրոյ և օրհնութեան

Աղօթարար

ՅՈՎՍԷՓ ԿՍԹՈՂԻԿՈՍ ՇՅՅՈՑ

ի Փրկչական ամին 150

ի 14ն Հոկտեմբերի,

յԱրսաբաս

Վահրա՛մ, ձիս հանէ՛ :

**Վ.Ա.Հ.Ր.Ա.Մ** (Վահրամ Կոստանիւնիս Կոստանիս Կոստանիս) — Տէ՛ր սպարապետ, Ղեւոնդ երէցը կուգայ :

**Վ.Ա.Ր.Դ.Ա.Ն** (Կոստանիս) — Այս ատեն ի՞նչ գործ  
ունի. կաթողիկոսը թողեր, եկեր է զիս տեսնելու,  
ո՛վ գիտէ ինչե՛ր ունի խօսելիք. (Գրեմէն Կոստանիս Կոստանիս  
Կոստանիս Կոստանիս Կոստանիս). Վահրա՛մ, գնա՛, գնա՛ դիմա-  
ւորէ՛. (Վահրամ Կոստանիս Կոստանիս) մերինները չը տեսնեն.  
տեսակցութիւնը գաղտնի պէտք է ըլլայ. մինակ,  
բոլորովի՛ն մինակ ըլլանք. (Կոստանիս Կոստանիս Կոստանիս Կոստանիս,  
Տէր Ղեւոնդ ներս կը յանէ) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ .

Վ.Ա.Ր.Դ.Ա.Ն, ՂԵՒՈՆԴ

**ՂԵՒՈՆԴ** — Ողջո՛յն ընդ քեզ, քա՛ջդ Սպարապետ .

**Վ.Ա.Ր.Դ.Ա.Ն** — Օրհնեա՛ Տէր, հովի՛ւ քաջ :

**ՂԵՒՈՆԴ** (Կոստանիս) — Ատեն չը կայ, պէտք է  
հիմա՛յ ետ դառնամ. գիտե՞ս ինչո՛ւ եկած եմ .

Ս. Հայրապետը զիս զրկեց որ գաղափարդ առնենք  
կանխաւ ու ըստ այնմ շարժինք Համագումարին մէջ :

ՎԱՐԳԱՆ — Գաղափարս նո՛յնն է :

ՂՆԻՈՆԻ — Այսինքն :

ՎԱՐԳԱՆ — Հրովարտա՛կը խզտել, պատերա՛զմ  
հրատարակել :

ՂՆԻՈՆԻ — Բայց պատրաստ էք. բերդերն ու  
պարխապները պաշտպանուելու դիրքին մէջ են. նա-  
խարարներուն տրամագրութիւնները շօշափա՛ծ էք.  
միանուագ սպասամբութիւնը կարելի՞ է. վասակի  
մեքենայութիւնները չե՞ս լսեր. աճապարելով գործ  
չըլլա՛ր . . . :

ՎԱՐԳԱՆ — Ամեն բան պատրաստ կ'ըլլայ,  
վտանգը՝ վտանգ ըլլալէ կը դադրի, երբ գոյի կամ  
չըգոյի խնդիրը կը ծագի. ի՛նչ կը կարծէք, երէ՛ց,  
ժողովուրդը մեռա՛ծ կը կարծէք :

ՂՆԻՈՆԻ — Օրհնեա՛լ ըլլայ ժողովուրդս, Տէ՛ր  
սպարապետ, կենդանի՛ է և հլու, գառնուկներու  
հօտ մը. այդ կողմէ վախ չունիմ. վախս, միակ  
կասկածս՝ նախարարներուն կողմէ՛ն է. փառամոլներ  
կան, փառամոլներ որոնք՝ ա՛զգն ալ, կրօ՛նքն ալ  
պիտի սւրանան. վա՛տ իշխաններ . . . :

ՎԱՐԳԱՆ — Մի՛ կարդար, երէ՛ց, ահաւոր յայտ-  
նութիւններդ հոգիիս մէջ բանեցան. սուր սլաքի մը,  
դժնիկներո՛ւ պէս ցցուեցան սրտիս վրայ, խո՛րը մըխ-  
ուեցան, վէրքեր բացին. այո՛, իշխաններ ունինք,  
եսամոլ նախարարներ, որոնք պիտի մատնեն Եկեղե-  
ցին, պիտի քանդեն մեր տունն ու տեղը :

ՂՆԻՈՆԻ — Անիրա՛ւ Միւնին կը տեսնե՞ս. կը  
վախնամ որ չըլլա՛յ թէ այսօրուան Համագումարը  
խանգարէ, միտքերը պղտորէ, ընէ չընէ, հրովար-

տակին նպատաւոր ու պահանջուած պատասխան մը տրուելուն վրայ պնդէ, իր ետեւէն քաշէ իրեն պէս անխիղճ ուրացողներ ու վերջապէս պառակտում ձգէ իշխաններու միջեւ: Այն ատեն ի՞նչ ընել պէտք է:

**ՎԱՐԳԱՆ** — Այն ատեն, ամէն ճիգ կը թափենք զանոնք կարգի բերելու. ու եթէ խրատով ու յորդորներով չը յաջողինք, կը զատենք զանոնք փարախէն, գայլերը՝, լրտեսները՝, դաւաճանները. կը զատենք մեր խումբէն, ամէ՛ն զգուշութիւն կը բանեցընենք, զազանիք մը դուրս չը հանելով, ձեռքի տակէ կը կազմենք մաքաւող, անդիմադրելի ուժ մը. ազգը բոլոր՝ մէ՛կ բանակ. ահա՛ մեր տալիք պատասխանը՝ Յաղկերտի հրովարտակին:

**ՂՆԻՈՆԻ** — Ատոր տարակոյս չը կայ, բայց վասակը՝. ա՛խ, եթէ կարգս ներէր, եթէ սա սքեմը չըլլար, անոր արիւնը ե՛ս կը խմէի:

**ՎԱՐԳԱՆ** — Այդքան սոսկում ազգած է ձեզի, երէ՛ց, Սիւնեաց իշխանը:

**ՂՆԻՈՆԻ** — Ե՞ս վախնամ:

**ՎԱՐԳԱՆ** — Իրա՛ւ, ազգեցի՛կ է, վարպետորդի՛ է, բայց չը մոռնանք նաև որ վախկո՛տ ալ է, որովհետեւ բռնաւորի խմոր ունի. բռնաւորները յաճախ վախերնո՛ւն է որ անգթութիւն կը գործեն. ան՝ վերջը վերջը պիտի տեղի տայ, հաւատացէ՛ք, եթէ սանկ կտոր մը նշմարեմ իր կտակածելի ընթացքը, ժողովին առջեւ կը մերկացնեմ զինք իր բոլոր յոխորտանքներէն: Ես այսօր կը խօսիմ միլիոններու բերնէն, որոնք մէկ սիրտ ու մէ՛կ կամք, ուխտեցին պահել Հայութեան պատիւը, հաւատքը, լեզո՞ւն ու պատմութիւնը, չքնաղ աւանդները մեր վեհ նախահայրերուն. այդ աւանդները՝ սուրբ նշխարներ են, մա-



սուենքի պէս պիտի պահենք զանանք, Տէ՛ր հայր, դուն հանգարտ կեցի՛ր:

**ՂՆԻՈՆԳ** (արցունք արեւ) — Ես գիտեմ որ Մամիկոնեան Տոհմը՝ երկրորդ Նախախնամութիւնն է Հայաստանին. գիտե՛մ, գիտե՛մ որ վարդան, հալաթիւ արծիւ մը, սաւառնած կեցած է հայրենեաց վերել ու պիտի չը թողո՛ւ որ օտարներ յափշտակեն մեր ինչքերը. Տէ՛ր Յիսուս իր բարերար աջով պահէ պահպանէ այս օրհնեալ Տունը, Ազգին Ապաստանարանը:

**ՎԱՐԳԱՆ** — Տէ՛ր Հայր, այդ խօսքերը չե՛ն ախորժ հնչեր ահանջներուս, որոնք կը սիրեն յաճախ դոնջել շեփորներու շնչոնքէն ու սուրերու շկահէն. ծարաւի եմ ծարաւի. պատերազմի պապակէ՛ն կը տառապիմ. կ'ուզեմ ժա՛մ առաջ կռուիլ մե՛ծ կռիւր, վճռակա՛նը, ջախջախել յամառ Յազկերտի գլուխը, որուն ըղեղը՝ կարծես թէ լեցուած ըլլար տարուշաններու մոխրովը:

**ՂՆԻՈՆԳ** — Դժոխքի կրտսէր տանի, կրտկներու մէջ տապալակի այդ կրակին երկրպագուն, այդ պատուհասը քրիստոնէութեան:

**ՎԱՐԳԱՆ** — Է, հիմա ի՛նչ պիտի ընենք, մօտեցա՛ւ ատենը:

**ՂՆԻՈՆԳ** — Ի՛նչ պիտի ընենք, պիտի երթանք ներկայ գտնուինք. հոն անշուշտ առարկութիւններ պիտի ըլլան, մենք պիտի հերքենք. ի հարկէ խօջընդոտներ պիտի դիզեն մեզի դէմ, մենք մէկդի պիտի ընենք ու վերջապէս, այսօր, վաղուան չը ձգելով պիտի ջանանք ամենո՛ւն ալ ստորագրել տալ պատասխանը, որ արդէն քեզի ծանօթ է. Հայր Եղիշէ Ամատունիին շարադրա՛ծը: Լաւ գիտեմ որ Յազկերտ

մէկ երկու տողը գեռ աչքէ չանցուցած, պիտի կատարի, փրփրի, գազան կտրի, և...

**ՎԱՐԳԱՆ** — Պիտի պատերազմ հրատարակէ. ի՞նչ է արդէն մեր ուղածը, մեր փնտռածը: Կ'աղաչեմ, Տէ՛ր հայր, ժամանակը սո՛ւղ է, երթանք, երթանք Արիւնին ու Յաղթանակին ճամբան, այ՛, կռուի՛լ պէտք է, յաղթե՛լ կամ մեռնիլ:

**Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե**

(ՇՈՒՇԱՆԻԿ, ԴԻՄԻՏՐ ԺՂԻՆԿԻՐ ԴՐՕՂ ԺԸ ՅԵՄԵ, յանկրժ ՆԵՐ՝ ԿԸ ՆԵՐ՝Ի)

**ՆԱԽՈՐԴՆԵՐՆ ՈՒ ՇՈՒՇԱՆԻԿ**

**ՇՈՒՇԱՆԻԿ** — Այո՛, հայր սպարապետ, յաղթե՛լ կամ մեռնիլ, այսպէ՛ս ուխտեց Շուշանիկ:

**ՎԱՐԳԱՆ** — (Յանկրժ-ի՛նէ եկ-ժ, ժպտել-լ) Ասո՛ւր էր որ:

**ՂՆԻՈՆԳ** (հէ-ց-ժ-լ) — Ապրի՛ս, աղջի՛կս, ապրի՛ս, կ'օրհնեմ ուխտդ, եռանդդ սիրեմ, ս'վ հօրդ արժանաւոր պայազատիկ, կեցցե՛ս միշտ, Մամիկոնեան Չարմին անուշահոտ ու գունագեղ ծաղի՛կը...

**ՇՈՒՇԱՆԻԿ** (հեր-ի-նէ ժԸ ԴԵՐ-Ի) — Անուշահոտ կամ գունագեղ, արժանի չե՛մ կոչուելու, մինչեւ որ իմ սեռիս պատիւը չը փրկեմ, մինչեւ որ՝ լիկուած քոյրերուս, հայրենիքիս ամբիժ կոյսերուն վրէժը չը լուծեմ. ա՛յն ատեն միայն իրաւունք կըստանամ Մամիկոնեան տան ծաղիկը կոչուելու, երբ որ վազեմ դա՛շտը պատերազմի, խառնուի՛մ քաջերու երամին, քաջաբա՛ր կռուի՛մ ու, եթէ պէտք ըլլայ, մեռնի՛մ. հայրենեաց համար զոհուողին երանի՛... անմահու-

թիւն է ան, ո՛չ թէ մահ:

**ՎԱՐԳԱՆ** (կարգաւորութեամբ ղեկավարելու, հարգելու) — Երանի թէ այդ քու զգացումներուդ կէսին կէսը, քառորդին քառորդը ունենար . . . մայրդ . բայց, հոգիս, դուն քիչ մը համբերէ՛, հոս կեցի՛ր, ստե՛նը կայ. այս անգամ ես մինակ երթամ, լուծե՛մ վրէժը բիւրաւորնե-  
րուն. իսկ դուն, հոս կեցի՛ր, մօրդ քով, զինքը մխիթարէ՛, սրտապնդէ՛. ան շահ կարօտ է քեզի պէս խորհրդականի մը. (Գրգռելու Տ. Անուշի) այնպէս չէ՞ Տ. Հայր:

**ՂԵՒՈՆԻ** (Շնչակցի) — Այո՛, այո՛, հոս կեցի՛ր, աղջիկս, Աստուծով, Հայոց սպարապետ հայրդ՝ յաղթութեան դափնիներով պիտի դառնայ և վարձատրէ քեզ (ժողով) ուրիշ կերպով, դուն աղօթք ւրէ՛ որ շուտով վերջանայ մեծ կռիւը, որ դեռ չէ՛ սկսեր.

**ՇՈՒՇԱՆԻ** (անհանգիստ, զրոյշ) — Իմ վարձատրութիւնս՝ պատերազմի դաշտին մէջ պահուած է. իմ պսակս՝ (Բարեցնելու՛ յետէ Կրօն-ի) այո է, այո դրօշակը, զոր ձմեռ գիշերներ հսկելով ու հսկելով ասեղնագործեցի, գիտե՞ս, Տէ՛ր Հայր, ս՛րքան երգերով նուիրագործած եմ ես այս խորհրդաւոր դրօշակը, Հայրենիքիս սուրբ նշանը. չէ՛, չէ՛, ո՞վ կրնայ զատել զիս ասկէ:

**ՂԵՒՈՆԻ** (արցունքով) — Սանդուխտ ու Հռիփսիմէ կոյսերը քեզի բարեխօս ըլլան, կարմիր վարդանին հարազատ աղջիկ:

**ՇՈՒՇԱՆԻ** (Քշար իանդամ) — Միթէ ես չե՞մ գիտեր սուր շարժել, նիզակ նետել, աղեղ լարել, աշտանակել, չէ՞ որ ամբողջ մանկութիւնս անցուցի այդ մարզանքներով. հիմայ տասնըվեց գարուններովս չե՞մ կրնար աւելի վստահ ու անվեհեր քայլով նետ-

ուիլ պատերազմին ասպարէզը . . . , Մի՛ վախնար , հա՛յր , մի՛ վախնար երբէք ինձի համար . ես կը սիրեմ արիւնը , թշնամիի՛ն արիւնը . . . ի՛նչ . . . կարելի՞ է որ փակուիմ բանտուիմ թափուր ասպարանքիդ խորը , մինչդեռ դուրսը , հայ քաջ եղբայրներուս զնդերը շարժման դրուած են . շեփորի գոռ ու գոչին ո՞ր ականջը կրնայ խուլ մնալ , ո՞ր սիրտը չտրոփեր , երբ մտրտին հրաւիրակը հնչէ , երբ արեւի տակ շողշողան զէնքե՛րը , երբ ճակատամարտի փոշին ամպտէ կապոյտ երկի՛նքը , այն ատեն , ես հոս , աւերակի բուիճակ մը , ասպարանքիդ անխօս ու ցուրտ կամարներուն ներքեւ դեգերի՞մ , վայե՞մ : — Ո՛չ , ո՛չ , հա՛յր , յաւիտեան ո՛չ , ե՛ս ալ զինուոր եմ հայրենիքիս , ուխտեալ զինուորուհի մը . քեզի՛ պիտի հետեւիմ , շուքիդ պէս , պիտի քովէդ չը դատուիմ , վահանիդ քով վահա՛ն պիտի բռնեմ , պիտի չհեռանամ քովէդ ու հե՛տդ պիտի . . . մեռնիմ : (Տեսարանին Տե՛ղ անկէ՛նը կը + - - - - - , դրօշ՝ կին կը լն՝ - - - , դրօշ - - - - - ան կը - - - ) :

**ՂԱՆՈՒՄԻ** (Նոյեւի՛մ ենոր) — Հանդարտէ՛ , աղջի՛կս , հանդարտէ՛ , ամէն բան կարգի կը մտնէ , միայն դուն քիչ մը համբերէ՛ , գնա՛ , հանգիստ ըրէ՛ , մի՛ յուղուիր ու մեզ մինակ ձգէ՛ հոս . (Շո՛ւշանի՛ , շե՛նոս , կը Տօրե՛նայ , կ՛ - - - - - Վը Տ . Ղե՛ - - - - - Լ հօրը վե՛րը ուլե՛ - - - - - , դրօշ՝ կը յե՛ - - - - - կը հե՛ - - - - - , դա՛ - - - - - կ՛եւէ ) :

**ՎԱՐԳԱՆ** — Է՛հ ուրեմն , վարդա՛ն , արտաքին կնճիռները չէ՛ին բաւեր . քի՛չ էին մեր շնորհալի իշխաններուն վատութիւնները . քի՛չ էին մեր վասակի կուտակած բարդութիւնները , Յազկերտի պոռչքտուքներն ու սպառնալիքները , ու հիմայ , ներքին , ահաւոր արգելք մը կուգայ կեցընել ընթացքդ , վար-

դա՛ն . . . : Ես հիմայ երկու սուրի միջեւ կը տատանիմ .  
 Զարուհիին յայտնութիւնները բաւական լուրջ են ,  
 մտմտալ կուտան ամեն ընտանիքի հօր . իրա՛ւ է , ե-  
 րէ՛ց , նշանուած աղջիկս տունը մինակ ձգել չըլլար .  
 ի՞նչ ընեմ . հետո տանի՞մ . խեղճը պիտի չը կրնայ  
 տանիլ պատերազմին մինչեւ վերջը . ա՛խ , որչա՛փ  
 սուղ ես , ս՛վ ազատութիւն . կեանք , ընտանիք , ըս-  
 տացուածք , ոչի՛նչ են քու քովդ . ամեն բան որ  
 ունի քաղցրութիւն մը , պէտք է ստքի տակ առնուի .  
 պէտք է մոռնալ կապերը՛ , յիշատակները . մոռնա՛լ  
 պէտք է ամեն բան . ուրանա՛լ անցեալը , կոխկռտել  
 ներկան ու թաղե՛լ ապագան , պէտք է նետուիլ մահ-  
 ուան սասարէզը , երթա՛լ պէտք է Ազատութեան  
 արիւնոտ ճամբան :

**ՂՆԻՈՆԻ** — Հո՛ն կը հրաւիրէ զմեզ մեր Փրկի՛չը . . . :


**ՎԱՐԳԱՆ** — Հո՛ն կը կանչեն իմ պանծալի  
 նախնեացս վեհափառ հոգիները . . . :

**ՂՆԻՈՆԻ** — Երթա՛նք ուրիմն , երթա՛նք , քա՛ջ  
 սպարապետ , (Ղե-ռ-դ Գ-ր-ն կ'ելլէ , երե-եռ վարդան) :

**ՎԱՐԳԱՆ** (երե-եռ երթալով) — Այո՛ , երթա՛նք ,  
 բայց որի՛ յանձնեմ կեանքիս վարդը , Շուշանի՛կս , որ  
 կրակուբոց , մէ՛կ ազգարար նշանիս կըսպասէ , ձիուն  
 նիւսը նետուելու ե . ինէ առաջ արշաւելու համար :  
 Երթա՛նք , երթա՛նք : (վարդան « Ղե-ռ-դ կը թիկնեն ) :

**ՇՈՒՇԱՆԻԿ** (թնակ , յե-+ին թի Գրօլ-կը) — Ա՛լ կաս-  
 կած չունիմ , պիտի ե՛ս ալ երթամ պատերազմի . (նա-  
 յելով Գրօլ-իկն վրայ Գ-ր-Գ-ր-ն+ով ճը) այո՛ , ե՛ս պիտի  
 բռնեմ քեզ , իմ գեղեցի՛կ ձեռագործս , ս՛վ հայրենի-  
 քիս սրտտելի պատկեր , երազներս՛ւս պսակը , դրօ-  
 շակդ Մամիկոնեան , (երե-եռ կը շարժի , Ղե-ռ-դ+ով կը նայի  
 Գրօլ-իկն վրայ) չէ՛ , ուրիշ ս՛վ պիտի համարձակի քեզ

բարձրացնել իր թեւերուն վրայ, (յնկ-ը՝ յ-ը--ձ)  
մանաւանդ, երբոր, յաղթական վերադարձով մը,  
հօրս քաջամարտիկ գունդերը, ռազմական երգերով  
մտնեն սգատագրուած հայրենիքիս ծոցը. այն ատեն,  
ես առջեւէն պիտի քալեմ, քեզ ձեռքերուս մէջ պինդ  
բռնած ու գլխուս վերեւ լարձրացուցած, երգելով  
ու պարելով, մինչդեռ մայրս, մեր դղեակին աշտա-  
րակէն պիտի դիտէ մեր անցքը... (խորտակ-ը--ձ  
ու եր-դ-ն): Կտրիճներու գունդերո՞ւն մէջ պիտի  
կռուիմ ու վատերը պիտի զարհուրի՛ն, ...: (վայրկեան  
ճշ կը նայի) Բայց եթէ հայրս, անսալով մօրս արցունք-  
ներուն, չը գործագրէ իր խոստումը, ի՛նչ պիտի ը-  
նեմ... : (ու-մը կը նեղուի -- վհ-մ-ն շեշտով ճշ) Ո՛չ, ատ  
չի կրնար ըլլալ հայրս ուր՝ ես հո՛ն... : (դ-ը-ը կելլէ):



## Պ Ա Տ Կ Ե Ր Ա .

[Արաաշատի արձուցիքը ընդարձակ դասիին մը]

Յովսէփ Կաթողիկոս , Սահակ Եպիսկ . ՌԵՏՈՒՆԻ , Նախկ-  
կոպոսներ ու Քորեպիսկոպոսներ , Նախարարներ , Ի-  
խաններ , Վասակ Սիւնի . յետոյ ՂԵՒՈՆԳ Երեց ու Վար-  
դան Մամիկոնեան :

**ՅՈՒՍԷՓ ԿԱԹՈՂ .** — Սրբազան եղբա՛րք իմ ի  
Քրիստոս , որդեա՛կք իմ իշխանք և նախարարք Հա-  
յոց աշխարհիս . առա գումարուեցանք ըստ փափա-  
քանաց մեր սիրեցեալ հօտին : Գիտէ՞ք , ս՛րքան կա-  
րեւոր է այսօրուան ժողովը , որուն մէջ պիտի վըճ-  
ուուի մեր ազգին ճակատագիրը : Ամենուն ծանօթ է  
Վզրուկի հրովարտակին պարունակութիւնը . կը մնայ  
հիմայ սրատրաստել պատասխանը , Հայոց Աշխարհիս  
եկեղեցական ու աշխարհական պետերուն ու իշխան-  
ներուն համահաճ հաւանութեամբը . արդ , խօսեցէ՛ք ,  
ի՞նչպէս արժան է պատասխանել :

**ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿ .** — Ս . Հայրապե՛տ , վզրուկին  
հրովարտակը ծայրէ ծայր անարգա՛նք մըն է մեր  
կրօնքին ու հաւատքին դէմ , շիտակը՝ չա՛րժեր պա-  
տասխանել :

**ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ .** — Մոլեռանդ գրուածք մըն  
է . . . :

**ՔՈՐԵՊԻՍԿՆԵՐԸ .** — Զրադաշտի փուճ դենին  
ջատագովա՛նքը :

**ՎՍԱՍԿ .** — Անարգանք , մոլեռանդ գրուածք ,  
ջատագովութիւն , բառե՛ր են բառե՛ր , որոնց համար

ժամաւաճառ չըլլա՛նք, հիմա խնդիրը պատասխանին վրայ է, գրաւո՞ր թէ անձամբ, ա՛ս պէտք է որոշել:

**ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂ.** — Սիւնեաց իշխանին իրաւունք կու տամ, խնդիրը պատասխանին վրայ է, բայց, ըստ իս, անձամբ երթալ պատասխանել՝ վտանգաւո՞ր է, գրաւոր պատասխան մը զրկել՝ լաւագո՞յն է:

**ԱՄԷՆՔԸ.** — Գրաւո՞ր պատասխան, գրաւո՞ր:

**ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂ.** — Լա՛ւ, միայն, քիչ մըն ալ սպասե՛նք, մինչեւ որ հասնին Ղևոնդ երէցը, Վարդան Մամիկոնեանը, որոնցմէ երկուքի՛ն ալ կարծիքը պէտք է առնել. անոնք աւելի՛ լաւ ուսումնասիրած են հայրենիքին վիճակը, ժողովրդականութի՛ւն ալ շատ ունին, ի՞նչ կ'ըսէք, չըսպասե՛նք իրենց:

**ՎԱՍԱՅ.** — Արդեօք անդեկութիւն չունին. չէին հրաւիրուած, ինչո՞ւ ուշացան:

**ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂ.** — Չը հրաւիրել կ'ըլլա՞ր, հիմա կը հասնին: Սպարապետ Մամիկոնեանին պատասխանը ստացած եմ, պիտի գայ, ներկայ պիտի գտնուի ժողովին, նոյնպէս Ղևոնդ երէցը. թերևս արդէն արքունիքը մտա՛ծ են. (որ-էն որ-չայն, Ներսէս Վարդան — Ղևոնդ, Կաթողիկոսին աջ կ'աւան են, շորջանի բարեւոյճ կը նստին). Սպարապետ քաջ, ժողովին նպատակը ծանօթ է կարծեմ, յարմար դատեցինք որ պարտ ու պատշաճ պատասխան մը տրուի վզրուկին, ի՞նչ է ձեր կարծիքը:

**ՎԱՐԳԱՆ.** — Իմ կարծիքս՝ պատուել հրովարտակը, հաղորդել իրողութիւնը՝ Տիղբոն, ի՞նչ հարկ դիւանագիտական փափկանկատումներու և ծաղրելի ձեւաբանութիւններու:

**ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂ.** — Դուք ի՞նչ կը խորհիք, Ղևոնդ երէ՛ց:



**ՂԵՒՈՆԳ** — Ես, Ս. Հայրապետ, Սպարապետին համամիտ եմ, ի՛նքը գիտէ աշխարհիս իրական զօրութիւնը, ի՛նքը միայն կրնայ խօսիլ հեղինակութեամբ, (Յայնչ Բարձր-ցնեւով, Խճոռարէմ, ուրի կա՛մքնա՞ծ) Տիղբոն իշխող Յազկերտը՝ չի կրնար իշխել հոս, բռնադատել մեր հողիները, իշխել մեր սրտերուն, որոնց միա՛կ իշխողն է մեր Տէր Փրկիչը, այս՛, թագաւորաց թագաւոր կ'ըսուի, կայսր մըն է ամենազօր, տիեզերքը գողացս՛ւց, բայց իրաւունք չունի բռնաբարելու մեր խի՛ղճը. այս աշխարհիս տէրն է, բայց ո՛չ երբէք հանդերձեալինը. . . թո՛ղ տեղը ծանր նստի . . . :

**Վ.Ա.ՍԱ.Կ** (Հե՛գնո՞ք) — Գիտենք, երէ՛ց, քաջ, պերճախօս քարոզիչ էք. բայց, կ'ազաչենք, քարոզները չե՛ն որ պիտի ճամբու բերեն Միհրներսէհ Վզրուկը, ձեր այդ խօսքերը՝ խորաններէ լսուելիք պատգամներ են. իսկ մենէ պահանջուածը՝ պատասխան մըն է, ընդունող կամ . . . :

**ՅՈՎ.ՍԷՓ ԿԱԹՈՂ.** — Ի՞նչ, Սիւնեաց իշխա՛ն, պատասխանը դեռ որոջ չէ՞, չպիտի՞ մերժենք Վըզրուկի հրովարտակը :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Ես ի՞նչ ըսի, կա՛մ պիտի մերժենք, կա՛մ պիտի ընդունինք, ես բա՛ն մը չեմ գիտեր, ժողովին կա՛մքն է, ես պիտի համակերպիմ իր սրտչու՛մին :

**ՅՈՎ.ՍԷՓ ԿԱԹՈՂ.** — Ձեմ կարծեր թէ ժողովին մէջ գտնուին այնպիսիներ որ դեռ տարակուսին տըրուելիք պատասխանին իմաստին վրայ :

**Վ.Ա.ՐԴԱՆ** — Ես ըսի, պատասխանը՝ պատուել է հրովարտակը, այլապէս չե՛նք կրնար արտայայտել ժողովուրդին սրամտութիւնը :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Սակայն, աւելի լաւ չէ՞ նախատեսել  
ամեն բանի վախճանը :

**ՅՈՎ.ՍԷՓ** — Սիրելիներ՛ր, պարապ բան է Յազ-  
կերտէ շնորհ սպասել, ան միտքը դրած է ջնջել քրիս-  
տոնէութիւնը, բովանդակ մարդկութիւնը ձուլել, հա-  
յութիւնը վերցնել աշխարհիս երեսէն: Արդ, թո-  
ղո՞ւնք որ գործադրէ իր գազանային ծրագիրը. փա-  
կե՞նք եկեղեցիները, Տիգրոն դրկե՞նք բանալիները:

**ՂՆԻՈՆԴ** — Քահանայ, վարդապետ, եպիսկո-  
պոս, դնենք սրածայր գդակը, քուրմերուն փաթ-  
թոցը կապե՞նք գլուխնիս. ի՞նչ կ'ըսէք, վասա՛կ  
իշխան:

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Ես բան մը չեմ գիտեր. միայն թէ  
չուտ դրկենք պատասխանը կամ անձամբ տանինք:

**ՅՈՎ.ՍԷՓ ԿՍԹՈՂ.** — Զարմանալի բան. միևնոյն  
առաջարկը կը բերէք դարձեալ. չէ՞ որ անձամբ եր-  
թալը վտանգաւոր է ըսուեցաւ:

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Շա՛տ աղէկ, գրաւոր թո՛ղ ըլլայ:

**Վ.Ս.ԲԴԱՆ** — Ս. Հայրապետ, կը խնդրեմ, թող  
տուէ՛ք ինձի համառօտ մը պարզել աշխարհիս ներ-  
կայ վիճակը և ծանուցանել հրովարտակին ներքեւ  
պահուած գազանիքը, այն ատեն՝ յամառողը թո՛ղ  
յամառի, տակաւին գո՛ւթ սպասէ Յազկերտի պէս  
բռնաւորէ մը:

**ՅՈՎ.ՍԷՓ ԿՍԹՈՂ.** — Խօսքը՝ Մամիկոնեան սպա-  
րապետին է. խօսեցէ՛ք, խօսեցէ՛ք, Մամիկոնեա՛ն  
նախարար:

**Վ.Ս.ԲԴԱՆ** — Հա՛րք իմ և տեա՛րք. գիտէ՞ք ին-  
չո՞ւ համար մեր երկիրը դրկուած է Գենչապուհ մարդ-  
պանը, Յազկերտի հաւատարիմ հարկահաւաքը. չէ՞ որ  
մարդահամարը պատրաստելու և ժողովուրդին տուր-

քերը թեթեւցնելու պաշտօն ունիմ կ'ըսէ . շա'տ լաւ , դուք ասոր կը հաւատամք . ես կրնամ ապացուցանել թէ՛ Դենչապուհի պաշտօնը բոլորովին տարբեր բնու- թիւն մը ունի , որովհետեւ

1. Մարդահամարի պատրուակին տակ՝ Եկեղեցիին ազատութիւնը բռնաբարեց ,

2. Վանքերու մենակեցիկ ճգնաւորներն ալ ան- ցուց մարդահամարին մէջ ,

3. Աւելի՛ ծանրացուց աշխարհիս հարկը ,

4. Ի՛նք էր որ պառակտումի որոմ ցանեց նախա- րարներուն միջեւ և ամէն տուն :

5. Որ վատագո՛յնն է , քրիտոնեաները հայրա- բար կառավարող հայ հազարապետը զրպարտութիւն- ներով պաշտօնանկ ընել տուաւ ու տեղը կարգել տուաւ Պարսիկ մը , հետը մոզպետ դատաւո՛ր մըն ալ , որպէս զի մեր եկեղեցին վարկաբեկեն :

Այո՛ , այս բոլոր չարիքներուն ազբիւրը՝ Դենչա- պուհ եղաւ , ու երբ տեսաւ որ իր բոլոր մեքենա- յութիւնները դերեւ ելան , Հայաստան աշխարհս ամ- բաստանեց Պարսից Դուռը , ասկէ՛ այն հրովարտակը սրուն ոճը ցոյց կուտայ արգէն թէ՛ ի՛նչ սեւ , ի՛նչ աղտոտ հոգիէ բխած է ան . քուրմերուն ու քրմա- պետներուն դրդումով ու իրենց գիււական դենին ներչնչումովը գրուած է . ուրեմն դեռ ի՛նչ կը սպա- սէք , հա՛րք իմ և տեսարք . չը պատասխանէ՞ք :

**ՂՆԻՈՆԻ ՆՐԷՅ** — Ընդունի՞նք մազդէութիւնը , հրաժարի՞նք մեր սուրբ հաւատքէն , պաշտե՞նք կրակը , մեր մատղաշ սերունդը քուրմերո՞ւն յանձ- նենք . ամուսնական սուրբ անկողինը պղծե՞նք բազ- մակնութեամբ . եղբայրը քրո՞ջ հետ կարգուի . չը վա- ուե՞նք ծիւղերն ու քակորները , ձեռքերնիս գումիզո՞վ

լուանք. Եկեղեցւոյ եօթն Ս. Խորհուրդները փոխա-  
նակե՞նք արեւապաշտու թեան ծաղրելի ծէսերուն հետ  
... , Խօսեցէք, Սիւնեաց իշխա՛ն, դս՛ւք խօսեցէ՛ք  
ու մենք մտիկ ընե՛նք :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Ես հակառակը չեմ պնդեր, միայն՝  
կը յիշեցնեմ որ նախ խորհինք, ապա գործենք. շատ  
փափուկ խնդիր մըն է, երկրին կեանքին ու մահ-  
ուա՞ն խնդիրը :

**ՅՈՒՍԷՓ ԿԱԹՈՂ.** — Այո՛, այո՛, լա՛ւ է խոհեմ  
չարժի՛լ :

**ԵՊԻՍԿՈՊՈՍՅԵՐ. ԲՈՐԵՊԻՍԿՈՊՈՍՅԵՐ** — Խոհե-  
մութիւնը՝ բացարձակ մերժե՛լմն է, պարտ ու պատ-  
շաճ հերքո՛ւմ մը դրկել :

**ՅՈՒՍԷՓ ԿԱԹՈՂ.** Ահա՛ քուէի կը գնեմ : (Բե-  
րկ-նե-ն գործ-ըն-նի-ւը կը կոր-ր-ի . մե-ն-ի ճը կը ու-  
րե-ր-ց-է -- ք-ր ճը, +--ե-ն-երը կը հ--ա-տ-է , յե-ր-ս , --ք-րը կը  
ք-եր-է կը յ-ն-ն-է կ-ն-դ-ի-ն-ն : Ս-ք-րը կ'ա՛ +--ե-ր-ա-տ-է կը  
ք-ց-ի , +--ե-հ-մ-րը կ'ը-լ-ւ-ս) Մերժողական պատասխան :  
(Այո՛ միջ-ցին վ-ս-ն-ի Սի-ն-ին , խ-ժ-ո-ս խ-ժ-ո-ս նայելով շ-ր-ջը,  
րե-ղ-ն-ն կ'ե-լ-է . ն-խ-ար-ար-ն-եր , ե-ղ-ի-կ-ա-յ-ո-ս-ն-եր -- +--ր-ե-ղ-ի-կ-ա-յ-ո-ս-  
ն-եր , խ-ս-ժ-ք խ-ս-ժ-ք , կը ս-կ-ի-ն եր-ա-ր-ո-ս հե-ր խ-ո-ս-կ-ց-ի-ւ . Ժ-շ-ի-ւ  
խ-որ-հ-ր-դ-ո-ւ-ր եր-ե-ո-յ-ն ճը կը ս-ր-ա-ն-ս) : Ուրեմն , եղբարք  
իմ և որդեակք , որոշուեցաւ , պատասխան մը պիտի  
գրուի մերժողական , պիտի պաշտպանուի մեր կրօն-  
քին սրբութիւնը , ճշմարտութիւնը . պիտի յայանենք  
մեր Ս . Հաւատքին մէջ անխախտ մնալու մեր վերջին  
անփոփոխ տրամագրութիւնը , այնպէս չէ՞ :

**Ս.ՄԵՆՔԸ** — Այո՛, այո՛, այնպէ՛ս է , այնպէ՛ս :

**Վ.Ս.ՍԱ.Կ** (Մրաժկոք) — Ինչո՞ւ չէ, այնպէս թող ըլլայ :

**ՂԵՒՈՆՅԻ** — Ս . Հայրապետ , վերջաբանը պէտք  
է խնամով ըլլայ :

**ՂԵՒՈՆԳ** — Եթէ յարմար է, մեր Ս. Հաւատքին ճշմարտութիւնը ջատագովելէ ետքը՝ թո՛ղ աւելցուի. « Այս հաւատքէս մէ՛կը չի կրնար խախտել մեզ. ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ հուրը, ո՛չ սուրը, ո՛չ ջուրը, ո՛չ ալ դառն ու սոսկալի տանջանքները: Մեր ինչքը ձեռքդ է, ըրէ՛ ուզածդ, եթէ զմեզ այս հաւատքով թողուս՝ այս երկրի մէջ քե՛նէ՛ զատ ուրիշ տէր չե՛նք ճանչնար ու երկնքի մէջ ալ՝ մեր Յիսուսի Քրիստոսի հետ՝ ուրիշ Աստուած չե՛նք փոխեր, քանի որ ուրիշ Աստուած չիկա՛յ. իսկ եթէ տակաւին յամառիս, ահաւասիկ մե՛նք, չուտ ըրէ՛ ինչ որ կ'ուզես: **Վ.Ա.ՍԱ.Կ** — Հերիք չեղա՞ւ, դեռ կա՞յ:

**ՂԵՒՈՆԳ** (Ն-ի Բ-ի-Վ կը շարձուի) — Քե՛նէ տանջանք, մե՛նէ յանձնառութիւն, քու սուրդ՝ ու մեր վիզերը. ի՞նչ, մե՛նք աւելի լա՞ւ ենք քան մեր նախորդները, որոնք իրենց կեանքը զսեպին այս հաւատքին վկայութեան համար: Եթէ մե՛նք անմահ իսկ ըլլայինք, կ'արժէր մեռնիլ Քրիստոսի սիրոյն համար. ինքը չէ՞ր որ զմեզ մահէ փրկելու համար՝ ինքը մեռաւ, ինքը՝ որ անմահ էր: Ա՛լ դուն, ո՛վ արքայ, մի՛ հարցուփորձ ընէր, մեր ուխտը՝ մարդու հետ չէ որ խաբուած ըլլանք, Աստուծոյ հե՛տ է, անքակտելի, անջնջելի ս՛լխտ մըն է, պիտի տուէ հիմայ, յետոյ, յաւիտեան...:

**Ա.ՄԵՆՔԸ** — Ուրիշ պատասխան չուզեր, ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

**ՅՈՎ.ՍԷՓ ԿԱԹՈՂ.** (Որ-ի կ'ելէ, Բ-ը Ժ-ը-Վ-ի-ն-ները նոյն կ'ընէ) Ո՛ւխտենք, սիրելի՛ք իմ, ուխտե՛նք մեր կեանքով ու մեր մահով հաստատ մնալ մեր այս որոշման վրայ:

**ԱՄԷՆՔԸ** — կ'ուխտենք ու կ'երգնունք հաւատարմութիւնս :

**ՂԵՒՈՆԻ** (Խաչ քեր Բարձր-Գործ) Անկցի՛ Որմիզդը, խաւարի՛ Միհր արեւը :

**ՎԱՐԳԱՆ** — կեցցէ՛ պատերազմը, կեցցէ՛ Ս. պատերազմը :

**ԱՄՆՔԸ** — կեցցէ՛ մեր հաւատքը (Վր-Քրդի կամայ կամայ կ'իջնէ, Ֆիլիստիմոն ժողովանները կը շրջապատեն կաթիլիսը) :

**ՅՈՒՍԷՓ ԿԱԹՈՂ.** (Բողոքարար՝ լեւոր քեր երկն + Բարձր-Գործ) Տէ՛ր, փրկէ՛ Հայաստանը :

(Վր-Քրդի կ'իջնէ)



## Ա Ր Ա Ր Բ .

[Տիզբոնի մէջ պարսկական արձանիքը]

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

**ՅԱԶԿՆԵՐՏ** (Արշալոյսէն առաջ արձնացած, Գահոյսին պարսկական զրոյ կեցած կը ձեռնիօսէ) : Մի'հր-Արեգակ, տիեզերքի՝ արարիչ, կենդանութեան բաշխս'ղ, անշէ'ջ վառարան, ծագէ', շուտով ծագէ' . անա' կը վախճին հալածական սգիները, որոնք երեւակայութիւնս չարչարեցին ամբողջ գիշերը . . . : Թագաւոր եմ, Թագաւորներո՛ւն Թագաւորը : Կովկասի ձիւնապատ լանջքէն մինչեւ Հիւրմիւզի նեղուցը . Թիպէթի կըռնակէն մինչեւ Բիւզանդիոնի ո՛տքը, մէ'կ անուն միայն կ'արտասանուի . Յազկէրտ, արքայից արքայ, Արեայ և Սնարեայ : Ասիոյ ճոխագոյն արքունիքը, գանձերովն ու զարդերովը, ի՛մս է ան : Լփնաց, Վրաց, Աղձնեաց, Աղուանից, Հոռոմոց, Կորդուաց, Գլթաց ու Ծաւգէից աշխարհներուն, — ամենքը Նազովրեցիին երկրպագուները —, թէեւ կամակատար ստրուկներս, տարազով ու լեզուով, բարքով ու վարքով իրարմէ տարբեր, այսքան այլազան բնակչութիւններէ հատընտիր հաւաքածոյ մը, այրուծի ու հետեւակ գնդերով ահագին բանակներ . որո՞ւ կրնան ըլլալ այս ամենը, եթէ ո՛չ ի՛մս, ի՛մս, տիեզերակալ Յազկերտիս . . . : Արեւմտեան Կայսրութիւնը կը դողայ, կը սառի անունէս . հիւսիս ու հարաւ, արեւելք ու արեւմուտք, իմ ադամանդէ գաւազանիս ներքեւ կը հեծեն . . . : Բայց ես հոս, Տիզբոնի ար-

քունիքը, կարգ մը գուշակներու, աստղարաշխ  
քուրմերու գործիքը, խաղալիքը դարձեր եմ... : Է  
ցնորքներու աշխարհ, ի՞նչ է թագաւոր մը. — լար-  
ուած աղէ՞ղ մը, լարողին ձեռքին մէջ կը թրթռայ... :  
Այսքան տարիներ շարունակ կուուեցայ, դեռ կը  
կուուիմ, ու պիտի կուուիմ, դարձեա՛լ պիտի կուուիմ,  
մինչեւ որ բովանդակ աշխարհը զիս իր բացարձակ  
տէրը ճանչնայ, ու չպիտի դադրիմ կուուելէ՝ մինչեւ  
որ աչքերս՝ վստեանեմ հսկայ Բիւզանդիոնի պարիսպ-  
ներուն կարծանումը՝ պարսկական բանակներէն, ի՛մ  
ոտքերուս ներքեւ : Բայց այդ ամե՞ներ, ինչո՞ւ, խեղճ  
Յազկերտ, այս ամե՞ներ, ի՞նչ երեսով խոստովանիմ,  
Դենպետի մը քմայքի՛ն համար. Յազկերտ պիտի  
յաղթէ, պիտի յաղթէ, ինչո՞ւ, որպէս զի դենպետը,  
Ջրագաշտի փոխանորդը, երաշխաւորէ իր յաւիտե-  
նական իշխանութիւնը, խնամակալութիւնը՝ արքա-  
յից արքայից արքային, Յազկերտի՛ վրայ... : Երկրի  
վրայ ատրուչան ու արքունիք, երկնքի մէջ՝ Որմիզդ  
ու Արհմն, Բարին ու Չարը. ինչո՞ւ նոյնը չըլլայ իմ  
տիրապետած երկիրներու մէջ ալ կ'ըսեն... : Ի՞նչ,  
ի՞նչ կը նշանակէ տիրել. ո՛չ, ո՛չ, տիրել՝ բա՛ն մը  
չի նշանակեր. տիրել կայ՝ հողին, տիրել չի կա՛յ հո-  
գիններուն. ա՛խ, ճիշդ ա՛յս է Հայոց պարագան : —  
Այս ա՛ղգը, զարհուրելի՛ զանգուած, ծերացուց զիս.  
աս ի՞նչ յամառութիւն է : Ո՛չ հրեշտակները, ո՛չ  
մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ մէկը  
խախտել կրնայ իրենց հաւատքէն : (Յ-ն-կ-ւ-թ շ-յ-ր-ց-թ)  
Բայց ինչո՞ւ հալածել այսպիսի տոկուն ու արի ժո-  
ղովուրդ մը : Այս Գահիս վրայ բազմողներէն մէկը  
չէ՞ր արդէն որ այս աղգին շնորհեց փառաւոր հա-  
րատութիւն մը, Արշակունեաց թագաւորութիւնը,



սակայն , աւանդ , նոյն այս Գահին վրայ ուրիշ բազմոյ մը , իմ փառապանծ նախորդս չէ՞ր որ դեռ նոր երէկ խլեց այս ազգէն իր անկախութիւնը . . . , նուաճե՛լ ուզեց այս աննուաճելի ցեղը , կործանեց թագաւորութիւնը , պարզ մարզպանութեան մը վերածեց այդ երկիրը — Արամի , Արտաշէսի , Տիգրանի , Խոսրովի ու Տրդատի հայրենիքը . . . : Ու ես , Յազկերտ , նախորդներէս ա՛լ աւելի մեծ ու տարբեր գործ մը կատարած ըլլալու խենդութենէն բռնուած , դենպետէն թելադրուած , կը փորձեմ յափշտակել այն ազնիւ ազգին առաջին ու վերջին հարստութիւնը , անկապտելի՛ն , խղճի ազատութիւնը : Դենպետը կ'ուզէ որ Հայե՛րն ալ Արեւը պաշտեն , հետեւաբար , ե՛ս ալ պէտք է որ ուզեմ իր ուզածը . եթէ ո՛չ , իշխանութիւնս խախտ՛ւտ է , խախտ՛ւտ . . . : Գահիս ներքեւ անդո՛ւնդ մը կայ , խորո՛ւնկ , անյատակ անդունդ մը . մէջը նետուելու սահմանուած զո՛հ մը կայ . ե՛ս , ե՛ս եմ այն զոհը . ե՛ս Յազկերտ , եթէ յանդգնիմ ընդվզել , հետեւ Մենպետիս հրամանին դէմ , որ պատգամ է սրմզգական . . . : (Լոյ՛ն-+այլ կը ճե՛մէ) Ափսո՛ս , ափսո՛ս քեզի , արտաքին վիթխարի վտանգները ծաղրո՛ղ Յազկերտ , բա՛ն մը չես արժեր . ոչի՛նչ մըն ես դուն , ոչինչ մը . ահա՛ ուժիդ սահմանը . կրօնքի ամբարտա՛կը կանգնած է քու բոլոր քաղաքական սաւառնումներուդ դէմ . . . : (Տրտո՛ւմ , գրտո՛ւմ , յոսո՛ւհ-հարե՛ն) Թեւերս կոտրա՛ծ են , չպիտի կրնամ առաջ տանիլ արչաւա՛նքս . . . : (ոգե՛-որո՛ւս) Բայց ինչո՞ւ չկրնամ ընել ինչ որ կուզեմ . ինչո՞ւ կաշկանդ , կապկապուած մնամ կեղծաւոր քուրմերու , մոզերու և ստոնց վարդապետին , դենպետի՛ն ձեռքը . . . : Աւելի լաւ չէ՞ Հայերուն կրօնքը պահպանել , իրենց հաւա-

տարմուծիւնը չը կորսնցնելու համար . ի՞նչ . քուրմերուն եկամուտները պիտի բազմապատկուին , վեհանձն սղգի մը կողոպուտովը . պիտի պարարտանան , պիտի գլնուվան անոնք , բիւրաւոր անմեղներուն արեան գնովը . . . : (Ռժոճոյ ճան կոճոյ դահլիճին ՌՅ) : Բայց ի՞նչ յանցանք ունին Հայերը . հարկերը կը վճարեն անխափան . զօրք կուտան , զահիս , թագիս , փառքի՛ս համար կը պատերազմին , ա՛լ ի՞նչ կ'ուզէք . թողէ՛ք , ազատ թողէ՛ք զիրենք . թող պաշտեն իրենց նախահայրերուն պաշտածը . թո՛ղ ապրին իրենց սիրած կեանքը . բացառութի՛ւն մը թող կազմէ Հայաստանը , ի՞նչ կ'ըլլայ , իմ լայնածաւալ պետութեանս մէջ . և արդէն այդ հրաշագեղ երկիրը բացառիկ դիրք մը չունի՞ ռազմագիտական տեսակէտով . Հայաստանը չէ՞ Բիւզանդական կայսրութեան բանալին , կովկասի կիրճերուն պահապանը , իմ տէրութեանս ամենամօտ հարեւանը , հետեւաբար և ամենավտանգաւորը , եթէ շահագործել չը գիտնամ . . . : Ո՛չ , ո՛չ , ոճի՛ր է , ոճի՛ր , այս ազգը ձեռքէ հանելը . պէ՛տք է հի՛մայ կանչեմ վէզի՛րս , որ մօտէն կը ճանչնայ Հայաստանը . . . : (կ'երթայ դուռը կը շարնէ) թո՛ղ գայ , թո՛ղ գայ նայինք ի՞նչ խորհուրդ պիտի տայ . . . : (Բանի մը մը +ոյլ կ'առնէ կը սղոտէ դրան երէն . +իչ յետոյ դուռը կը բացուի . Ռնչդեւ Յաղիբո՛ր էր Գահին վրայ Բաղճա՛ծ է . հեռուէն , Բեռնամա՛ծ իսնալիս-Ռեմմի կը յառաջանայ վերուէն :)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

ՅԱԶԿԵՐՏ , ՄԻՀՐՆԵՐՍԷՂ

ՄԻՀՐՆԵՐՍԵՂ — Տէ՛ր արքայ , յաւիտեան ապրէ՛ :

ՅԱԶԿԵՐՏ — Եկո՛ւր , Միհրներսէ՛հ , ի՞նչ լուր բերիր , խօսէ՛ նայիմ :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Լուրերուն լուրը, Տէ՛ր արքայ, Հայաստանէն

**ՅԱԶԿԵՐՏ** — (ը֊դ֊ժ֊ւ֊) Հայաստանէն, ի՞նչ կայ որ

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Եկան հայ նախարարները, ուղղակի տարուեցան

**ՅԱԶԿԵՐՏ** — Ո՞ւր տարուեցան :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Օտարներուն բանաբար :

**ՅԱԶԿԵՐՏ** — (խ֊տ֊ա֊ն֊) շիտակ է, շիտակ

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Դեռայետին հրամանով :

**ՅԱԶԿԵՐՏ** — Անչո՞ւշտ, բայց (ը֊ջ֊տ֊ն֊), մօտեցի՛ր ըսեմ, աւելի մօտեցի՛ր :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — (ա֊ւ֊ւ֊, ի֊ն֊ն֊) Տէ՛ր, Ձեր Արեգակնափայլ Մեծութիւնը շատ յուզուած կը գտնեմ, ի՞նչ տխուր բան կրնայ մթապնել Ձեր արքայական արփիածածանչ ճակատը . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ոչինչ. այս գիշեր քո՛ւնս փախաւ քիչ մը :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Արքայից արքային արեւները շատ թո՛ղ նորին վեհափառութիւնը ներէ որ յիշեցընեմ թէ՛ Հայոց նախարարները . . .

**ՅԱԶԿԵՐՏ** — (ը֊դ֊ն֊տ֊ւ֊) Այո՛, կը յիշեմ, բայց այս գիշեր :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Երկինք, ի՞նչ կը լսեմ, ինչո՞ւ այս գէմքը գունաթափ. ինչո՞ւ այս աչքերը մահանշոյլ. չարագուշակ նախազգացումներէ՛ կը տանջուի միտքս :

**ՅԱԶԿԵՐՏ** — Մի՛ վրդովիր, սիրելի՛ վէճերս, մի՛ տագնապիր, այս գիշեր երան՞գ մը տեսայ :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Բարեբաստիկ երան՞գ, կենդանի արեւով :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ի՞նչ արեւ. չար երան՞գ մը . . .

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Տէր արքայ . . .

**ՅԱԶԿԵՐՏ** — (Յանրիսի) Պալատիս արեւմտեան դրան առջեւ կեցած, կը դիտէի արքունական դրախտիս գեղեցկութիւնը. մօտերը, քանի մը քայլ անդին, տապարի ձայն մը զարկաւ ականջիս. մահասարսո՛ւռ ու պա՛ղ ձայն. տեսայ . . .

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Միհր-Արեւ, բարի՛ն ըլլայ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Շատրուանիս եզերքին հսկայ կաղնին, որ կը հեծէր տապարին ընդհատ հարուածներուն ներքեւ. կաղնիին շուրջը թափօր բռնած՝ կը կաքաւէին պալատիս քուրմէ՛րը. սրբազան կրակը կաղնիին ոտքը կը մխար, մինչդեռ տապարը կ'իջնէր դանդաղ, ու ամեն իջնելուն՝ կաղնին, ջլածգային պըրկումներով, տապալու մի նշաններ ցոյց կուտար :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Մե՛ծդ Որմիզդ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ինկա՛ւ կաղնին վերջապէս, ծածկեց շատրուանին ջուրը, որ խկոյն արի՛ւն դարձաւ. տապարին գլուխը թաղուեցաւ բունին մէջ, իսկ կոթը՝ ձեռքը մնաց Դենպետիս, որ ապուշ ապուշ կը նայէր մերթ կրակին, որ կը մխար, մերթ ջուրին՝ որ կ'եռար. թափօրը կը դառնար. մուխը բռնեց ամբո՛ղջ պալատին հրապարակը . . . :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Ո՛վ Միհր ամենազօր, լուսաւորէ՛ խաւարը :

**ՅԱԶԿԵՐՏ** — Աչքերս խոցուեցան մուխէն. խեղդուիլս բա՛ն մը չէր. հեռաւոր, եզերական ձայն մը կը հասնէր ու կը նուազէր ականջիս մէջ. «Ինկա՛ւ Տիզրոն, ինկա՛ւ Տիզրոն. մարեցա՛ւ Արեաց արեւը» :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Քա՛ւ լիցի, Տէր արքայ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ու ես, քրտինքի հեղեղի մը մէջ, արթնցայ. դեռ կարծես թէ նո՛յն դամբանային ձայնն է որ ականջիս կուգայ ու կը սառեցնէ ըզեզս :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Երեւակայութեան ունայն խաղեր, Տէ՛ր արքայ. յաւիտենակա՛ն է տիեզերակալ Յազկերտի տէրութիւնը :

**ՅԱԶԿԵՐՏ** — Բայց տապա՞րը. բայց դենպէ՛տը. բայց քուրմերուն թափո՞րը. մո՞ւխը, արիւն-ջո՞ւրը :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Ի՞նչ մեկնութիւն կը հաճի տալ, Տէ՛ր արքայ, Ձեր Մեծափառութիւնը :

**ՅԱԶԿԵՐՏ** — Մեկնութի՛ւն. . . դենպետին գո՛րծն է :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Կանչե՛նք, Տէ՛ր Արքայ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Տեղը՛ մնայ, տեղը՛ :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Սակայն ի՞նչ կը խորհի արդեօք արքայից արքան՝ ձերբակալուած ու հոս բերուած Հայոց նախարարներուն վրայ. ի՞նչ պէտք է ընել :

**ՅԱԶԿԵՐՏ** — Առանց դենպետին բա՛ն մը չենք կրնար ընել. ա՛ն բերել տուաւ, ա՛ն հիմա թող որոշէ ի՞նչ ընել պէտք է :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Տէ՛ր արքայ, իմ ամենախոնարհ կարծիքովս, պարա՛պ բան է այդ նախարարները հոս վար դնել, պահել. անդին ամբողջ երկիր մը, Հայաստանը, իր բերրի նահանգներով ու դրախտանման պարտէզներով, անխշխանութեան մատնուած, անապատի մը կը փոխուի. հարկերը ա՛լ չեն վճարուիր, որովհետեւ աշխատող ձեռքե՛րը կը պակսին. զօրք չե՛ն տար, որովհետեւ այս ընթացքով փախըստական աւազակներու որջերը կը շատցնենք. մենք, մե՛նք ենք տուժողը. իսկ Հայ ժողովուրդը մինչեւ իր վերջին շունչը յամառ, կառչած պիտի մնայ իր պաշտած Նազովրեցի Հրեային, որուն սիրոյն համար հիմակուրնէ լեռ ձոր ու անտառներն ինկած են ազնըւական ընտանիքներ, տիկիւններն ալ, օրիորդներն ալ

**ՅԱԶԿԵՐՏ** — Ի՞նչ գիտես. այդ իրողութիւններով չե՞ն մեկնուիր տապարին հարուածները: Ես այնպէս կը հաւատամ թէ՛ անսասան տէրութեանս կործանումը՝ Հայաստանի տպստամբութեան հետեւանքը պիտի ըլլայ:

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Նոր բան չէ՛ (էլ-էլ կ'երեւոյ՛ն) տարիներ առաջ գուշակուած է արդէն. մեր հիմերը քանդողը՝ մեր բռնած քաղաքականութիւնն է, մասնաւորապէս Հայոց նկատմամբ:

**ՅԱԶԿԵՐՏ** — Ո՞ր քաղաքականութիւնը:

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Կրօնային հարածա՛նքը:

**ՅԱԶԿԵՐՏ** — Դենպետի՛ն ըսէ՛, դենպետի՛ն:

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Ո՛վ է դենպետը, եթէ չի վայելէ բարձր հովանաւորութիւնը Տիեզերքի տիրապետ Յազկերտին, Արքայից Արքային. հո՛ղ է ան ու մոխիր:

**ՅԱԶԿԵՐՏ** — Սակայն այդ մոխիրը կուրցուցեր է մեր աչքերը. չե՛նք տեսներ իսկը, արդարը, լո՛յսը. խաւարներու մէջ կը խարխափինք յաճախ:

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Մի՛ խռովիք, Տէ՛ր Արքայ, դիւրին է ամեն բան, երբ որ բարեհաճի Չերդ Վեհափառութիւն:

**ՅԱԶԿԵՐՏ** (կորուսած զգացումով) — Ես կամք չունիմ, կամքերէ կախուած ի՛ր մը, գրօ՛ մըն եմ ես այսօր:

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Քա՛ւ լիցի, Տէ՛ր արքայ, ազգերը՝ ձեր ոտքին պատուանդա՛նը, Տէրութիւնները՝ դիմացդ գողացող գերիներ են. Յազկերտի թագը՝ արեգակին ճառագայթներովը յեռուած է. մականը՝ ծովերուն ու ցամաքներուն վրայ կը տարածուի. նախնքն է Յազթողը, ի՛նքն է Անյաղթելին, միակ Տիեզերակալը:

**ՅԱԶԿԵՐՏ** — Բառեր են բառեր, ի՛նչ կուզես

ըսէ՛ . ե՛ս գիտեմ իմ ի՛նչ ըլլալս , ու շատ լա՛ւ գիտեմ . թո՛ղ , Միհրնեբրսե՛հ , թո՛ղ տուր հիմայ ունայն խօսքերը . դառնա՛նք հիմայ մեր խօսքին . այդ դըժբաղդ նախարարներուն համար ի՛նչ կը խորհիս . ի՞նչ պիտի ընենք . . .

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Դենպետը կանչել տա՛նք , թո՛ղ գայ մեզի յայտնէ Աստուծոյ կա՛մքը . գործադրե՛նք այդ կամքը , որպէ՛ս զի չըլլա՛յ թէ յետինը չար ըլլայ քան տու՛ղինը :

**ՅԱԶԿԵՐՏ** — Այնպէ՛ս է , այնպէ՛ս , Դենպետը թո՛ղ գայ , տեսնե՛նք , ի՛նչ պիտի ընենք : (Միհրնեբրսեհ դուրս կ'ելլէ քեանմա՞ծ խնարհութեամբ եր եր հեռանալով) :

**ՅԱԶԿԵՐՏ** (Քնկ) — Խեղճ վզրուկ . ինծի պէս ի՛նք ալ բռնուեր է մոլեռանդութեան ակտէն . . . առանց Դենպետի չի կրնար ապրիլ , ո՛չ ալ իր կարծիքն ունի , իր սեփական կարծիքը . Դենպետը միայն գիտէ ամե՛ն բան . (Քլամադո՞ր) թշուա՛ռ կառավարութիւն , որուն սանձը կրօնի պաշտօնէի մը ձե՛ռքը յանձնուեր է . ո՛վ իմ թշուառ կառավարութիւն : Ես գահիս վրայէն . . . (Միհրնեբրսեհ ներս կը մտնէ) :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** (քեանմա՞րչ խնարհութեամբ) — Տէ՛ր արքայ , հիմա՛յ կը մտնէ . Դենպետը :

**ՅԱԶԿԵՐՏ** (երաշու՛ն) — Կ'իշխեմ ծովուն ու ցամաքին . իսկ Դենպետը :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Այո՛ , հիմա՛յ պիտի գայ :

**ՅԱԶԿԵՐՏ** (Քշտ երազո՛ւն , շարունակելով իր Քնկիօթի-նը) — Կ'իշխէ ի՛մ հոգիիս , ի՛մ խիղճիս , ի՛մ կեանքիս , ի՛մ էութեանս ու իմ գահիս . այո՛ , Դենպետը կ'իշխէ թագի՛ս ալ , տէրութեանս ալ , բովանդակ՛կ տիեզերքին :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** (նոր «խեղճ») — Ո՛չ երբէք , չեմ

կրնար ես ընդունիլ ատանկ բան մը . ես որ վէզիրն եմ Արքայից Արքային ու Նորին վեհափառութեան հաւատրիմ տրուպը . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** — Դո՛ւն կ'ըսես այդպէս . բայց ես ինքզինքս չե՞մ ճանչնար . չե՞մ գիտեր թէ ո՛վ եմ և ի՞նչ եմ :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Տէ՛ր արքայ, (նայելով դեպի դուրս) ահա՛ կուգայ, ահա՛ կուգայ (Դեռ պէտք ցոյց տալով) :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆԱԽՈՐԴՆԵՐԸ, ԳԵՆՊԵՏԸ

**ԳԵՆՊԵՏ** (դռնէն ներս կը հանէ, գլխիւն խնամբար թաղարարած առաջանալով, սրածայր քուրիով, դեղին հագաւորով, կ'ընկնէ) — Արքայ՛դ արքայից, սիրեցեա՛լդ Աստուծոյ, ապրէ՛ յաւիտեան :

**ՅԱԶԿԵՐՏ** (հրեհրեհով) ի՞նչ ալ սիրեցեալ, (Քորձը յայնով) — Եւ դուն, ո՛վ իմ տէրութեանս վահանը, ո՛ղջ ըլլաս, ի՞նչ լուր :

**ԳԵՆՊԵՏԸ** (հանդիմանալով ու խորհրդաւոր) — Այսօր Արեւելքը կը խայտա՛յ . Հիւսիսի վայրենիները դարձի եկան . անմահ Արեգակը յաւիտենական տաճարին գմբեթէն կը ժպտի, իր կենսատու ճառագայթները կը սփռէ տիղերքին խաւարակուռ անկիւնները՝, կեանք, ուրախութի՛ւն, յո՛յս, երջանկութի՛ւն ու դիւցազնութի՛ւն կը բաշխէ իր երկրպագուներուն . . . : Ահա՛ լասիկ Արեւմուտքէն գունդագունդ կը դիմեն Արքայից Արքային ոտքը, Տիգրո՛ն կը խռնին հեթանոս իշխանները . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ո՞ր իշխանները կ'ըսես :



**ԴՆՆՊՆՏ** (արհամարհուս ժողովուրդ ճշ) — Սա մեզի քրիստոնէութիւն քարոզող Հայոց իշխանները .

**ՅԱԶԿԵՐՏ** (լրջօրէն) — Կարծեմ թէ նախապէս մե՛ր կողմէն եղաւ ատանկ փորձ մը . մե՛նք իրենց մեր կրօնքը քարոզեցինք : Միհրներսեհին նամակին պատասխանը դրկած էին , ուրիշ ո՛չինչ :

**ԴՆՆՊՆՏ** — Բայց այդ պատասխանը կը վայելէ՞ր Տէ՛ր Արքայ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Իրենց հաւատքը կը քարոզէին :

**ԴՆՆՊՆՏ** — Եւ արքայից Արքային բարձրագոյն հաճութիւնը կ'արհամարհէին :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ի՛նչպէս . . . :

**ԴՆՆՊՆՏ** — (Բազկարած , արհամարհեմք եւ երարեւել) — Կեցցե՛ս յաւիտեան , Արքայ՛յ , չը բարկանա՛ն ատուածները , իրենց անմահ փառքը սեցընելու յանդգնող ափ մը Հայերը՝ պէ՛տք է որ պատժուին :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Ձը պատժուեցա՞ն . դեռ ի՞նչ պիտի ընէինք , Հայր Դինպետ , կալանաւոր՝ հոս բերուեցան . սովորական պատիւներով չընդունուելէ զատ՝ անսովոր նախատինքներով անարգուեցան . ալ ի՞նչ ընէինք :

**ԴՆՆՊՆՏ** (շարունակելով մեռնոյն արհամարհեմք , մեռաւարհեան բոցով) — Անշէջ կրակը՛ , որ կը վառի Մայր-Ատրու շանին մէջ , Արեւը՝ որ կը շողշողայ կապոյտ խորանէն , Որմիզդ՝ բարութեանց Հայրը , մեր Ս . Դինը , մեր դարաւոր աւանդութիւնները . ասոնք ամենքը ծաղրե՛լ ու դեռ լո՛յսը վայելել Միհր-Արեւին , Տէ՛ր Արքայ , չը զայրանա՛ն արդար ատուածները (Էբբե Դուրբ Բանած) . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** (Ներսէս) — Լա՛ւ , լա՛ւ , ի՞նչ ընենք որ չը զայրանան , ըսէ՛ որ կատարենք :

**ԳՆՆՊԵՏ** բողոքած) — Այս է դից կամքը. ի ներկայութեան Մեծիդ Վերափառութեան բերել կեցընել այն ապստամբները. նախ խոստումներով ողորքել. յետոյ, եթէ հետտեն, տանջանքներ սպառնալ, մինչեւ որ հրաժարին իրենց ծաղրելի աղանդէն ու դառնան ի լոյս Արեգակին, Տիեզերքի Արարիչ, Նախախնամող ու Մնուցիչ բարերար Աստուածին:

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** — Եթէ, ո՛վ մեծ Գենպետ, յօժարին, այն ատեն ի՞նչ ընել պէտք է:

**ԳՆՆՊԵՏ** — Այն ատեն կը խորհինք. առայժմ դից հրամանն է ա՛յս է. դարձընել զանոնք մոլորութենէն և առաջնորդել ճշմարտութեան ճամբան:

**ՅԱԶԿԵՐՏ** — Բերուածները որո՞նք են, հազարապե՛տ:

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** (Գր--Ռի--ն հը յե--ւը, Տիեզեր կ--գայ, Բարձր--յայն կը--ի՛ի կ--րդ--ւ):

Վասակ	անուն	Սիւնեաց	տոհմէն
Ներշապուհ	»	Արծրունեաց	»
Արտակ	»	Ռշտունեաց	»
Գաղէշոյ	»	Խորխոռունեաց	»
Վարդան	»	Մամիկոնենից	»
Արտակ	»	Մսկաց	»
Մանէճ	»	Ապահունեաց	»
Վահան	»	Ամատունեաց	»
Գիւտ	»	Վահեւունեաց	»
Շմաւոն	»	Անձեւացեաց	»

Ասո՛նք են կանչուածները, ասո՛նք են հիմակուան բերուած ու արքունիքը բանտարկուածները. ամե՛նքն ալ ներկայանա՞ն:

**ՅԱԶԿԵՐՏ** — Ի՞նչ պէտք կայ. երկու երեքը կը բաւեն. հոս թո՛ղ բերուին Վասակ Սիւնին, Վարդան

Մամիկոնեանն ու Ներշապուհ Արծրունին, այդ երեքը լսե՛նք նայինք :

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** (Գուրու կ'ելլէ Խնարհելով) :

**ՅԱԶԿԵՐՏ** — Դո՛ւն, ո՛վ կրօնից պետ, դուն հոս կեցի՛ր, քովէս մի՛ հեռանար, պէտք ունիմ քու ներկայութեանդ :

**ԳՆՆՊԵՏ** (Խնարհելով կը նստի) — Ծառայ՛ եմ ամենանուսաստ՛ Արքայից Արքայիդ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Երբէք չը յուզուիս, մինչեւ վերջը մտիկ ընե՛նք, թո՛ղ խօսին :

**ԳՆՆՊԵՏ** — Ես չեմ կրնար հանդուրժել, եթէ յանդգնին դէմ խօսիլ և մեր կրօնը ծաղրելու չափ առաջ տանին իրենց լրբութիւնը :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ի՛նչ կ'ուզեն թո՛ղ ընեն, մինչեւ վերջը մտիկ ընե՛նք :

**ԳՆՆՊԵՏ** — Ծառայ՛ եմ, Տէ՛ր Արքայ, համբերելու ջանք չպիտի խնայեմ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Այո՛, այո՛, ամեն մեղմ միջոցները գործածե՛նք, մինչեւ որ յաջողինք դարձի բերել այդ դժբա՛ղդ մոլորեալները, ու մե՛նք ալ ազատուինք :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ

ՆԱԽՈՐԻՆԵՐԸ, ՄԻՀՐՆԵՐՍԵՀ, ՎԱՍԱԿ, ՎԱՐԴԱՆ,

ՆԵՐՇԱՊՈՒՀ, ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

**ՄԻՀՐՆԵՐՍԵՀ** (Յարգելով շարժուելով ճշ) Ահա՛ւտտիկ Տէ՛ր Արքայ (Ձեռքով ճիշի ճիշի առջ կը բերէ), վասակ Սիւնին, վարդան Մամիկոնեանը, Ներշապուհ Արծրունին, Ձեր վեհափառութեան հպատակ ծառայները :

**ՅԱԶԿԵՐՏ** (Մ... Զ... Լայելով Դեռալեռին, յետոյ վասակին) — Առաջ եկողը նայիմ, Սիւնեաց իշխաման, ինչպէս էք հիմայ, հանգստացա՞ք:

**Վ.Ա.ՍԱ.Վ.** — Շնորհիւ Շահինչահիդ Աշխարհի հանգիստ ենք այնպէս, ինչպէս կ'ըլլայ սպանդանոց տարուող ոչխար մը:

**ՅԱԶԿԵՐՏ** — Բայց դուք ինչո՞ւ սպանդանոց տարուիք, ինչո՞ւ չըզիտնաք ձեր յարգը, ձեր պատիւը:

**Վ.Ա.ՐԴԱՆ** — Տէ՛ր Արքայ, մեր պատիւը՝ մեր երկիրը թողեր, հո՛ս ենք եկեր, փառքէ մերկացած:

**ՅԱԶԿԵՐՏ** — Դո՛ւն, Մամիկոնեան նո՛ր սպարապետ (հեգնող), գոնէ դուն երբէ՞ն ի վեր սովրեցար այնչափ աստուածաբանութիւն. նախնիքներդ՝ Գոմփիւկիոսի հաւատացեալներ, երբէք կրնայի՞ն գուշակել թէ՛ իրենց սերունդէն մէկը պիտի ելլէր, Հրեայ մը պիտի պաշտէր... (բռնաբան) յիմար գաղափար, Հրեայ մը պաշտել իբրեւ Աստուած և Աստուծոյ Որդի... (խռովաբար) թողէ՛ք, թողէ՛ք կ'ըսեմ այդ ցնորքը, կուրութի՛ւնը, տխմարութի՛ւնը...:

**Վ.Ա.ՐԴԱՆ** — Տէ՛ր Արքայ, մեր Հաւատքը՝ վսեմ կոյրն է որ կը տեսնէ ինչ որ չեն կրնար տեսնել Դեռալեռին եզան աչքերը...: Մենք կոյր թող կոչուինք. հոգ չէ՛. միայն թէ՛ չը զլանանք ձեր Արեւին պատրանքներէն...:

**ՅԱԶԿԵՐՏ** — Կապանքի ու բանտի մէջ անգամ կը պահէք նոյն յոխորտանքը, (բարկացած) ահա՛ կ'ըսեմ, ցնորա՛ծ գլուխներ, հրաժարեցէ՛ք աւելորդ պաշտամունքներէ, լա՛ւ զննեցէք բնութիւնը: Դուք ինչպէ՞ս կրնաք ուրանալ Տիեզերքին Աչքը, լոյս, կեանք ու զօրութիւն պարգեւող Արեգակը, բարիքներու

բաշխէ՛լը, Ջրուանին հարազատ ծնո՛ւնդը... : Արա-  
րածներուն Ստեղծո՛ղը, Նախախնամո՛ղը... :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ**. — Կը տեսնեմ որ, Տէ՛ր Արքայ,  
Դուք (հե՛հա ժողով ճը) քան զԳեհնպետն աւելի հմուտ  
էք ձեր գինին, որ, դժբաղդարար, (կ՛հհալ՛) խա...  
խո՛ւտ է :

**ԴՆՆՊՆՏ** (Կարգա՛ն շարժմէրով թա՛ս  
նայելով) Խելագա՛ր... : Նորին վեհափառութեան ներ-  
կայութեան ալ կը յանդգնիս հայհոյել... :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** (շարժի՛ն) — Դո՛ւն, ո՛վ Գեհնպետ,  
տեղդ հանգիստ նստէ՛. Արքայից Արքային առջեւ կը  
կը դտնուինք, չափաւորէ՛ լեզուդ... :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ի՛նչ անտաշ գլուխներ ու բռնկած  
ըղեղներ. (Ներշա՛պի) ինծի նայէ՛. հոս Հայաստանի  
լեռները չե՛ն, Արժրուենաց սահմաններէն ամիսներով  
հեռո՛ւ ենք :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** — Հայ իշխան մը, նախարար մը,  
սոսկական Հայ մը, ո՛ւր որ ալ երթայ, Հայ է Հայ,  
և իր հայրենիքը չո՛ւրանար. Պարսկաստանի մէջ  
բանտարկութիւն, կամ Խաժաստանի ու Սագաստանի  
մէջ՝ աքսոր, ասոնք արգելք մը չեն կրնար ըլլալ  
մեզի, շարունակել պաշտելու մեր երկրին ու մեր  
հայրերուն Աստուածը : Գիտցած ըլլա՛ք, Տէ՛ր  
Արքայ, գիտցած ըլլաք որ՝ Գեհնպետի մը, քուրմե-  
րուն ձեռքը խաղալի՛կ մըն էք դարձեր... :

**ՅԱԶԿԵՐՏ** (ցած յայնով, աղա՛ւաբ) — խաղալի՛կ մը,  
ինչէ՛ն գիտէ որ ես (Բարձր-Յայն), ո՛վ ե՞րջը... :

**ՎԱՐԴԱՆ** — Վե՛րջը. ի՛նչ պիտի ըլլայ. Հայաս-  
տանի պէս չքնաղ երկիր մը, դրախտավայր մը պի-  
տի ձեռքէ հանէք. ուրիշ ոչի՛նչ :

**ՅԱԶԿԵՐՏ** — Ի՞նչպէս :

**ՎԱՐԳԱՆ** — Շա՛տ դիւրաւ ու շա՛տ մօտէն, եթէ տակաւին հոս արգիլուած պահէք Հայոց Աւագանին ու բովանդակ Հայաստանը մատնէք անիշխանութեան :

**ՅԱԶԿԵՐՏ** — Հոգ մի՛ ընէք. ձեր տեղը բռնող մարդպան, հազարապետ, սպարապետ, քրմապետ, քուրմեր, կուսակալներ, կառավարիչներ, դատաւորներ. ամենքն ալ ունիմ. հո՛ն կը զրկեմ. իսկ դուք, ապերախտներ, անգամ մըն ալ չէ՛ք կրնար տեսնել երեսը ձեր լեռներուն, քանի որ այսպէս կը յամառիք միեւնոյն դատապարտելի մոլորութեան մէջ . . . :

**ԴԵՆՊԵՏ** — Տէ՛ր Արքայ, պիտի զղջան ասոնք, բայց շա՛տ ուշ. շա՛տ սուղի պիտի նստի իրենց այդ զղջումը :

**ՎԱՐԳԱՆ** — Վաղը յայտնի կ'ըլլայ զղջացողը :

**ՎԱՍՅԿ** — Արքայից Արքային, ամենազօր և ամենոզորմած Յազկերտի բարձրագոյն կամքէն կախուած բան մըն է. եթէ բարեհաճի, ամբողջ Հայաստան այսօր իր ամենասիրական երկի՛րը կ'ըլլայ. ժողովուրդն ալ՝ իր աշխարհական ու եկեղեցական պետերով՝ իր հլու, հաւատարիմ ծառան ու հպատակը . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** (+իչ ճը հանդարտ) — Սիւնեաց իշխա՛ն, շատ լու կը խօսիս, միթէ մենք չե՞նք ուզեր որ այնպէս ըլլայ :

**ՎԱՍՅԿ** — Ձեր վեհափառութիւնը կ'ուզէ, բայց . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** — Բայց ի՞նչ, շարունակէ՛ :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** — Բայց Դենպետը . . . :

**ՎԱՐԳԱՆ** — Բայց քուրմե՛րը չեն ուզեր :

**ԴԵՆՊԵՏ** — Քուրմերը շա՛տ կը նախատէք, կը զայրացընէ՛ք աստուածները :

**ՅԱԶԿԵՐՏ** (դէնպետին) — Դուն կեցի՛ր . . . :

**ՎԱՐԴԱՆ** (բորբոսաձ առաջ ներդրում) — Ի՞նչ կ'ըսէ, Տէ՛ր Արքայ, ի՞նչ կ'երգէ ձեր դէնպետը. ալ տեսնու է դիմակը պատուելու. Դո՛ւք, (ինչպէս ասիւնքը) Տէ՛ր արքայ, լաւ չէք ընել, երբ ձեր տէրութեան հաւատարիմ ու անձնուէր հպատակները կը չարչարէք այս կերպով. դո՛ւք Տէ՛ր Արքայ, ձե՛ր ձեռքով, ձե՛ր գահին տակ անդո՛ւնդ մը կը բանաք ու ձեր տէրութեան գերեզմանը կը փորէք . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** (ցած յայնով, մեկուսի) — Տապա՛րը . . . :

**ՎԱՐԴԱՆ** (չարանկելով աւելի եռանդով) — Ու ձեր թագն ու մակա՛նը կը թաղէք. Դո՛ւք, ո՛վ թագաւոր, ապերա՛խտ էք, ապերա՛խտ, (անդին վառի ինչպէս կոտորէ դժգոհի շարժաններով) ի՞նչպէս շուտ մոռցաք մեր ծառայութիւնները. դեռ քանի՞ տարի եղաւ, ձեր արքայական փախստական գունդերուն օգնութեան վազեցի այրուծի քաջերով ու հալածեցի հիւսիսի ցեղէ՛րը, որոնց ե՛ս եղած էի միակ սարսա՛փը, ու հիմա՛յ . . .

**ՅԱԶԿԵՐՏ** — Մենք այդ բաները չե՛նք ուրանար, մի՛շտ կը յիշենք :

**ՎԱՍԱԿ** — Եթէ յիշէիք, Տէ՛ր Արքայ, մենք հիմայ հոս, այս նուատապումին, այս սարկութեան մէջ չէի՛նք գտնուեր . . . :

**ՎԱՐԴԱՆ** — Այսուհետեւ պիտի տեսնէք թէ՛ մեր այսպէս հոս արգելափակ մնալը՝ քանի՛ քանի աղէտներու դուռ պիտի բանայ. վստիկ կ'իմանաք, հարեւան թշնամի ցեղերը ի՞նչպէս պիտի ասպատակեն ձեր տէրութեան սահմանները . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** (երեւոյթաբար) — Իմ կեանքս՝ պատերազմներու շա՛րք մըն է. ջրի ձայն կուգան ինձի այդ չարագուշակ սպառնալիքները. (ցած յայնով) բայց տապարը՛ . . . (կը խորասուշուի սեւ կոտորածներու մէջ) :

**ԳԵՆՊԵՏ** (բարձր-գու) — Արքայից Արքային փառքն ու պարծանքը կը կազմէ իր ջերմեռանդութիւնը. աստուածները կը պահեն Նորին վեհափառութեան թանկագին տարիները. անասան է տէրութիւնը . . . :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** — Սասանեան տէրութիւնը կ'ըսէք :

**ԳԵՆՊԵՏ** — Դուն Արծրունի', դուն չափը կ'անցընես. (կերտել կը ցորկե որդէն, հեռանալ կուզէ) :

**ՅԱԶԿԵՐՏ** — Հանգարտէ', ո՛վ Դենպետ, հանգարտէ', հիմայ կը տեսնեն, (դառնալով երեւին) ձեզի եմ, կը լսէք, պիտի հրաժարի՞ք ձեր ծաղրելի աղանդէն թէ ոչ, ըսէ՛ք, մէ՛կ բառով, այո՛ կամ ո՛չ :

**ՎԱՐԴԱՆ** (առաջ կը շեղուի առի՞ծի պէս) — Ո՛վ Արքայ, կը կարծէք թէ եկեղեցիները թագաւորներու պարգեւներ ըլլան. փիլիսոփաներու կամ ճարտարագէտներու խելքէն ու ձեռքէն բխած, քա՛ւ լիցի . . . : Զինւորներու քաջութեան աւանդն ալ չեն անոնք, ո՛չ ալ դեւերու շնորհքը. անոնք, Տէ՛ր Արքայ, միա՛կ Սատուծոյ, Արեւին ու աստղերուն, լուսնին ու երկրիս, երկնքին ու ծովերուն, ցամաքին ու կղզիներուն Արարիչ Սատուծո՛յ, Սմենակալի՛ն շնորհքն են. գիտէ՛ք :

**ՅԱԶԿԵՐՏ** — Է՛հ, ի՞նչ ըսել կ'ուզես :

**ՎԱՐԴԱՆ** (շեղուելով առի՞ծի որո՞շման) — Ըսել կ'ուզեմ թէ՛ սպառնալիքներդ անօգուտ են. չարչարանքը՝ մեր հաշուեգրքին մէ՛ջ է. իսկ մեռնիլը՝ մեր ուխտն է :

**ՅԱԶԿԵՐՏ** (կարգած ու իրի՞ծ) — Վզրո՛ւկ, անասոնք ու բանալը թող նետեն. (այս միջոցին Դենպետը գլուխը կ'երերցընէ վրեժխնդրի գահաձուլութեամբ իւր, միշտե՞՞ Յազկերտ իօտը երեւին ուղղելով) Ահա՛ կ'երդնում, Միհր-Արեւո՛ւն վրայ, ա՛լ յոյսերնիդ կտրեցէ՛ք ձեր ցանկա-



ցածը նորէն գտնելէ . երգումս՝ երգում է , կը կըրկնեմ ու կ'երեքկնեմ ահա՛ . . . : Սազաստան պիտի աքսորել տամ ձեզ անկոխ ճամբաներէ , որպէս զի ձեռնէ շատերը ճամբան սատկին խորշակահար :

**ԴԵՆՊԵՏ** (հեֆնո). — Հողերնի՛ն էր . Քրիստոսի ետեւէ՛ն պիտի հասնին :

**ՅԱԶԿԵՐՏ** (Ա. — 27 4-ի-է-1- — ս-ս-2-4-2 շէշոլ). — Ողջ մնացածները՝ պիտի փակեմ արգիլեմ անել զընդաններու և անմարդաձայն բերդերո՛ւ խորքը . . . :

**Վ.Ս.ՍՍ.Կ.** — Այդ անգթութիւնը չի գործեր Արքայից Ա.բ.բան :

**ՅԱԶԿԵՐՏ.** — Ասով չի՛ վերջանար . անթիւ զօրքեր պիտի արձակեմ ձեր երկիրը , փիղերովս մէկտեղ . անոնք գերի՛ պիտի վարեն ձեր կիներն ու զաւակները , պիտի բերեն նետեն զանո՛նք ալ Սուժաստանի անապատները . ձեր վանք ու վկայարան կոչած եկեղեցիները՝ հիմէն պիտի փլցնել տամ , պղծել տամ պիտի սեղաններն ու խորանները . ո՞վ պիտի կրնայ գիմադրել . ո՞վ պիտի կրնայ արգիլել , իսկոյն գազաններուն երա՛խը պիտի նետուի : Ու այս ըսածներս պիտի ընե՛մ , պիտի գործադրե՛մ , գիտցա՛ծ ըլլաք , Մի՛հրը վկայ : (Վարդի՛ն Դ. — 2-1-1) Ա՛ռ տար ասոնք մահապարտներուն զնգանը . . . :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** (Երբ՛ու կը Դ. — 1-1-1, Երբ՛ու Դ. — 2-1-1). — Բարբարո՞ս բռնաւոր . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** (Երբ՛ու — 2). — Լիրբեր՛ :

**ԴԵՆՊԵՏ.** — Հայհոյիչներ , անհաւատներ . . . :

**ՅԱԶԿԵՐՏ** (Դե՛նդեթ). — Է՛հ , ուզածդ ա՞ն էր , Դե՛ն պե՛տ :

**ԴԵՆՊԵՏ** (Որդի ելլելով — Բե — 1-1-1-1-1 զեր Ե. — 1-1-1). — Յաւիտեան ապրէ՛ , Տէ՛ր Ա.բ.բայ , անմահ աստուած .

ները՝ ձեր գործը կ'օրհնեն. արդարութիւնը գործադրեցիք. Որսիզդ հրճուեցաւ... :

**ՅԱԶԿԵՐՑ.** — Բայց եթէ այդ քարգլուխները յամառին մնան, այն ատեն ի՞նչ կ'ըսեն աստուածները :

**ԴԵՆՊՅՏԸ** (Դիւային ժողովոյ մը) . — Տէ՛ր արքայ, այն ատեն ամէնքը կ'ոչնչացնենք ու երկրին կը տիրենք վերջնականապէս :

**ՅԱԶԿԵՐՑ.** — Դիւրին չէ, Հայաստանը դիւրին չէ նուաճել. դարերո՛ւ գործ է. (կը մտմտայ) . . . Թո՛ղ զիս մինակ, ո՛վ Դենպետ, դո՛ւն ալ գնա՛, հարցո՛ւր աստուածներուն, իմացի՛ր իրենց կամքը, յետոյ կը կանչեմ քեզ : (Դենպետը եր եր +աշտեւով, +աշտեւով, յետեւը երեքցեւով, օրհնեւով կը մեկնէ) :

**ՅԱԶԿԵՐՑ** (Միշակ) . — Դենպետի մը, քուրմերուն ձեռքը խաղալի՛կ եմ դարձեր. տե՛ս, հայ իշխա՛ն մըն ալ գիտէ, ա՛լ գաղտնիք մը չէ, ըսել է թէ հպատակներուս մէջ ալ կը խօսուի, ամենքն ալ հասկցած են թէ՛ Յազկերտ գործի՛քն է դենպետին ու անոր քուրմերուն, մոգերուն . . . խաղալի՛ կը (Էնդիմ+ ցոցմեւով է Բաշտեւոյը կոտորէն Դենպետ) ե՛ս, Յազկերտ, (Գահը ցոց Դաշտեւով), այս գահին տէ՛րը, Դենպետին խաղալի՛ կը . . . :



## Պ Ա Տ Կ Ե Ր Բ .

### Բ Ա Ն Տ

Վ.Ա.ՍՍ.Կ, Վ.Ա.ՐԴ.Ա.Ն, Ն.ԵՐՇԱՊՈՒՀ, Ն.Ա.ԽԱՐԱՐՆԵՐ

**Վ.Ա.ՍՍ.Կ.** — Կատղած գազան մըն էր կարծես .  
ան ի՛նչ փրփուր, ի՛նչ լորձուկներ . . . :

**Ն.ԵՐՇԱՊՈՒՀ.** — Հապա դենպե՛տը, այն հրէ՞ջը :

**Վ.Ա.ՐԴ.Ա.Ն.** — Երգումէն մի՛ վախնաք, վա՛ղը կը  
փոխէ միտքը, Յազկերտի չափ յեղյեղուկ թագաւոր  
մը քիչ կը գտնուի :

**Վ.Ա.ՍՍ.Կ.** — Ո՛վ դէտէ, կրնայ ըլլալ որ անմիջա-  
պէս գործադրել տան իր հրամանը՛, այն ատեն մենք  
ո՞ւր կը մնանք, ո՞ւր կը մնայ մեր կամշոտութիւնը .  
ա՛խ . այս ամենը նախատեսա՛ծ էի և իրաւո՛ւնք ու-  
նէի երբ կը պնդէի Արտաշատի ժողովին մէջ որ լաւ  
մը խորհելէ ետքը պատասխանէինք :

**Վ.Ա.ՐԴ.Ա.Ն.** — Այսի՞նքն, խորհելէ ետքը պա-  
տասխանէինք ըսելով ի՞նչ ըսել կ'ուզես :

**Վ.Ա.ՍՍ.Կ.** — Գոնէ այն կծու, անսարսելի վերջա-  
բա՛նը չէր դրուեր, Ղեւոնդ երէցի բորբոքած ըզե-  
ղին պտո՛ւղը :

**Վ.Ա.ՐԴ.Ա.Ն.** — Մի՛ գրպարտեր բացակայ քահա-  
նայ մը, ան իր սրտէն բխածը խօսեցաւ ու ժողովը  
զայն ընդունեց . հիմա կ'արժէ՞ անդրադառնալ :

**Վ.Ա.ՍՍ.Կ.** — Ի՞նչ ընենք ուրեմն, շարունակե՞նք  
մեր յամառութիւնը (Խաւցած, վհարած) բայց պիտի  
կրնա՞նք :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ.** — Շուտ կը յուսահատիս, Սիւնի', սպասե՛նք տեսնենք ի՞նչ կը բերէ մեզի վաղուան օրը:

**ՎԱՐԳԱՆ.** — Վաղուա՛ն սպասել:՞՞ հիմակուընէ՛ պէտք է հնարք մը խորհիլ, ժամ առաջ պէտք է միջոց մը խորհիլ, այս կացութեան վերջ մը դնելու համար, եթէ դեռ տեւէ, մէկ երկու ամսուան սէջ հայրենիքը քարքա՛նդ կ'ըլլայ:

**ՎԱՍԱԿ.** — Ի՞նչ միջոց կայ, գիտէ՞ք բան մը... (Դրե՛ն որո՛յցն յը, դո՛ւր իւրե՛ն, մե՛տքը դեպի դո՛ւր իւրե՛ն, բանասպաս յը շերտ իւրե՛ն):

**ԶԱՆԳԱԿ** (Բանասպասի հագստասով). — Այս հագուստին տակ չը կրցա՞ք զիս ճանչնալ, սիրելիներ՛ր, ողջո՛յն ձեզ:

**ԱՄԵՆՔԸ** (Յանկարծակիի եկած, ապուշ ապուշ նայելով) — Ո՞վ կ'ըլլաս:

**ԶԱՆԳԱԿ** (Անվասի) Սիւնեա՛ց իշխան, լա՛ւ նայեցէք, չէ՞ք ճանչնար. (Իւր նային -- իւր նային), զարմա՛նք, Զանգակ երէցը չե՞մ:

**ԱՄԵՆՔԸ.** — Զանգակ երէ՞ց:

**ՎԱՍԱԿ.** — Ուսկի՞ց ուր:

**ԶԱՆԳԱԿ.** — Ձեր ետեւէն եկայ մինչև Տիգրոն:

**ՎԱՐԳԱՆ.** — Ի՞նչպէս յաջողեցար հոս մտնել:

**ԶԱՆԳԱԿ.** — Հիմա՛յ պիտի պատմեմ:

**ՆԵՐՇԱՊՈՒՀ.** — Պատմելու պէտք չկա՛յ. հասկցա՛յ:

**ՎԱՍԱԿ.** — Ի՞նչ հասկցար.

**ՆԵՐՇԱՊՈՒՀ.** — Ուրացա՛ծ է, ուրացա՛ծ. այլապէս չէր կրնար ներս մտնել:

**ԶԱՆԳԱԿ.** — Ի՞նչ ընէի, զաւա՛կս, հոս Պարուկաստա՛ն է, բռնաւորին սուրին տակ ի՞նչ կրնայի ընել, եթէ չուրանայի, զիս պիտի կախէին կամ ցից հանէին, հիմայ ողջ եմ, կ'ապրիմ, ու թերեւս ձե՛ր ալ ապրելուն միջոց ըլլամ:

**ՎԱՐԳԱՆ.** — Ի՞նչ ըսել կ'ուզես, ըսէ՛, այդ բանտապանին հագուստը ի՞նչպէս կրցար ճարել:

**ԶԱՆԳԱԿ.** — Կաշա՛ռ քով, տեսնես, սպարապե՛տ, տեսնե՛ս, ի՞նչպէս ընդհանրացած է հոս կաշառակերութիւնը. մեծէն մինչեւ պզտիկը, ուտելո՛ւ վարժուած են: Կրծօն տուի՞ր, ամենակարո՞ղ ես, ամեն բան ընել կուտաս իրենց, այնքա՛ն հզօր է կաշառքին դերը . . . :

**ՎԱՐԳԱՆ.** — Լա՛ւ, կարելի չէ՞ մեզի ալ ճարել քանի մը ձեռք բանտապանի հագուստ, հագնինք, փախչինք ու դառնանք մեր տեղե՛րը:

**ԶԱՆԳԱԿ.** — Ատիկայ անկարելի է, բայց ուրիշ աւելի դիւրին ու գործնական միջոց մը գիտեմ:

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** (Խ-հ-դ-ւ-ւ-ւ-ւ -կ-ւ-դ-ւ-ւ-ւ ծը) . — Այդ միջոցը քեզի պահէ՛, գիտե՛մ, գիտեմ:

**ԶԱՆԳԱԿ.** — Խօտելի միջոց մը չէ՛ սակայն. արդէն ուրիշ միջոց չըկայ. վաղը, արշալոյսին, ձեռնակապանքով պիտի աքսորուիք, մութուլուսին պիտի տարուիք ո՛վ գիտէ ո՛ւր. ա՛յս է Յազկերտին հրամանը, կրկնակի երդումով հաստատուած. չը լսեցի՞ք դուք:

**ՎԱՐԳԱՆ.** — Մեր ներկայութեան ըրաւ երդումը «Սագաստան պիտի աքսորեմ» կը մուտար գազանը:

**ՎԱՍԱԿ.** — Ի՞նչ, կը ծագրէ՞ք, չի՞ կրնար գործադրել ինչ որ հրամայեց երդումով:

**ՎԱՐԳԱՆ.** — Անտարակո՛յս, բալց չէմ կարծեր թէ այդ հրամանը նոյնը՛ մնայ, Յազկերտ կ'ըսեն աւոր, վայրկեան մը յետոյ կը տեսնես որ փոխուած է, փչող հովին ուղղութեանը կը համեմատին իր պատգամները . . . : Դենպետը կը տեսնե՞ս, դենպետը, ան Գեհենցո՛ւն, Դժոխքին կո՛ճղը . . . ա՛խ, ան կը տեսնե՞ս, անո՛ր ձեռքն է ամեն բան:

**ԶԱՆԳԱԿ** — Ուրեմն ես երթամ, կ'երեւի թէ ին-  
ծի պէտք պիտի չունենաք, ինքզինքնիդ ապահով կը  
կարծէք... բայց կը սխալի՛ք չարաչար. այսչափ  
ըսեմ որ ատեն չըկայ. շատ ուշ է, եթէ ա՛յսօր, ա՛յս  
պահուս, վերջնական ու վճռական միջոցի մը չը դի-  
մէք, կորսուած էք, կորսուած. ես ա՛յսչափ կ'ըսեմ:

**Վ.Ա.ՍԱԿ** — Ըսէ՛ նայինք, ի՞նչ միջոց կայ:

**ԶԱՆԳԱԿ** — Երեսանց ուրանալ, խոստումներով  
Յազկերտին աչքը փոշի ցանել, պարզեւներով լիա-  
նալ, առօք փառօք հայրենիք վերադառնալ. ահա՛  
միջոցը:

**Վ.Ա.ՐԳԱՆ** — (Կեռ+Վ) Ի՞նչ կ'ըսէք, երէ՛ց, ի՞նչ  
կ'ըսէք. երբ որ սեւ համբաւը Հայաստան հասնի,  
Ժողովուրդին ձեռքէն ի՞նչպէս ազատենք Գօծիքնիս:

**ՆՆՐՇԱՊՈՒՎ** — Ղեւոնդ երէ՛ցը մանաւանդ, հա-  
ւատացէ՛ք, բաներով, բիրերով վճնտել կուտայ մեզ:

**Վ.Ա.ՍԱԿ** — Բա՛ն մըն ալ չեն ընէր. նոյնիսկ կ'ար-  
դարացընեն ալ:

**ՆՆՐՇԱՊՈՒՎ** — Ծա՛տ լաւատես կը տեսնեմ քեզ,  
Սիւնի՛:

**Վ.Ա.ՍԱԿ** — Մեր Ժողովուրդը լաւ կը ճանչնամ ես,  
և վստահ եմ թէ՛ ո՛չ ոք պիտի մեղադրէ մեզ, եթէ  
այս միջոցին դիմենք:

**ՆՆՐՇԱՊՈՒՎ** — Եթէ այդպէս է, ընտրե՛նք ու-  
րեմն Տէր Զանգակի ցոյց տուած միջոցը, շուտով  
վերջ մը դնենք այս կացութեան:

**Վ.Ա.ՐԳԱՆ** — Բայց խի՞ղճը. բայց հանրային դա-  
տաստա՞նը. բայց պատմութի՞ւնը. ո՛ւր պիտի փախ-  
չինք մենք այս երեքին դատապարտութենէ՛ն...:

**Վ.Ա.ՍԱԿ** — Ներկան, ներկա՛ն խորհինք, ապա-  
դային դատաստանը՝ վերջի խնդիր է. հիմակուա՛նը  
նայինք:

**ԶԱՆԳԱԿ** — (Արարելով) Շուտ ըրէ՛ք, կ'աղա-  
չեմ, ժամանակը կանցնի, պէտք է մեկնիմ, կ'ըս-  
պասեն ինծի:

**ՎԱՐԳԱՆ** — Որո՞նք կ'ըսպասեն:

**ԶԱՆԳԱԿ** — Հիմայ չեմ կրնար ըսել, գաղտնի՛ք  
պէտք է մնայ:

**ՎԱՍԱԿ** — Հոգ չէ՛, դարձեալ գաղտնիք թո՛ղ  
մնայ.

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** — Դենպե՞տը կ'ըսպասէ.

**ԶԱՆԳԱԿ** — (Ժպտելով) Է՛, Պանո՛ր պէս մէկը, ի՛նչ  
որ է, ան երկրորդական է, բուն խնդիրը նայի՛նք  
մենք:

**ՎԱՐԳԱՆ** — Ի՞նչ կ'ըսես, Սիւնեացի շխա՛ն.

**ՎԱՍԱԿ** — (Կհիշելով) Ե՛ս, եթէ ինծի հարցընէք,  
համամիտ եմ Տէր Զանգակի, որովհետեւ ատկէ դատ,  
ուրիշ միջոց մը չեմ գիտեր.

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** — Ի՞նչ կրնանք ուրեմն, կա՞յ ուրիշ  
միջոց մը, անո՛ր դիմենք:

**ԶԱՆԳԱԿ** — (Ատելի արարելով) Ես կը մեկնիմ, ի՛նչ  
պատասխան տանիմ հոն.

**ԱՄՆՆՔԸ** — (Բաց է վարդաձէն) Կ'ուրանա՛նք, կ'ու-  
րանա՛նք . . . :

**ՎԱՐԳԱՆ** — (Մինչև ճացած, աւելես) Պայմանով  
որ մեր երկիրը վերադառնանք անյապաղ:

**ԶԱՆԳԱԿ** — (Գահ է շարժել) Անշո՛ւշտ, անշո՛ւշտ,  
չա՛տ լաւ, մնա՛յք խաղաղութեամբ (Կը հիշի իրեն զ-  
գիւրդ):

**ՎԱՐԳԱՆ** — (Բռնի երկայն շարժելով) Ուրանա՛լ  
հա՞: Ի՛նչ ահռելի վայրկեան, ո՞ր բերանը պիտի կըր-  
նայ բացուիլ, ո՞ր շրթունքները պիտի շարժին, ո՞ր  
լեզուն է ան որ պիտի արտասանէ պիղծ անուաներ

դեւերու, կուռքերու. ո՞ր ծառնկերը պիտի ծռին երկրապագելու կրակին. Աստուած իմ, ան ի՞նչ տհաւոր վայրկեան է... (Յանկարժ այլադրուած) բայց, ի՞նչ օգուտ, հայրենիքը... :

**ԲԱՆՏԱՊԱՆ ՄԸ** — (Բանտին Ռջ կը ժամէ կանգնելով նախորդները) Ազատ էք, եկէ՛ք, եկէ՛ք, Արքայից Արքային քով. (Նախորդները կարգով բարձր կ'ելեն):



### Պ Ա Տ Կ Ե Ր Գ .

(Յազկերտին պալատը, մեկ անկիւնը ԱՏՐՈՒՇԱՆ մը, կուռքեր. Յազկերտ Գահին վրայ բազմած. Գեոպետը զգեստաւորուած, ներս կը մտնէ, ետեւէն փուրմերը, յետոյ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ, կիսաբոլորակ մը կազմած, կը խոնարհին արեայական Գահոյքին առջեւ:)

**ԳԵՆՊԵՏԸ** — (Ուկի բարձր ղե յերտը, ինկրկելով Արքային կողմէն երէկելով)

Անմա՛ն Արեւ, ժպտե՛ք վերեւ .

Ուրախացե՛ք, ա՛զգ համօրեւ .

Երկինք երկիր կեա՛նք բստանան,

Գիշեր ցերեկ թո՛ղ փեղ փառք սան:

**ԳՈՒՐՄԵՐԸ** — (Երէկելով)

Խնդա՛, Ուրմի՛զդ, կեցցե՛ս Յազկե՛րտ,

Կեցցե՛ք Տիգրոն, վեհ դասակերտ:

**ԳԵՆՊԵՏԸ** — (Երէկելով).



Ահա՛, ահա՛, խաւարամաճ  
 Արեւմուտքէն լոյսը ցոլաց,  
 Մութը նստող հոգիներուն՝  
 Փառ՛քը ծագեց Միհր-Արեւուն :

**ԳՈՒՐՄԵՐԸ — (Երգելով) :**

Խնդա՛ Ուրի՛զդ, կեցցե՛ս Յազկե՛րս,  
 Կեցցե՛ Տիգրոն, վե՛հ դասակերս :

**ԳԵՆՊԵՏ —** Օրհնեա՛լ ըլլան երկինք, փառաւորուէ՛  
 Արե՛ւ, Արարիչ կենաց, Աղբիւր լուսոյ և ջերմութեան,  
 փայլէ՛, զուարթացի՛ր, ահա՛ Քեզի նորընծայ երկըր-  
 պագուններ ծնկագուն՝ կ'ընդունին զՔեզ Աստուած  
 Աստուածոց (Նախարարներուն — զրգելով), ծունկի՛ եկէ՛ք,  
 ծունկի՛, երկրպագեցէ՛ք սրբազան կրակի՛ն . . . :

**ԳՈՒՐՄԵՐԸ — (Երգելով) :**

Խնդա՛, Ուրի՛զդ, կեցցե՛ս, Յազկերս,  
 Կեցցե՛ Տիգրոն, վե՛հ դասակերս :

(**ՅԱԶԿԵՐՏ —** Կը դիտէ դեմքանը գահին վրայէն, Հայ  
 նախարարները ծունկի եկած. Դիպն վարդան + իչ ճը ծունկը  
 ծռած, զգուշութեամբ կործակելու խաչ ճը կը հանէ, վրան կը  
 նայի խանդաղապանով ճը, — կը ճրճիջէ) :

**ՎԱՐԳԱՆ —** Մեղա՛յ, մեղա՛յ, մեղա՛յ,

(Վարդայրը կիջէ)





## Ա Ր Ա Ր Գ.

(Սիւնեաց վասակ իշխանին պալատը.)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա.

Վ.Ա.ՍԱ.Կ — (Մէշ-կ) Ո՛ւհ, ազատեցանք վերջապէս. մէկ կողմէ՛ Յազկերտին սաստը, միւս կողմէ՛ Դինպետին սառեցնող հեգնանքը. մէկ կողմէ՛ Ներչապուհի որստը, միւս կողմէ՛ Վարդանի պոռո՛տը. ո՞ր մէկը, ո՞ւհ... ան ի՞նչ վայրկեան էր, ի՞նչ վայրկեան էր, ի՞նչ վայրկեան... : Ուհ, ամենէ՛ն ալ ազատեցայ... : Խնդիր է հիմայ տեղաւորել այդ կրակի պաշտօնեանները, այդ ազան, այդ անկուշտ այդ քանասա՛ր գայլերուն գտնել գիրո՛ւկ ոչխարներ, ամեն օր ուտեն : Ժողովուրդը՝ հօտ, կղերը՝ գայլ. անա՛ մարդկութիւնը... : Երկբիս ո՞ր կողմն ալ երթաս, նո՛յն է կղերը. տգէտ, ռամիկ, իրկչոտ հօտին կեղեքի՛ւր... : Իսկ մեր կղերները... Օ՛, անհամեմատ առաւելութիւններ ունին անոնք՝ քուրմերուն վրայ. իրենք բնիկ՝ բնիկներուն տկար երակները լա՛ւ

զննած են, կը հագնին սեւը, կ'ըլլան սեւ բուրդով, կակուղ մորթով գառնուկներ՝ արտաքինով, խկներ-քինով՝ արիւնկզակ գայլեր, յափշտակելու, յօշոտելու, լափելու արհեստը կատարելագործած...: Քուրմերը գոնէ տգէտներն են երկրին ու օտարները, վարպետորդի մոգպետ մը կայ իրենց մէջ, որ Դենպետին քթէն ինկեր է. մէկ հատիկ մարդը, որ սահմանուած ըլլար Հայաստանին բեկորներէն նոր Պարսկաստան մը ձուլելու. ան ի՞նչ խորունկ մխաթ է, ճամբան՝ ինծի ըրած խոստովանութիւնները նշանակալից էին. եթէ իրեն մնայ, մէկ տարուան սէջ բոլոր եկեղեցիները՝ կռատուններու, խորաններն ալ՝ ատրուչաններու կը փոխուին, սակայն, ի՞նչ կ'ըսեմ, որո՞ւ հետ է գործը, ասդին Ղեւոնդ երէ՛ց մը կայ. ան հերի՛ք է քրիստոնէութեան խմոր. է՛հ... բայց ինծի ի՞նչ փոյթ. Յազկերտի խոստումը կը բաւէ. Հայաստանի ապագայ թագաւորութեան օրինաւոր ժառանգը՝ Սիւնեաց իշխանն է. աս խօսքը յայտնութիւն մըն է, որ մեր ազգային քաղաքականութեան մութ հորիզոնը կը լուսաւորէ. ա՛խ, ի՞նչ կ'ըլլար, եթէ մէկ քանի ծանրագլուխ ու հեռատես նախարարներուն պէս՝ Մամիկոնեա՛նն ալ հետեւէր իմ ուղղութեանս, ա՛խ, ի՞նչ կ'ըլլար, եթէ ան՝ կամայ թէ ակամայ՝ գործիք մը չըլլար մեր կղերին ձեռքին մէջ...: — Հիմա ես ի՞նչ կրնամ ընել մինակ, երբ ամբողջ երկիրը զինւորութիւն մըն է, քրիստոնէութիւնը պահպանելու համար. խեղճե՛ր, խեղճեր, չե՛ն գիտեր թէ ո՛րչափ կը սխալին չարաչար...: Վարդան՝ Չինացի, բայց պատուաստուած՝ Պարթեւի ու Պահլաւի հետ՝ Սահակ կաթողիկոսի թո՛ռն է, սիրական թո՛ռը, ատկէ՛ իր սպարապետութիւնը. (ԿԵ ԶՊԷ,

կընկդի Խորանի Տարածման Դեմ, յանկարծ «ստի կելլէ, յետո՛ւ ճիշտը կը քանի ս- կը գտնուի») բայց ինչո՞ւ շուարիմ. չէ՞ որ Յազկերտ լիազօր իշխանութիւն տուաւ ինծի, կառավարելու իմ երկիրս, իմ յարմար դատած վարչական ձեւով. չէ՞ որ ինծի հետ է մոգերուն բանակը...: Զօ՞րք, ս'ըչափ ուղեմ, կը դրկեն, նախարարնե՞րը. իմ կուսակիցներս՝ խոտելի թիւ մը չե՛ն կազմեր, արդ, ի՞նչ կը պակսի ուրեմն ինծի, օր առաջ պատկելու համար օրինաւոր, արդար իղձերս և յոյսերս, ի՞նչ բան, ի՞նչ. — կղերին աջակցութիւնը կը պակսի. այսինքն՝ ամեն բան... , սրովհետեւ, Հայոց երկիրը՝ կղերատան մըն է...: Ս'ըչափ բլուր՝ այնչափ մատուռ, սրչափ անտառ՝ այնչափ վանք. ս'ըչափ գիւղակ՝ այնչափ եկեղեցի. ահա՛ Հայաստան, չէ՛ն ու բարձր: (Կը նորի դարեւալ, ճշտը յաի յետի՛ն Դեմ, — ջը վեր Բարձրացուցած): Եւ սակայն, այս ամենը կարելի է յեղաշրջել. վաղը՝ վանքերը վարդապետներէն, մենաստանները՝ ճգնաւորներէն, եկեղեցիները՝ քահանաներէն կը պարպուին, հո՛ն պիտի խուժեն, մոգերու, քուրմերու երամակը. եկեղեցիները պիտի փոխուին մեհեաններու, ատրուշաններու, ուր սրբազան հուրը պիտի վառի և բոցավառէ նորընծայ հաւատացեալներուն հոգիները. տեսնեմ այն ատեն ս'ըր պիտի վազէ վազվզէ Ղեւոնդ երէցը, այդ գիշակեր սե՛ւ ագռաւը, որ արիւնի հոտէ՛ն միայն գիտէ գինովնալ. ս'ըր պիտի մնայ, ս'ըր այն ատեն, եպիսկոպոսներուն անտանելի թափո՛րը, և ս'ըր պիտի կըշտանայ, նայիմ, իրենց ամենակուլ փորը, ա՛խ, ե՞րբ, արդեօք ե՞րբ պիտի տեսնեմ այդ մարախներուն ջա՛րդը...: Տենդոտ տազնապով մը կ'ըսպասեմ այդ երջանիկ օրուան...: Թագադրութեանս հանդէսին օ՛րը

պիտի ըլլայ, այն օրը՝ Հայաստանի վերածնունդին արեւը պիտի ծագի. Յայտնութեան «Ե-րե-ի երկն Ն-ր ե-երկեր Ն-ր»ը պիտի կատարուի երկրիս այս մասին վրայ... : (Սեւ-ցնոր, Ե-ի շ-հ-ս-ս-ժ), Թա՛գս, Թա՛գրս, ահա՛ Թա՛գս, մարգրիտներով ու ադամանդով յեռուած Թագս. ահա՛ ծիրանիս, արքայակա՛ն ծիրանիս (աշտերը ի-շ-ր ղ-ը Բ-ց-ժ, յե-տերը կ'երկնցընէ օդին ճ-ջ, Բ-ն ղ-ը Բ-ն ե-լ-ո- յե-ով) այո՛, հ'ս, Սիւնեաց իշխան, Հայաստանի Թագաւո՛ր... : Եւ դրախտը պիտի նորոգուի, բոցեղէն սուրը պիտի ա՛լ չը փակէ անոր մուտքը, որովհետեւ այն օրը՝ կղերները մաքրուած պիտի ըլլան երկրիս երեսէն... : կղերները, կղերները, մարգկութեան փորձանքները, ժողովուրդին տղրուկները... (Դ-ր յե-ս-ի -ր-ի կ'ե-լ-է, յե-ր-ո-յ, +ի-չ ղ-ը Կ-ն-Դ-ր-ր-ժ, կը Ն-ր-ի, Ն-ոյն Ռ-ջ-ցին Դ-ր-ը կը շ-ր-ն-է, կը ց-ր-ի-ե-ր-է-ն Դ-ր-ը կը Դ-ր-ի-ն) ո՞վ է նայինք. (Զ-ն-ի-կ երեց Ն-եր- կը Դ-ր-ն-է)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

Վ Ա Ս Ա Կ , Զ Ա Ն Գ Ա Կ

**ԶԱՆԳԱԿ** — Ողջո՛յն, մե՛ծ իշխան սիսական :

**ՎԱՍԱԿ** — Օրհնեա՛ Տէ՛ր :

**ԶԱՆԳԱԿ** — Իշխա՛ն մեծ, գիտէ՞ք ինչո՛ւ տարածամ կը բախեմ ձեր Բարձրութեան պալատին դուռը .

**ՎԱՍԱԿ** — Ի՞նչ կայ որ, բարի՞ է .

**ԶԱՆԳԱԿ** — Բարի՛ . այսուհետեւ բարիք յուսալ՝ քացարձակ յիմարութիւն է, երկրի մը մէջ, ուր Ղեւոնդ քահանային պէս կապելու խենդեր, Մամիկոնեանի պէ՛ս ալ՝ չորգլուխ ապստամբներ կապրին :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Շո՛ւտ , պատմէ՛ , ի՞նչ նոր բան պատահեցաւ որ այդպէս . . .

**ԶԱՆԳԱ.Կ** — Ի՞նչ պիտի ըլլար . սոսկալի՛ ջարդ մը .

**Վ.Ա.ՍԱ.Կ** — (Սարսափահար) ո՞ւր , ի՞նչպիտի ջարդ .

**ԶԱՆԳԱ.Կ** — Անգեղ գիւղի եկեղեցին . պատարագի՛ ատեն :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — (Այլայլա՛ծ) Ի՞նչ կ'ըսես . ո՞ր եկեղեցին .

**ԶԱՆԳԱ.Կ** — Ղեւոնդ քահանան կը պատարագէր , մոգպետը փորձեց իր քուրմերուն հետ եկեղեցին մտնել ու անկիւն մը կրակը վառել :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Է՛ , յետո՞յ .

**ԶԱՆԳԱ.Կ** — Ժողովուրդը մուտաց , գլուխները տաքցան , ձայները հետզհետէ բարձրացան . պատարագիչը խորանէն ետ դարձաւ , նայեցաւ . քահանաներն ու ամբոխը՝ մոգերուն վրայ յարձակեցան , պատարագը դադրեցուցին . Ժամերգութիւնը լռեց , խուռն ամբոխին մէջ բիրեր կը խաղցընէին . արիւնը տեսայ , գաւթի՛ թը կը վազէր , հազիւ հանեցի զգեստս , փիլսն , փակեղ աւանդատո՛ւնը նետեցի , փախայ , հոս վազեցի եղելութիւնը հաղորդելու :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — (Տխար ու ճաշկոյտ) Մոգպե՛տը ո՞ւր մնաց , քուրմերէն շատ մարդ ջարդուեցա՞ւ .

**ԶԱՆԳԱ.Կ** — Ի՞նչ կ'ըսէք , մե՛ծ իշխան . արիւնը գաւթին մէջ կը վազէր կ'ըսեմ . աչուրներս դարձան , մոլորեցան . ալ ի՞նչ եղաւ , ի՞նչ վախճան ունեցաւ , չեմ գիտեր , սա՛չափ գիտեմ որ ամբողջ երկիրը կը տատանի ալեկոծ ծովի մը պէս .

**Վ.Ա.ՍԱ.Կ** — (Մտաւ Բերանին գանելով) Աս ի՞նչ ծանրակշիռ դէպք է , գիտե՞ս . երէ՛ց , հետեւա՞նքը . ո՞վ պիտի կրէ , եթէ ո՛չ , ե՛ս . ե՛ս , այո՛ , ե՛ս որ , ինչպէս գիտես , երկու մատղաչ որդիներս հո՛ն , Տիգրո՛ն ձգե-

ցի պատանդ, երաշխաւորելու համար խաղաղութեան վերահաստատուիլը, մոգերուն հոս տեղաւորուիլը. (Երկու յետեւի թափելով երեւեբը, լաւիճի յայնով ճշ) վախ, զաւակներս, Բարկէն, Բակս'ւր, ձեր անմեղ արիւնը... :

**ՋԱՆԳԱԿ** — Տէ՛ր իշխան, ի՞նչ ընելու է :

**ՎԱՍՍԱԿ** — Ինձի՞ կը հարցընես, երէ՛ց. ա՛խ, ի՞նչ ըսեմ ձեր դասակարգին. մէ՛կ անդամ չունիք, որուն վրայ կարենայ մարդ վստահիլ ու հաւատք դնել :

**ՋԱՆԳԱԿ** — Ե՞րբ, ի՞նչ բան վստահեցաք ինձի ու խարուեցաք. կաղաչեմ, իշխա՛նդ իմ, ամեն կղեր նոյնը չ'ըլլար. կա՛ն որ շահամո՛լ են ու կեղծաւոր, ինչպէս է Ղեւոնդ, կա՛ն ալ որ անձնուիրաց են ու անկեղծ :

**ՎԱՍՍԱԿ** — (Հեփեւել) ինչպէս որ դուք, այնպէս չէ՛ :

**ՋԱՆԳԱԿ** — (Ժողովել) Մե՛ծ իշխան, զիս երախտապարտ կ'ընէք, չտիազանց պատուելով :

**ՎԱՍՍԱԿ** — Երախտապարտ ըլլալէդ ի՞նչ օգուտ, կրնա՞ս զի՛ս ընել քեզ Երախտապարտ :

**ՋԱՆԳԱԿ** — Ի՞նչպէս

**ՎԱՍՍԱԿ** — Հաւատարմօրէն ծառայելով

**ՋԱՆԳԱԿ** — Մինչեւ ցմահ, պատրաստ եմ ձեզ ծառայելու :

**ՎԱՍՍԱԿ** — Լաւ ուրեմն, քեզի երդում ընել առաջարկել աւելո՞րդ է. չարդէն քանի՛ քանի պարագաներու մէջ վարժուած ես երդում ընելու. միայն սա կը յիշեցընեմ որ՝ եթէ գլուխ հանես ինչ որ հիմայ քեզի պիտի առաջարկեմ, աչքս լաւ նայէ՛, թագաւորութեանս բոլոր բարիքները պիտի վայելես, եթէ այս տագնապն ալ անցընենք... :

**ՋԱՆԳԱԿ** — Տէ՛ր իշխան, ուրիշ բան չեմ ուզեր,

բայց միայն քու ողջութիւնդ ու երկրիդ խաղաղութիւնը, այն ատեն հա՛րկաւ բան մը կ'ըլլանք մենք.

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Այն ատե՛ն. մոգպետէն անմիջապէս ե՛տքը պիտի դաս դուն. Մայր-Ատրուշանին աւագքո՛ւրմը պիտի կարգեմ քեզ.

**ԶԱՆԳ.Ս.Կ** — Շնորհապա՛րտ կ'ըլլամ, Սիւնեա՛ց իշխան,

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Գիտե՞ս ի՛նչ պիտի ընես, հիմա:

**ԶԱՆԳ.Ս.Կ** — Տէ՛ր իմ.

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Ինչպէս որ Տիգրոնի արքունիքը յաջողած էիր շնորհք գտնել Յազկերտէն, ինչպէս որ մե՛զ ալ համոզեցիր բանտին մէջ ուրանալու, և այդ կերպով մեր հայրենիք վերագարծէն միջնորդ եղար յւ պատճառ, ա՛յնպէս ալ հոս, աւելի՛ կարեւոր ու կենսական գործ մը պիտի կատարես:

**ԶԱՆԳ.Ս.Կ** — Տէ՛ր իշխան, շուտ ըսէ՛ք հանդարտիմ, սիրտս կը տրոփէ. երկու բառով պարզեցէ՛ք, ես ալ մէկ բառով պատասխանեմ, այո՛ կամ ո՛չ.

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Ո՛չ պատասխանել գործիս չիգա՛ր.

**ԶԱՆԳ.Ս.Կ** — Այո՛ ըսենք, բայց նախ դուք ըսէ՛ք նայինք ի՛նչ է.

**Վ.Ս.ՍԱ.Կ** — (Շո՛ւրջը նայելով, լեջօրէն, ճարը շքեղութեամբ հարմարեցնելով) այս պատերն անգամ ականջ ունին, զգո՛յշ, զգո՛յշ.

**ԶԱՆԳ.Ս.Կ** — Մի՛ ճաթեցնէք, Տէ՛ր իշխան, շուտ ըսէ՛ք.

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Ըսելիքս երկու բառ է — վարդան ու Ղեւոնդ — երկու յատուկ անուաներ, հասարակաց դարձած. այդ երկու անուաները կրնա՛մ վերցնել երկրիս երեսէն:



**ՋԱՆԳԱԿ** — Ի՞նչպէս վերցնել, ըսել կ'ուզէք, ջնջել  
**ՎԱՍՍԿ** — Չը հասկցա՞ր. ասկէ աւելի պարզ կը

խօսուի՞ :

**ՋԱՆԳԱԿ** — Հասկցայ, հասկցայ (գլխի վերջը)  
այս երկու ճիւղերէն Հայաստանը փրկել չէ՞ք ուզեր  
ըսել :

**ՎԱՍՍԿ** — Այո՛, այո՛, բայց պիտի կրնա՞ս :

**ՋԱՆԳԱԿ** — Ատկէ դիւրին... (կը խորհի) բայց ատկէ  
ալ դժուար ի՞նչ կայ :

**ՎԱՍՍԿ** — Ատ եղա՞ւ հիմայ, ի՞նչ ըսել կ'ուզես :

**ՋԱՆԳԱԿ** — Ըսել կ'ուզեմ թէ՛ ինչ որ մարդոց  
համար դժուար է, Չանգակին համար դիւրին է :

**ՎԱՍՍԿ** — Բայց չպիտի՛ ուշանայ :

**ՋԱՆԳԱԿ** — Ե՛րբ կ'ուզես որ ըլլայ :

**ՎԱՍՍԿ** — Այսօրուրնէ մինչեւ վաղը, առտուն  
կանուխ, կէսօրուան մնայ՝ չըլլա՛ր, իրիկունը՝ բնա՛ւ  
չըլլար :

**ՋԱՆԳԱԿ** — Ուրեմն այս գիշեր ընելու է, այս  
գիշեր :

**ՎԱՍՍԿ** — Ալ չե՛մ գիտեր ես. քու գիտնալիք  
բա՛նդ է :

**ՋԱՆԳԱԿ** — Ի՛մ գիտնալի՛քս... ա՛խ, եթէ ձեռ-  
քէս գայ, վայրկենաբար կ'անհետացնեմ, երկուքն ալ  
անդէ՛նը կը ճամբեմ... :

**ՎԱՍՍԿ** — Գնա՛ շուտով, խորհէ՛, ճարը փնտռէ՛,  
գտի՛ր. վերջացո՛ւր :

**ՋԱՆԳԱԿ** — (Խնայելով) — Մնա՛յք խաղաղու-  
թեամբ, Տէ՛ր իշխան (կը գնայ) :

**ՎԱՍՍԿ** (Միշտ) — Եթէ կրնայ... ի՞նչ հրաշալի  
գիւտ մը կ'ըլլայ. բայց չեմ հաւտար որ դիւրին գիւ-  
րին գլուխ կրնայ հանել. Ղեւոնդը, երկուքն ալ ան-

դէնը զրկել. հրա՛շք կ'ըլլայ, հրա՛շք. ու այդ հրաշքը կատարողը՝ հրաշագործ սուրբ մը, Աստուծո՛յ տեղ պիտի պաշտեմ ես... (Գործնական հարցեր, որոնք յայտնի են լատին, երկու հարցերի պատասխանները են ինչ են, որոնք են ինչ են, որոնք են ինչ են):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

ՎԱՍԱԿ, ՄՈԳՊԵՏ, ԵՐԿՈՒ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ

**ՎԱՍԱԿ** — Աս ի՞նչ է, ո՞վ կը բերէք:

**ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ** — Մոգպետը. (որոնք կ'ըլլեն):

**ՎԱՍԱԿ** (Երկու յետեւումն ինչ ինչն առաջ) — Աստուած իմ, ի՞նչ կը տեսնեմ:

**ՄՈԳՊԵՏԸ** (Գլուխը սուր զարկով զննելու առաջ՝ որոնք հանելով պատասխաններ ինչ են, լատին յայտնի են) — Իս կը տեսնեմ, ի՞նչ...:

**ՎԱՍԱԿ** (Գործարարանով հարկնալով) — Թողու թի՛ւն, բի՛ւր թողու թի՛ւն, մե՛ծ մոգպետ, ի՞նչ դժբաղդու թի՛ւն է:

**ՄՈԳՊԵՏ** — Դժբաղդու թի՛ւն չէ, դա՛ւ է դա՛ւ. (Գլուխը վեր վեր բարձրացնելով «- կերտ») Դաւա՛ճան, զիս յատկապէս Հայաստան բերիր որ գլուխս ուտեմ, ու իմ սիրական մոգերս սպաննել տաս, հա՞...:

**ՎԱՍԱԿ** — Ի՞նչ կ'ըսէք, հա՛յր մոգպետ, ի՞նչ կ'ըսէք. մի՛թէ ես գիտէի՞, կրնայի՞ գիտնալ, կամ կ'ուզէի՞ որ այս ազատքը պատահէր. մանաւանդ ո՞րքան կը ցաւիմ (կը +ռշշէ):

**ՄՈԳՊԵՏ** — Շնորհակալ եմ, վայրենի քահանաներուդ ձեռքը մատնեցիր (կը «կիտ բարձր-յայն լալ) քուրմերս ջարդեցին, զիս վիրաւորեցին, տե՛ս, տե՛ս,

(Յեռե իւրեւե իւր իւր) քանի՛ քանի՛ վերքեր բացին  
գլխուս վրայ, ա՛հ, գլխուս . . . :

**Վ.Ս.ՍԱ.Կ** (Կարեկցող շեշտով ճշ) — Ան ո՞ր ապիրատը  
յանդգնեցաւ . . .

**ՄՈԳՊԵՏԸ** — Ինծի՞ կը հարցնես, չե՞ս գիտեր :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Կ'աղաչե՛մ, ըսէ՛ք, ո՞ր ապիրատը :

**ՄՈԳՊԵՏԸ** — Ղեւճնդը, Ղեւճնդը :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Չկրցա՞ք գետին փռել այդ անօրէնը .

**ՄՈԳՊԵՏԸ** — Ո՞վ պիտի փռէր, մե՞նք, (յանկարձ  
դեմք ինքեմ, սպանակեց) բայց այսպէս չըլլար, պէ՛տք  
է որ գրեմ Գուռը, պատմեմ իրողութիւնը. հրաժա-  
րեցա՛յ ես այս պաշտօնէս, իմ տեղս ուրիշներ թող  
գան, անո՛նք յաջորդեն, որոնց գլուխը գեռ չէ կե-  
րեր հարուածը. ես կերայ, կերածս կը բաւէ, քիչ  
մըն ալ ուրիշներ թող ճաշակեն առաքելութեան  
պատուին ըր . . . :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Կ'անցնի՛, կ'անցնի՛, հա՛յր մոգպետ,  
ա՛յս ալ կ'անցնի՛ :

**ՄՈԳՊԵՏ** — Ո՛չ, ո՛չ, պէտք է որ գրեմ Գուռը,  
պէ՛տք է մանրամասնօրէն տեղեկագրեմ այս բարբա-  
րասութիւնները. Արքայից Արքային պէտք է գրեմ  
յատուկ նամակով մը . . . :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Հա՛յր մոգպետ, հա՛յր մոգպետ . . . :

(Առանձին, ցած յայնով) այն ատեն արե՛ւը պիտի խա-  
ւարի մատղաշ զաւակներուս : (Բարձր-յայն) Բան մը մի՛  
գրէք, ե՛ս, ե՛ս անձամբ պիտի լուծեմ վրէժը, լա՛ւ  
գիտցած ըլլաք :

**ՄՈԳՊԵՏ** (Եանկարձ Բանկեմ) — Բայց ի՞նչ իրաւուն-  
քով յարձակին մեր վրայ :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Անոնք պիտի պատժուին, վատա՛հ  
եղէ՛ք :

**ՄՈԳՊԵՏ** — Ո՛ւր էր թէ . . . (տ՛լ ըն իր՝-ը շըր՝-ն-  
կէլ, շո՛ւնը կը բո՛ւն-ի, կը «կտի գէշ գէշ հաղալ»):

**ՎԱՍԱԿ** — Քիչ մը հանգչէի՛ք, հայր մոգպետ:  
(Դրո՛ւն «սո՛ւն-յայն» շեր՝ կը հո՛նն Ղե՛-նդ երեցը, երե՛ն  
Վարդա՛ն Մ-օկի՛նե՛անը):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ .

ՆԱԽՈՐԴՆԵՐ, ՂԵՒՈՆԴ, ՎԱՐԴԱՆ

**ՂԵՒՈՆԴ** — Ողջո՛յն, Սիւնեաց իշխա՛ն:

**ՎԱՐԴԱՆ** — Բարե՛ւ, Սիւնի՛:

**ՎԱՍԱԿ** (Քիչն ասկէն) — Օրհնեա՛ տէր, բարի  
եկաք: (Ղե՛-նդ ու Վարդա՛ն կ'առաջանան ու յանկարծ կը  
սե՛նեն անկէ՛նը կծկո՛ծ մոգպետը, ու իւրեքն անկած՝ ի-  
ժուս ի՛ժուս կը նայի):

**ՂԵՒՈՆԴ** (Արհամարհոօր + մծիծաղով մը) — Աս հոս ի՞նչ  
գործ ունի:

**ՎԱՐԴԱՆ** — Դեռ ո՛ղջ է մնացեր:

**ՄՈԳՊԵՏ** — Ի՛նչ, կ'ուզէի՞ք որ մեռնէի:

**ՎԱՍԱԿ** — Քա՛ւ, լիցի, հա՛յր մոգպետ:

**ՂԵՒՈՆԴ** (Հեգնելով) — Հայր մոգպետը կրակա-  
հար եղած ըլլալու է որ շատ հեռու քաշուած է:

**ՄՈԳՊԵՏ** — Կը զարմանա՛մ, երէ՛ց, ձեր վրայ:

**ՂԵՒՈՆԴ** — Ինչո՞ւ կը զարմանաք:

**ՄՈԳՊԵՏ** — Թէ ի՛նչպէս քահանայ եղած էք:

**ՂԵՒՈՆԴ** — Ինչէ՞ն:

**ՄՈԳՊԵՏ** — Եթէ քահանայ չըլլայիք, անպատ-  
ճառ հրոսախմբի մը պետը պիտի ըլլայիք . . .:

**ՂԵՒՈՆԴ** — Եթէ հարկ ըլլայ, ինչո՞ւ չըլլանք.  
մեր պաշտօնը չէ՞ պաշտպանել մեր հօտը՝ օտարամուտ  
գողերէ, գայլերէ:

**ՄՈԳՊԵՏ** — Բիրերո՞վ :

**ՂՆԻՈՆԴ** — Աղեղո՞վ ալ, նետո՞վ ալ, սուրո՞վ ալ  
կը պաշտպանենք, եթէ հարկ ըլլայ :

**ՄՈԳՊԵՏ** (վասիկն նայելով, բռնաբռնած) — Կը  
դիտէ՞ք, Սիւնեաց իշխանն, ո՞րչափ գոհ է :

**ՎՍՍԱԿ** — Կատակ կ'ընէ, հա՛յր մոգպետ :

**ՄՈԳՊԵՏ** — Կատակ... բիրերու հարուածներով  
կատակ կ'ըլլայ. Հայաստանի մէջ գործադրուող կա-  
տակ մըն է արդեօք :

**ՎՍՐԴԱՆ** — Եթէ կատակ չէ՛, իրականութիւն  
թո՛ղ ըլլայ, ի՞նչ կ'ըլլայ. (հեղուկեղե բռնաբռնած) Մո՞գ-  
պետ, մոգպետ, ասդին նայէ՛, ասա կ'ազդարարեմ  
քեզի. եթէ այսօրուրնէ, մնացած քուրմերդ ալ հետդ,  
Տիգրոնի ճամբան չի բռնես, գիտցած ըլլաս որ այս  
գլխու վէրքերը շատ պիտի փնտռես. ա՛լ չեն վիրա-  
ւորեր քեզ, անհող եղի՛ր, մէկ անգամով հաշիւդ կը  
փակեն :

**ՎՍՍԱԿ** — Այսպէ՞ս խոստացանք Արքայից Ար-  
քային :

**ՎՍՐԴԱՆ** — Արքայից Արքան՝ մեզ ձերբակալե-  
լու, բանտարկելու, մեր հաւատքը բռնի ուրանալ  
տալո՞ւ համար կանչեց Տիգրոն, հէ՞, ըսէ՛ք նայիմ,  
(աչքերէն կրակ ցայտեով) մոռցա՞ք այս ամէնը :

**ՂՆԻՈՆԴ** — Յատկապէս եկած ենք հոս վերջնա-  
կանապէս ազդարարելու որ փութաս երկրէն հեռա-  
ցնել այս պատուհասները, եթէ ո՛չ, դուն գիտես...  
ասա՛ կ'ըսեմ, ժողովուրդին հետ խաղալ չըլլա՛ր... :

**ՄՈԳՊԵՏ** (հլուիւ շարժելով շայրոյթով) — Ի՞նչ ըսել  
կ'ուզեն :

**ՂՆԻՈՆԴ** — Լռէ՛, լռէ՛, ըսել կ'ուզենք, շո՛ւտ,  
շո՛ւտ Տիգրոնի ճամբան բռնէ՛, հա՛յր մոգպետ, հոն

գնա՛, առատ առատ կրակ վառէ՛, Միհրի փա՛ռքը նուազէ՛, ի՛նչ կ'ուզես ըրէ՛. հոս այդպիսի փորձերը՝ փորձանքի կը հանդիպին. կ'երթաս հոս տեսածներդ ու կրածներդ կէտ առ կէտ կը պատմես Արքայից Արքային :

**ՄՈԳՊԵՏ** — Սիւնեա՛ց իշխան, ա՛լ հոս մնալու ժամանակ չունիմ, ո՛չ ալ համբերութիւն, ժամ առաջ իս ճամբայ դնելու նայէ՛ :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Տե՛ղ չպիտի երթաս, պալատիս մէջ պիտի նստիս, ուտես, խմե՛ս, հրամայե՛ս :

**Վ.Ա.ՐԳՍ.Ն** (վասակէն) — Միայն քեզի՛ սակայն, պալատէդ դուրս հրամայել՝ կը նշանակէ մարմաջը ունենալ բիրի հարուածներս՝... Շատ աղէկ, հո՛ս մնայ թո՛ղ, կ'ըսես, ի՞նչ պիտի ընէ :

**ՄՈԳՊԵՏ** — Ի՞նչ պիտի ընեմ, Միհր-Աստուծուաքարողչութեամբը պիտի պարապիմ :

**Ղ.ՆԻՌՆԳ** — Այո՛, կրնաս ուզածիդ չափ պարապիլ ամէն տուն. բայց ո՛չ հոս, ուր ճշմարիտ, այսինքն ձեր պաշտած Միհրը ստեղծող Աստուծոյ երկըրպագուներ միայն կը գտնուին :

**ՄՈԳՊԵՏ** — Միհրը բերաննիդ առնելու մա՞րդ էք դուք :

**Ղ.ՆԻՌՆԳ** — Ի՞նչ կայ սր, Միհր ըսածդ՝ մեր ամէն օրուան ծագող ու մարող արեւը չէ՞ :

**ՄՈԳՊԵՏ** — Ծագելով ու մարելով ի՞նչ կ'ըլլայ :

**Ղ.ՆԻՌՆԳ** — Ծնած ու մեռած կ'ըլլայ :

**ՄՈԳՊԵՏ** — Ի՞նչ մնաս ունի :

**Ղ.ՆԻՌՆԳ** — Բնա՛ւ երբէք (ԸԵՔԵԼՂ). միայն թէ Մողպե՛տ, զմեզ քու կոյր խուժա՞նդ կը կարծես որ հաւատանք այդ կեղծ ու պատիր խօսքերուդ :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Տե՛ր Հայր, շատ կը չափազանցէք :

**ՎԱՐԳԱՆ** — Երբէն ի վեր Մոզպետին պաշտպանութիւնը ստանձնած էք :

**ՂՆԻՈՆԻ** — Մոզպետին փաստաբանն է :

**ՄՈԳՊԵՏ** — Սիւնեաց իշխանն, դահլիճիդ օդը զիս կը նեղէ, շուտով, շուտով, առանձնանամ պիտի . . . :

**ՎԱՍԱԿ** — (Ձեռով) կը հանգչի՞ք :

**ՂՆԻՈՆԻ** — (հեգնելով, վարդաշէն) հօրեղբայրն է, հօրեղբայրը :

**ՎԱՍԱԿ** — Ծաղրեցէ՛ք, ծաղրեցէ՛ք, վերջը կը տեսնենք . (դրան առջեւ կ'երևայ կը կանչէ) եկէ՛ք, եկէ՛ք, հայր Մոզպետը փոխադրեցէ՛ք հանգստարանը . թող քիչ մը շունչ առնէ, քնանայ . . . (Երկու սարկաներ կախան պարտաւրէ կը վերցնեն, դահլիճը կը ծան վասակ, վարդան ու Ղեւնդ, վասակ ճամբուով ճակարիւրտութեամբ) է՛, հիմայ խօսեցէ՛ք նայինք, ի՛նչ է մտքերնիդ :

**ՎԱՐԳԱՆ** — Բան մը չունինք խօսելու . նոր բան չէ՛ այս . Պարսկաստանի մէջ, երբ Յազկերտի սպանալիքներէն ստիպուեցանք ուրանալ, ո՛վ սեւ ժամ, կարծեմ թէ երեւո՞յ էր . մինչդեռ հիմայ կը տեսնեմ որ հոգիս՝ մարմինս՝ փարած են Մոզպետին ու իր քուրմերուն . . . :

**ՎԱՍԱԿ** — Դուք այնպէս գիտցէ՛ք, վասակ մատնի՛չ է, ազգուրանց է կարծեցէ՛ք, հոգ չէ՛ . վաղը, տեսնենք հետեւանքը ո՛վ կը կրէ . . . : կը ցաւիմ, Մամիկոնեանն, որ դուն, հայրենիքը, եկեղեցի՛ն կը քանդես քու այդ խելքովդ . . . :

**ՎԱՐԳԱՆ** — Ես կը քանդեմ Սիւնի՛, ե՞ս թէ դուն :

**ՂՆԻՈՆԻ** — Եկեղեցին չի՛ քանդուիր, ո՛չ վասակի դաւերով, ո՛չ ալ Յազկերտի բանակներով :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Բայց կը քանդուի լսկ մէ՛կ Ղեւոնդիանսով :

**ՂԵՒՈՆԳ** — (որո՞հարէն) Ի՞նչ ըսել կ'ուզես, ի՞նչ ընէի, յանձնէի՞ եկեղեցին, թոյլ տայի՞ որ կրակի պաշտամունքը կատարէին :

**Վ.Ս.ՐԳԱՆ** — Ժողովուրդը թոյլ կուտա՞ր :

**ՂԵՒՈՆԳ** — Ի՞նչ օգուտ, Մոզպէ՛տը սատկելու էր :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Տէ՛ր Հայր, այդ ճամբան անդո՞ւնդը կը տանի . . . .

**Վ.Ս.ՐԳԱՆ** — Խնդրեմ՛, ըսէ՛ մեզի, ո՞ր ճամբան կը տանի դէպի կեանք, ուրանա՞լը, ուրանա՞լը :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — (Հեղինակը խորհրդաւոր «ւրջը դէմք» ճշ) Պիտի ստիպուիմ մերկապարանոց ընել ամեն բան. հոս, մարդ չըկայ : Հոս ամեն բան կրնանք իրարու յայտնել. բայց կը խնդրեմ որ չը բռնկիք, որովհետեւ ահաւոր յայտնութիւններու առջեւ պիտի դնեմ զձեզ :

**ՂԵՒՈՆԳ** — (հեղինակ) Ատ ի՞նչ յայտնութիւններ են արդեօք :

**Վ.Ս.ՐԳԱՆ** — Բնական է թէ՛ սովորական յայտնութիւններ չե՛ն :

**Վ.Ս.ՍԱ.Կ** — Ո՛չ ալ անսովոր. իրականութիւն են. (որո՞հէն կ'ելլէ, բան ճշ փորձուի ճշ յիշող, մեկ երկու անգամ շրջան կ'ընէ սրահին մէջ, որտեղուն առջեւը կեցած՝ կը նայի մերջողէս, կանգ կ'առնէ արջանի ճշ առջեւ, յետոյ Ղեւոնդին «Վարդանին աղջկը» հո՛ս եկէ՛ք, հոս, (Ղեւոնդ «Վարդան դեպի հոն կը դիմէ») նայեցէ՛ք, լաւ նայեցէ՛ք, մանաւանդ դո՛ւն, Մամիկոնեա՛ն, ո՞վ է այդ վեհափա՛ռը :

**ՂԵՒՈՆԳ** — Ես բա՛ն մը չեմ հասկնար այդ խօսքերէդ :



**Վ.Ս.ՍՍ.Կ** — Հիմայ կը հասկնաք, քիչ մը համբե-  
րեցէ՛ք միայն:

**Վ.Ս.ԲԳ.Ս.Ն** — Բայց Սիւնի՛, չըլլա՛յ թէ Մոգպե-  
տին վէրքը քու ըղեղիդ ազդած ըլլայ. վէրքը՝ Մոգ-  
պետին գլուխը, բռնկողը՝ քու ըղեղդ:

**Ղ.ՍԻՌՆԳ** — Զարդուողները՝ մոգերը, կատողը՝  
դուն (վառահին ուղեւի):

**Վ.Ս.ՍՍ.Կ** — Ո՞վ կ'ուզէիք որ ըլլար, ինչ գատ:

**Վ.Ս.ԲԳ.Ս.Ն** — Բայց ինչո՞ւ...

**Վ.Ս.ՍՍ.Կ** — (Երկուսին ալ) Դուք հո՛ս նայեցէ՛ք,  
(ցոյց տալով արջնը). նայեցա՞ք ո՞վ է, ճանչցա՞ք:

**ԵՐԵՈՒՅՆ ԱՆ** — Է՛, ի՞նչ պիտի ընենք. սեպէ  
թէ ճանչցանք:

**Վ.Ս.ՍՍ.Կ** — (Արջնին առջեւ շնորհիւ պառպտելով)  
Դո՛ւն, վեհափա՛ռ ուրուական իմ նախահօրս. դուն  
որ դողացուցիր Տարօնը՛, վրդովեցիր անգրդուելի  
Տրդա՛տը, ապստամբեցուցիր Սիմ լեռը, Ողկան ամ-  
րոցը քաշուած, ահ ու մահ սփռեցիր չորս դիզ,  
դո՛ւն, Սղո՛ւկը, դո՛ւն Հայկազո՛ւն նահապետ...:

**Վ.Ս.ԲԳ.Ս.Ն** (Քնկ, ցած յայնով) Սղո՛ւկ, օտար չէ  
ականջիս այդ անունը:

**Վ.Ս.ՍՍ.Կ** — (Հարուստիւ լի, ցոխարկաւ) Այդ քու  
նայուած քիդ մէ՛ջ կը կարգամ ահաւոր գաղանխ՛ք մը,  
ծրարուած հին վրէժ մը...:

**Ղ.ՍԻՌՆԳ** — (Վարդնին ուղեւի) Կեցի՛ր նայինք  
ո՞ւր պիտի տանի զինք իր բանգագուշա՛նքը. մոգ-  
պետէ՛ն ազդուեր է, մոգպետէ՛ն, չի՛ մեղադրուիր:

**Վ.Ս.ԲԳ.Ս.Ն** — Սիւնի՛, հերի՛ք երկրպագես ար-  
ձանիդ, ա՛խ ի՞նչ ըսեմ այն Տիզբոնի արքունիքին  
որ քեզ վարժեցուց ատոր. կուռքերուն առջեւ  
ծունգի գալով գալով՝ հիմայ ելեր արձաններո՛ւն առ-  
ջեւ կը ծռիս:

**Վ.Ս.ՍԱԿ** — Ես արձանին չեմ, արձանին տէ՛րը  
կը հարցափորձեմ, Մամիկոնեա՛ն, գիտե՞ս, ո՞վ է տէրը :

**Վ.Ա.ՐԴԱՆ** — Խօսէ՛, մի՛ քաշուիր, ի՞նչ ըսել  
կ'ուզես, բայց խօսէ՛ :

**Վ.Ս.ՍԱԿ** — Բաց խօսի՛մ. . . ի՞նչ պարզե՞մ հիմայ. . . :

**Վ.Ա.ՐԴԱՆ** — Ծո՛ւտ, շո՛ւտ, ի՞նչ կեցեր ես,  
թափէ՛ թոյնդ :

**Վ.Ս.ՍԱԿ** — Այո՛, թո՛յն է թոյն, որ ըղեղս կ'այրէ .  
ջիղերս, հոգի՛ս կը զգեսնէ . մո՛ւթ է աչքիս աշխար-  
հը . ո՛հ, քանի՛ յառեմ աչքերս այս վեհաշուք արձանին :

**Վ.Ա.ՐԴԱՆ** — Մի՛ պղծեր վեհաշուք ածականը .  
մենք, այո՛, կը ճանչնանք Սղո՛ւկը . հասարակ ոճրա-  
գո՛րծ մըն էր, ապստամբ մը :

**Վ.Ս.ՍԱԿ** — Հերոսի մը յիշատակը կ'անարգես,  
Մամիկոնեա՛ն . ան՝ Չինէն չեկա՛ւ . Այրարատի առ-  
իւծն էր ան :

**Ղ.ՆԻՌՆԴ** — Այո, գիւղերուն կեղեքողը, լեռնե-  
րուն աւազակը :

**Վ.Ս.ՍԱԿ** — Եթէ Սղուկ աւազակ մըն էր, հապա  
ի՞նչ էր Մամգուն, չը խօսի՞ք Մամիկոն :

**Ղ.ՆԻՌՆԴ** — Մամգո՛ւն, ո՞վ էր Մամգո՛ւն. . . :  
Սիւնի՛ քու դատապարտութիւնդ է այդ անունը .  
այո՛, Չինայի մըն էր ան, փախստական իշխան մը,  
բայց ան՝ Վարդանի նման թո՛ւ մը պարզեւեց ազ-  
գին, մեծ սպարապետ մը . Մամիկոնեան նախարա-  
րութի՛ւնը ստեղծեց . իսկ դո՛ւն, Սիւնեաց իշխա՛ն,  
Սիսակներ, Գեղամներ, Արմայիսներ ու Արամներ՝ ու-  
նեցար քեզի նախահայր . բայց ափսո՛ս, ուրացա՛ր ա-  
մենքը .

**Վ.Ա.ՐԴԱՆ** — Նախահայրերը մեկդի՛ . ա՞յդ էր ը-  
նելիք յայտնութիւնդ, Սիւնի՛, բայց ատիկայ յայտ-

նութիւն մը չէ՛, այլ հասարակ պատմութիւն մը .  
դուն ջանա՛ որ պատմութեան մէջ սեւ էջ մը չը բանաս :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Ի՛նչ սեւ էջ պիտի բանամ ես . քանի  
որ գործերս յայանի են . մուկերօն ու կրքոտ կղերի  
մը, կոյր ու կատաղի զօրականի մը ձեռքը մատ-  
նուած ժողովուրդը կ'ողբամ ես . ժողովուրդը, որ  
կը կորսուի . . . :

**Ղ.ՆԻՌՆԳ** — Ժողովուրդը պիտի թօթուէ Պարս-  
կին լուծը . ժողովուրդը պիտի վռնտէ, դուրս հանէ  
երկրէն քուրմէ՛րը, պիտի ջարդէ, պիտի կոտորէ,  
պիտի արի՛ւն թափէ . հայրենիքը՝ մարտի դաշտ, ազ-  
գը՝ ազգմիկ . ահա՛ ժողովուրդը, որ ի՛ր արիւնով  
նորէն պիտի գնէ իր ազատ կրօնքը, իր սուրբ հա-  
ւանքը . . . :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Ո՛ւր էր թէ չըլլար այդ Ս . Հաւանքը :

**Ղ.ՆԻՌՆԳ** — Զ'սեննայի՛նք Սիւնեաց նահանգ մը,  
ո՛չ ալ վասակ մը, Հայոց պատմութեան մէջ . . . :  
(Դա՛ւը կը շարնուի) :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — (հռն , կը դիմե , դա՛ւը կե՛ս ինչ կը բռնայ ,  
քա՛նք ինչ , յե՛րոյ կը դա՛ւը , Դա՛ւը կը դիմե՛ս + լե՛ւզ , Ինչ-  
քէն կը ինչի՛նչ , յե՛սերը շէ՛ւզ) Վա՛յ նզովքի արմատ ,  
Չանգակ երէ՞ց ես , ի՛նչ ես , ա՛յսչափ ճիւղաղային  
յղացում , հիմա՛յ , հիմա՛յ , երկուքը մեկտեղ վերջա-  
ցընե՛լ . . . ո՛ւր էր թէ . . . (կա՛մոյ կա՛մոյ կը ճօրենայ Ղ.Ն-  
նի՛րին ու վա՛րդաբնին , + լե՛րնին կը նստի) :

**Վ.Ա.ՐԳ.Ա.Ն** — Ո՞վ էր :

**Վ.Ա.ՍԱ.Կ** — Ո՛չ ոք :

**Ղ.ՆԻՌՆԳ** — Վերջապէ՛ս , Սպարապետ , օգուտ  
չունի , մենք երթա՛նք , այս մարդը՝ ուխտեալ արե-  
ւապա՛շտ մըն է :

**Վ.Ա.ՐԳ.Ա.Ն** . — Ազգին կամքին դէմ թումը մը , մեր

բոլոր ծրագիրները ջուրը ձգելու սահմանուած միտք մը . . . :

**Վ.Ս.Ս.Կ** — Ո՛չ այս, ո՛չ այն, խեղճեր խեղճեր, կ'արգահատիմ ձեր վրայ, ձեր հետապնդած ցնորքներուն վրայ . . . :

**ՂԵՒՈՆԳ** — (չարացի) Ա՛լ հերի՛ք է. ահա՛ վերջին խօսքս, Սիւնեա՛յ իշխան, դուն քանի որ ազգակործան քաղաքականութիւն մը բռնելը կը քալես, չէս կրնար այսուհետեւ միջամտել մեր գործերուն. դուն մեկդի քաշուէ՛ ուրիմն. եթէ օգտակար չես կրնար ըլլալ, գոնէ վնասէդ ազատ կը մնանք. (դու չուզ վարդնէն) Ե՛լ, Ե՛լ, Սպարապետ, երթանք, երթանք ժամանակը սո՛ւղ է, սո՛ւղ, գործել պէտք է, (Կը Իրնէն Դուրս ելլել. Վասի կը Բնէ կը կեցնէ դերեւ+) :

**Վ.Ս.Ս.Կ** — Կեցէ՛ք, Կեցէ՛ք, ո՞ւր կ'երթաք. մոզպետը ո՞ւր թողում ես, ո՞ւր, անգութներ, կաթողիկոսով, եպիսկոպոսներով, վարդապետներով ու քահանաներով, նախարարներով ու ցեղապետներով, ինծի դէմ հաւաքական դաշնակցութի՛ւն մը կազմած էք. ինծի՛ դէմ, ինծի՛ դէմ, որ երկու զաւակներս պատանդ եմ ձգեր Յազկերտի քով. դուք հոս նախճիրներ գործեցէ՛ք, Վասա՛կ թող տուժէ, այնպէս չէ՞ :

**Վ.Ս.ՐԳ.Ս.Ն** — Քեզի ո՞վ գրդեց հոն պատանդ թողուլ զաւակներդ :

**Վ.Ս.Ս.Կ** — Ո՞վ կրնար դէմ դնել Յազկերտի կամքին. այն պարագային որո՞ւ մտքէն կանցնէր թէ՛ Ղեւոնդ երէց մը պող ջուր պիտի լեցընէր մեր եփած կերակուրին մէջ :

**ՂԵՒՈՆԳ** — Ղեւոնդ անսաց իր խղճի ձայնին. ան՝ Քրիստոսի պաշտօնեայ, ըրաւ ինչ որ չորսուկէս դար

առաջ ըրած էր Փրկիչը, Երուսաղէմի տաճարին մէջ, խարազանելով լուծայափոխները. Քրիստոս՝ խարազանով վռնտեց, իսկ Քրիստոսի խոնարհ պաշտօնեան բերելով դուրս հանեց Ս. Տաճարէն պիղծե՛րը, Չարին արբանեակները, Կրակին պաշտօնեանե՛րը չը հաւնեցա՞ր, Սիւնեաց իշխան:

**Վ.Ս.ՍԱԿ** — Իմ չը հաւնելէս ի՞նչ մնաս ունեցաք, քանի որ արար աշխարհ հաւնեցաւ. ժողովուրդ ու կաթողիկոս՝ ամէ՛ն ըսին ձեր ըսածներուն:

**Վ.Ս.ՐԴՍ.Ն** — Թողո՛ւնք, Սիւնի՛, Թողո՛ւնք այդ անձնական վէճերը, կ'աղաչեմ, կրնա՞ս ինծի բացատրել թէ՛ ի՞նչ զօրաւոր պատճառներէ բռնադատուած՝ այս քաղաքականութիւնը կը բռնես. ունի՞ս գիտցած մը, մեզի՛ ալ հաղորդէ՛, թերեւս մե՛նք ալ համամիտ ըլլանք:

**Վ.Ս.ՍԱԿ** — Ի՞նչ հաղորդեմ, քանի որ մտքերը կուրցե՛ր են. քանի որ կղերը՛ քիթը խոթեր է գործին մէջ:

**ՂԵՒՈՆԴ** — Մեզք որ կղերին յարգը չե՞ս գիտեր. ու դեռ չե՞ս հասկըցեր թէ՛ ժողովուրդ մը կառավարելու առաջին պայմանը՝ կղերը շահիլ է, առանց կղերի զրօ՛ է նախարարութիւնը, մեռե՛լ է իշխանութիւնը...:

**Վ.Ս.ՐԴՍ.Ն** — Կղերագուրկ ժողովուրդ մը՝ կը նմանի գլխու մը՝ որ աչք չունի, երկրի մը՝ որ արեւ չունի, ձիու մը որ սանձ չունի...:

**Վ.Ս.ՍԱԿ** — Աչք, արեւ, սանձ. ահա՛ կղե՛րը. աչքն է ժողովուրդին, արե՛ւն է երկրին ու սանձը՝ ձիուն, այնպէս չէ՞. բայց բե՛ր ինծի այդ կղե՛րը, որ աչք ըլլայ՝ առաջնորդէ, արեւ ըլլայ՝ լուսաւորէ ու սանձ ըլլայ՝ կառավարէ ժողովուրդը:

**ՎԱՐԴԱՆ** — Շատ լաւ, ենթադրենք թէ չունինք այդ կղերը, ի՞նչ պէտք է ընենք ուրեմն:

**ՎԱՍԱԿ** — Ես ամեն բան յայտնի չեմ կրնար խօսիլ, չարամտօրէն պիտի մեկնուի:

**ՂԵՒՈՆԴ** — Ե՛լ, ե՛լ, սպարապե՛տ, ետքի՛ թող պահէ յայտնելիքները:

**ՎԱՍԱԿ** — Գիտեմ, եթէ յայտնեմ, վիշապի պէս պիտի գալարուիս, առիւծի պէս պիտի մոնչես, բայց հոգ չէ՛. ահա՛ իմ կարծիքս, երէ՛ց, սպարապե՛տ.

1. Մեր յոյսը խախուտ է, քանի որ այս ազգին վրայ դրած ենք. այս ազգը, այնչափ վատ, ներքին վէճերու մէջ կը թապլտկի, իրարու արիւն կը խմենք, պատակտուած ազգ մը...: Ահա ժողովուրդդ, երէ՛ց:

2. Չըկայ երկու նախարարութիւն, իրարու հետ հաշտ. արդէն ո՛ւր որ աւաղակ մը, մարդասպան մը կար, փախեր հո՛ս է ապաստաներ, ի՞նչ երթանք հեռուները. Ատրամելիք ու Սանասար՝ Սենեքերիմի երկու հայրասպան որդիները՝ փախան Հայաստան, Սկայորդի նահապետէն սիրով ընդունուեցան ու հիմնեցին Արժունեաց ու Գնունեանց նախարարութիւնները. Քանանացի փախստական Քանանիա իշխանը՝ ծնունդ տուաւ Գնթունեանց նախարարութեան, Սուր նահապետին օրով. Աժդահակի Անոյշ կիներ, վիշապներու մայրը, եկաւ մէկ քանի ազնուականներու հետ Երասխի եզերքը բնակեցաւ ու հիմնեց Մուրացան նախարարութիւնը, Տիգրան Ա.ի օրով. Շամբատի ցեղէն Բագարատ՝ հիմնեց Բագրատունեաց նախարարութիւնը. դեռ քանի՛ քանիներ, Արշարունի կամ Պահլաւ, Կամսարական, Մամգուն...:

**ՎԱՐԴԱՆ** (ընդհիշելով) — Այդ վերջին անունը յիշելո՛ւ համար է արդէն որ այդ թուումը կ'ընես.

**Վ. Ա. ՍՍ. Կ** (շարունակելով) — Ամենքն ալ եկամուտ նախարարութիւններ, որոնք բնաշխարհը լեցուցին օտար բարքերով ու զօրքերով. ասկէ՛ պառակտում, անվերջ ու անհաշտ կռիւներ: . . .

3. Կղերնե՛րը գրաւեր են մեր երկի՛րը . . . մատուցաշ մանուկներ, աղջիկներ, կիներ, բոլո՛րն ալ սաղմոսերգուներ դարձան. ո՛ւր է բնապաշտական դարերու անմեղ, անխառն երջանկութիւնը. ո՛ւր են ո՛ւր, Արմաւրի սօսիները. միթէ՛ մենք այն ատեն չունէի՞նք պաշտամունք. Հայերը չէի՞ն պաշտեր Լուսինը, Անահիտը, Ոսկեծղին, Ոսկիամայրը . . . այն ատեն ինչ ո՛ւ վանքեր չունէինք, ա՛լս, պղծեցին մեր սրբութիւնները, այն օրէն որ Անակի տղան ստքը գրաւ մեր հողին վրայ, սեւ ու չա՛ր օր. անիծեա՛լ թուական, Եփրատի եզերքը համախմբուած Հայութիւնը մկրտե՛ց ու անոր պղտոր ալիքներուն մէջ յաւիտենապէս թաղեց՝ մեր քաղաքական անկախութիւնը. ո՛ւր հեթանոս Տրդատը, ո՛ւր քրիստոնեայ Տրդատը. այրե՛լ տուաւ մեր հին մատեանները բանաստեղծութեան, մեռցուց հինին ու անցեալին սէ՛րը. նոր հայութիւն մը ձուլեց, որ ահաւասիկ.

3. Դեռ չենք գիտեր թէ որո՞նք են մեր արտաքին թշնամիները կամ բարեկամները. ի՞նչ կը կարծէք. ոգեվարքի մէջ հեծող Բիւզանդական կայսրութեան վրայ դրած էք յոյսերնիդ. կը կարծէ՞ք թէ Յոյնը մեզի օգնէ այս պահուս. — երբէ՛ք. եթէ ան՝ Հայաստանի բարեկամ ըլլար, Բիւզանդիոնի գահը բարձրացած տասնըմէկ հայազգի կայսրերուն օրով կը ցուցնէր մէկ փորձը. այո՛ ցոյց տուա՛ւ. Պապը գլխատեց, Ներսէսը աքսորեց, ու հիմայ, Թէոդոսի զրկած պատասխանը ծանօթ է, ահա՛ Յոյնը, ահա՛

քրիստոնեայ կայսրութիւնը, որուն գիմեցինք . . . :  
Իսկ Ազուանք, Հոնք, Վրացիք և ուրիշ փոքրիկ  
ազգութիւնները ճնշուած են պարսկական տիեզերա-  
կալ լուծին ներքեւ, ա'յն աստիճան որ չեն կրնար  
չարժիլ. ըսել է թէ՛ մեզի համար ամեն յոյս կորսուած  
է: Սակայն Պարսիկը կա'յ ու կայ, միշտ հզօր, միշտ  
ահաւոր, միշտ պատկառելի . . . :

Ուրեմն, որի՞ վրայ դրած էք ձեր յոյսը. ըսէ՛ք  
նայիմ, հիմայ ս'վ իրաւունք ունի, ե'ս թէ գուք. չ'ը-  
սես, երէ՛ց, որի՞ վրայ է ձեր յոյսը . . . :

**ՂՆԻՈՆԻ** (բ-ր-ի-ւ-ն-ը-ն-ը-ն-ը) — Մեր յոյսը՛, մեր  
Աստուածն է. ա'ն որ երկինքէն կ'իջիսէ թագաւոր-  
ներուն. թագաւորներուն թագաւորը. և ան՝ որուն  
հրաշքները կ'ուրանաս, ս'վ Սիւնեաց իշխան, ա'ն  
պիտի պատժէ քե՛զ ալ, տո'հմդ ալ. բաց աչքերով  
տեսնես բոլոր յոյսերուդ ցնդի'չը. զաւակներդ, զա-  
ւակներդ, աչքի՛դ առջեւ յօշյօշ պատուտե'ն զազան-  
ները. այրիդ՝ քարուքանդ պալատիդ վրայ բուխ  
վա՛յը ձգէ նատի լա՛յ. որդերը վխտան պճպճան մարմ-  
նիդ մէջ. օձեր ու կարիճներ փաթթուին միտիդ.  
խայթե'ն, թունաւորեն քեզ, ամբողջ մարմինդ թա-  
րըխտի՛, շարաւներո՛ւ մէջ հոտի. հոգիդ, անա՛րգ  
հոգիդ, դժողքի գեւերուն, ճիւղներուն ճա՛նկը իյ-  
նայ, գեհենի լափլիզող կրակներուն մէ՛ջ թապլտկիս.  
սովալլուկ գազանները կրժեն սակորներդ, կրժե'ն,  
կրժե'ն ու կրժե'ն . . . : Անիծեա՛լ, անիծեա՛լ ըլլաս  
յաւիտեան. անիծեա՛լ . . . անաթէմա . . . :

(Չար-գոյրը կ'իջնէ)



# Ա Ր Ա Ր Դ .

## Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա .

**ՇՈՒՇԱՆԻԿ** (Տիւակ, հերարձիւս — լիւս, — շիւիւս իւս  
 նսարձ, — Գ—արի իւս դէս) — Ա՛լ տարակոյս չիկայ, ան-  
 խուսափելի է պատերազմը. հայրս՝ սպարապետ,  
 Վրոյրս՝ իւր Ա. թիկնապահը, իսկ ես հոս, անմխի-  
 թար մօր մը քով, պիտի հեծեմ ու հեծեմ. Ա՛խ,  
 ի՞նչ դառն է աղջիկ ըլլալ ու սպարապետի՛ աղջիկ,  
 պատերազմի տենչէ՛ն տանջուիլ, և, աղջի՛կ է, ըս-  
 ուելով՝ տունը փակուիլ, արգիլուիլ, բանտարկուի՛լ,  
 հեռի՛ մարտի ասպարեզէն... : (Ընդհանուր կ'եւէ Կեդէն,  
 սպարապետ) Ո՛չ, ո՛չ, ես պիտի չըջեմ իրերուն կար-  
 գը. պիտի ջնջեմ դարերու ամօ՛թը. ինձմս՛վ սկսել  
 պիտի տամ դիւցազնութիւնը մեր ցեղին մէջ. ի՞նչ,  
 Պարսիկը պղծել փորձէ մեր եկեղեցիները, ասպա-  
 տակէ մեր հայրենիքը, ու ես Մամիկոնեա՛ն մը,  
 Վարդանի հարազատ աղջի՛կ մը, արի զօրականի մը,  
 Վրոյրիս խօսեցեալը՝, դատապարտուի՛մ չը մասնակ-  
 ցելու կտրիճներու հանդէսներուն, չը խառնուիլ  
 քաջարի գունդերո՛ւն... Օ՛, կարելի՞ բան է... :  
**ՇՈՒՇԱՆԻԿ** (Տիւակ) պատերազմելու տենդէ՛ն բռնը-  
 ուած է, կեանքի սէրը չի՛ խօսիր հիմայ իր սրտին,  
 որ հայրենիքին սիրովը բռնկել է. բայց սէրը կռիւ  
 մը չէ՞ արդէն. կեանքին հրդեհը՝ որ կը բռնկի ներսը  
 ու կըսպառնայ լափլիզել կեանքը... : Սակայն,  
 Շոուշանիկ՝ աւելի վսեմ կռի՛ւ մը պիտի մղէ այս պա-  
 հուս, Հայուն ու Պարսիկին, Հայրենիքին ու թշնա-

միին, Ազատութեան ու Բռնութեան կռիւը, որ անտարակոյս մեր յաղթանակով պիտի պսակուի. չէ՞ որ սպարապետը հա՛յրս է, իմ հա՛յրս է զօրավարը, ու իմ հոգիս, իմ կեանքիս կէսը՝ Վրո՛յր է իր թիկնապահը . . . : է՛հ ուրեմն, ես հայ աղջիկ մը, ինչո՞ւ չըլլամ դիւցազնուհի մը. ինչո՞ւ չը խորամխիմ բանակին մէջ ու չը ջարդեմ իմ կարգիս պիղծ թշնամիի գլուխներ . . . : Այո՛, այո՛, կարիճ մըն ալ ե՛ս եմ, ե՛ս (ի՛նչի՛նչ ցոյց բու՛ով). առիւծ է որձ առիւծը, ի՞նչ է մատակ առիւծը. այո՛, պիտի երթա՛մ, միանա՛մ պիտի հայ քաջերուս, Վրոյրի՛ս հեա, Վրոյրիս կո՛ւշարը պիտի կռուիմ, վայրկեա՛ն մը պիտի չզատուի՛մ իրմէ, ներկայութեամբս պիտի ոգեւորե՛մ բանակը . . . : (Գողգոթի մը ներս կը սուսի՛ն վրայ)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

ՇՈՒՇԱՆԻԿ , ՎՐՈՅՐ

**ՎՐՈՅՐ .** — (+ձիժաղով մը) Պիտի ոգեւորե՛ս բանակը:

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — (եթի՛ն կը նայի, վրայը կը տե՛նէ, կը լսէ, կը թիկէ) Դուն հո՞ս . . . (կը խօսի՛ն երբե՛ս, լսուի՛ն մը կը կեանան իրարե՛, երկու՛ս +այլ անդին, երբե՛ս կը նային սուսի՛ն):

**ՎՐՈՅՐ .** — վերջապէ՛ս, դո՞ւն ալ, Շուշանի՛կ, դո՞ւն ալ պիտի պատերազմիս :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — ինչո՞ւ չէ. ես ի՞նչ եմ որ. միթէ ես ալ մարդ չի՞մ :

**ՎՐՈՅՐ .** — Բայց Սպարապետը պիտի արտօնէ՞ :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — Հայրս չ՛արտօնէ՛ . . . ի՞նչ արգելք կայ :

**ՎՐՈՅՐ .** — Մայրդ ի՞նչպէս պիտի թոյլ տայ :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — Եթէ հայրս ալ չարտօնէ, եթէ

մայրս ալ արգիլէ, դարձեալ պիտի երթամ, պատե-  
րազմի՛մ պիտի. վրո՛յր, մի՛ խոցոտեր սիրտս. թո՛ղ  
ծնողքս արգիլէ, բայց հայրենի՛քս. պիտի կռուի՛մ  
այո, պիտի կռուի՛մ, ու թերեւս պիտի՛...

**ՎՐՈՅՐ.** — Մի՛, լուէ՛, մե՛նք պիտի յաղթենք:

**ՇՈՒՇԱՆԻԿ.** — (Էր-ըն-ն, կարս-ած դեմ-վ) վրո՛յր,  
չե՞ս զարմանար եթէ քեզի ըսեմ թէ՛ սիրտս երբէ՛ք  
չի տրոփեր, ինչպէս որ միշտ կ'ըլլար մեր հանդի-  
պումներուն. հիմայ, ուրիշ զգացումէ մը, տարբեր  
կիրքէ՛ մը կը տանջուիմ. կռուելու կիրքէ՛ն...

**ՎՐՈՅՐ.** — Իսկ մեր սէ՞րը:

**ՇՈՒՇԱՆԻԿ.** — Մեր սէրը՛, պատերազմէ՛ն յետոյ:

**ՎՐՈՅՐ.** — Հապա վտանգները՛, աքսո՞րը, ան-  
ջատո՞ւմը... մահը բան մը չէ՛. բայց անջատո՞ւմը.  
ա՛հ, այն ատեն, եթէ դո՞ւն...

**ՇՈՒՇԱՆԻԿ.** — Ո՛հ, այն ատե՛ն, եթէ դուն... ,  
(յա՛նկ-ըծ) բայց ինչո՞ւ այս սեւ սեւ մտածումները...  
ի՞նչպէս այն ատեն պիտի կրնանք գիրա՛ր...

**ՎՐՈՅՐ.** — Դուն ինէ հեռո՞ւ, ուրիշի՛ մը... Իսկ  
ես աքսոր, կամ մեռա՞ծ... Կարելի՛ չէ, Շուշանի՛կ,  
անգութ է ասիկայ, անկարելի՛ է. գէթ դո՞ւն ապրէ՛,  
ու եթէ ես ողջ վերադառնամ, քու սէ՛րդ բոլայ իմ  
պսակս... :

**ՇՈՒՇԱՆԻԿ.** — Մեր պսակը՛, մեր պսակը՛, ա՛յո,  
բայց... պատերա՞զմը. ա՛խ, անգո՞ւթ ճակատագիր.  
(Վրո՛յրի դեմ-վն դի-թո-ած, «իբրևարակոն հո՛վ մը կ'անցնի  
ծակոն, բաժանման մարտո-մէն կը ի-ս-վի») երկի՛նք, չը  
տեսնե՛մ... :

**ՎՐՈՅՐ.** — Մի՛ դողար, Շուշանի՛կ, ես չե՛մ մեռնիր:

**ՇՈՒՇԱՆԻԿ.** — (Ը-վ-ծ) Բայց ի՞նչ կ'ըսեմ, ի՞նչ.  
միթէ ինձի կը վայլէ՞ անձնատուր ըլլալ սիրո՞յ. եր-  
բէ՛ք, պատերա՞զմը, պատերա՞զմը:

**ՎՐՈՅՐ**. — Իսկ եթէ . . .

**ՇՈՒՇԱՆԻԿ**, — Մեռնինք, մեր սէրը հետերնիս  
երկիրնք կը տանինք :

**ՎՐՈՅՐ**. — Աւա՛ղ, դեռ գիրար չը վայելած երկ-  
րիս վրայ, մենք ի՞նչպէս պիտի գիրար գտնենք եր-  
կընքի մէջ. երկնային ցնորք, անո՛ւշ պատրանք . . . :

**ՇՈՒՇԱՆԻԿ**. — Վրո՛յր Վրոյր, հաւատք չունի՞ս  
անմահութեան վրայ :

**ՎՐՈՅՐ**. — Ի՞նչ ընեմ առանց քեզի անմահութիւնը . . .

**ՇՈՒՇԱՆԻԿ**. — Ես միշտ հե՛տդ եմ ու հե՛տդ պի-  
տի ըլլամ. հե՛տդ կ'ապրիմ, քովդ կը կռուիմ ու քովդ . . .

**ՎՐՈՅՐ**. — Չե՛մ ուզեր որ մեռնիս, հոգի՛ս. յետոյ,  
գերեզմանիս վրայ — եթէ երբէք ունենամ գերեզ-  
ման — ո՞վ պիտի արցունքի կաթի՛ւ մը թափէ . . . :

**ՇՈՒՇԱՆԻԿ**. — Ի՞նչ է գերեզմանը, ի՞նչ է մար-  
մինը, Վրո՛յր, Հայրենի՛քը պիտի փրկենք . . . : Եթէ  
ողջ մնանք, հոս. Իսկ եթէ մեռնինք, հո՛ն, բո՛ւն  
հայրենիքին մէջ գիրար պիտի գրկենք, այնպէս չէ՞ . . .  
(Իւ կ-ի-ի-ի Վրոյրէ շրճ-ը-է-ն, Բե-եւը իշն ուլ-ը-ը երկ-  
որէն) :

**ՎՐՈՅՐ**. — (յո-դ-ը-ը, յը Բ-ը-ն-ե-լ-ը) Շուշանի՛կ,  
արդեօք վերջի՞նն է . . . :

**ՇՈՒՇԱՆԻԿ**. — Վերջի՞նը, ուխտս մոռցար. քեզի  
հետ եմ, Վրո՛յր, քեզի պիտի հետեւիմ ու իմ գե-  
ղեցկութենէս աւելի՛ արիութեամբս, կուսական  
չնորհքէս աւելի՛ առնացի կորովո՛վս պիտի հրապու-  
րեմ քեզ, ո՞վ իմ քաջ պատանիս :

**ՎՐՈՅՐ**. — Շուշանի՛կ, Շուշանի՛կ, դուն մի՛ գար.  
մի՛ գար դուն. քեզի՛ համար կը կռուին վաթսուներ-  
վեց հազա՛ր քաջեր. դուն հոս, երջանիկ խաղաղ  
ապրէ, մայրդ մխիթարէ՛. քեզի պէ՛տք ունի Հայաս-  
տան. դուն ապագայ թագուհի՛ն ես . . .

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — (—բհ—հ—բհ—) Թագուհի, խստելի, ատելի տիազոս, ես կը նախընտրեմ ըլլալ հերոսուհի, քան թէ կոչուիլ թագուհի :

**ՎՐՈՅՐ .** — Հերոսուհի կը կոչենք քեզ, Շուշանի'կ, միայն թէ տեղդ հանգիստ կեցի'ր, կ'ազաչեմ, մի' գար . . . :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — Պիտի գամ, պիտի գամ, մի' հակառակիր :

**ՎՐՈՅՐ .** — Է՛հ, քանի որ ուխտդ՝ ուխտ է, գոնէ մի' զատուիր հօրդ քովէն ու միշտ ինձի հետեւէ :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — Պատերազմին բա՛ղդը գիտէ. ուր որ աւելի կատրած գտնեմ թշնամին՝ հո՛ն պիտի նետուիմ, հո՛ն, իմ ճանճկէն ճերմակ ձիովս, ես ու ձիս, միասի՛ն պիտի խոյանանք արիւնի գաշար՝ . . . . Աւարա՛յր, Աւարա՛յր, բիւրաւորներո՛ւն ժամադրավա՛յրը, հոն, Տղմուտին եզերքը, ասդին՝ Հա՛յր, անդին՝ Պարսի'կը. ասդին՝ հայկական սրընթաց երկվարները, անդին պարսկական դանդա՛ղ փիղերը. ասդին՝ Քրիստո՛ս, անդին՝ Զրադա՛շտ . . . :

**ՎՐՈՅՐ .** — Է՛հ, մնա՛ս բարով ուրեմն, ո՛վ իմ հոգւոյս հատորիկ, ահա՛, ահա՛ կ'երթամ, (կը ճօրե՛նայ, յա—չր—ճն—ից, կը փաբէ Շո—շանի'կն) թերեւս վերջին անգամ մն է. ո՛վ գիտէ. պատերազմին գալարափողը մո՛տ է գոռալու, ահա՛ կ'երթամ, ահա՛ կ'երթամ, մնաս բարով, ի՛մ սիրական (կը ք—ճն—ի) :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — (—չ+բը կը —բէ) Ետեւէ՛դ պիտի գամ, ետեւէ՛դ, (կը ճօրե՛նայ կը հաճբո—րո—ին) գոնէ մինչեւ բակի դուռը գամ քեզի հետ, անգամ մըն ալ նայիմ հասակդ . . . : Բայց (ճո—ճի—ո— ո— որո—մ) կ'ուզէի անգամ մըն ալ նստիլ քեզի հետ մեր նռնենեաց շուքին տակ, անգամ մըն ալ ունկնդրել մեր սոխակնե-

բուն երաժշտութիւնը՝ մեր վարդենիներուն վրայ .  
 քեզի հետ անգամ մըն ալ կ'ուզէի պտըտիլ արծա-  
 թալիք առուակիս եզերքը, լսել իր մրմունջներուն  
 խառնուած թռչուններուն սիրե՛րգը . ա՛խ, երազե՛լ  
 կուզէի քեզի հետ, ինքզինքնիս մտնա՛լ, բոցանա՛լ,  
 անէանա՛լ . . . : Սակայն, աւա՛ղ, դուն կ'երթա՛ս . . .  
 մահուան դա՛շտը կ'երթաս . (Եր կը Դ--նայ, կը սի-  
 լալ լո--ն ճ--ն ու կը նորի խ-կ--ն, գլ--իւ յե--տեր--ն Տէ՛,  
 նայն Տիջ-ցին Ղե--նդ երեցը ներս կը մտնէ) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Յ Գ .

ՇՈՒՇԱՆԻԿ , ՂԵՒՈՆԴ ԵՐԵՅ

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — Գնա՛ց, գնա՛ց, ա՛լ պիտի չգառ-  
 նայ . (Երե--նեցը կը թ--ծկէ յե--տեր--իւ) :

**ՂԵՒՈՆԴ .** — (Տօրե--լով Շ--չ--նիկին) Ի՞նչ կայ դարձ-  
 եալ, աղջի՛կս, ինչո՞ւ այդպէս մտածկոտ կ'երեւիս :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — Ի՞նչպէս չը մտածեմ, Տէ՛ր Հայր ,  
 քանի որ ժամը մօտեցաւ . ահա՛ գունդ գունդ կը  
 դիմեն Շաւարշան, ես հոս ի՞նչպէս չը մտածեմ . . . :

**ՂԵՒՈՆԴ .** — Դո՛ւն ալ պիտի գաս, աղջի՛կս,  
 քե՛զ ալ պիտի տանինք :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — (Խնդալով) Կ'աղաչեմ, Տէ՛ր Հայր ,  
 նոր բա՞ն մը կայ . խօսեցա՞ք հօրս, զիս՞հետը պիտի  
 տանի՛ . (Գլ--իւ երեցընե--լ ԴժԳ--ն) ո՛չ, ո՛չ, ես հոս  
 չե՛մ կենար . . . :

**ՂԵՒՈՆԴ .** — Խօսե՛ր եմ, աղջի՛կս, անհոգ եղի՛ր,  
 դուն հիմա գնա՛, բանակին հետ կը տանինք քեզ :

**ՇՈՒՇԱՆԻԿ .** — Արդեօ՞ք, Տէ՛ր Հայր, իրա՞ւ է .  
 պիտի տանի՞ք զիս ալ . պիտի տեսնէք թէ ո՛րքան  
 արժանի եմ եղեր ձեր վտտահութեան . . . :

**ՂԵՒՈՆԳ**. — Սպարապետին աղջիկը՝ Հայոց զօրքերուն կամիլլա՛ն պիտի ըլլայ ու զանոնք պիտի մղէ գէպ ի կռի՛ւ, քանի՛ տեսնեն քեզ իրենց մէջ, ա՛յնքան պիտի արիանան, երբէք պիտի չը թուլնա՛ն...

**ՇՈՒՇԱՆԻԿ**. — Երթա՛մ ուրեմն, Տէ՛ր Հայր, վըստահ ըլլա՞մ. ձեր խոստումը՝ խոստո՞ւմ է՞ գիտեմ:

**ՂԵՒՈՆԳ**. — Անշո՛ւշտ, անշո՛ւշտ, աղջի՛կս, դուն հիմա գնա՛, դիս մինակ ձգէ՛ հոս. (Շո՛ւշուիկ ուրիշ զրոյսի կ'ելէ):

**ՂԵՒՈՆԳ** (Մինչև աղօթի կեցած) — Տէ՛ր իմ Փրկիչ և բարերար. մօտեցաւ, ահա՛ հասաւ վճռական օրը, պատերազմի՛ն օրը. դուն գիտե՛ս, վերէն նայէ՛, գթա՛ երկրպագուներուդ, տիրելու տենչանքէն չե՛նք թեւադրուած մենք, այլ քու սէ՛րդ, ո՛վ Փրկիչ աշխարհի, քու սէ՛րդ միայն կը մղէ մեզ կռուելու մազդէ-ութեան գէժ. դուն գիտե՛ս, նայէ՛ ու տե՛ս...: Տե՛ս բիւրաւոր պաշտողներդ, սրոնք Հայաստանի գեղերէն ու քաղաքներէն եկած ու հոս խոնուած են. թողե՛ր են իրենց սիրելի վառարանները՝, թողե՛ր են իրենց արտերն ու այգիները՝, հո՛ս եկեր են, հոս, արիւնի դաշտը, արիւնի սև կրակի մկրտութիւնը մկրտուելու և իրենց արիւնով՝ եկեղեցի՛դ փրկելու. դո՛ւն գիտես, Տէ՛ր իմ, դո՛ւն գիտես...: Մի՛ թողուր որ Յազկերտ գործադրէ իր չար դիտումները. մի՛ թողուր որ ուրացող վասակ յաջողի իր դաւերուն մէջ...: (Մուրաբէր ու Գեորգի) Քեզի՛, քեզի՛ միայն, ո՛վ Յիսուս, կը բանամ սրտիս գաղտնի՛քը. այս անգամ ալ ազատէ՛ Հայաստանը՝, ազատէ՛ Բռնութեան ժանիքէն, վերադարձո՛ւր կորսուած խաղաղութիւնը, այցելէ՛ թշուա՛ռ Հայաստանին...: Այնուհետեւ ընդունէ՛ հոգիս քու յաւիտենական ծոցի՛դ մէջ. այն ատեն սիրայօժար կը

փակեմ աչքերս, ու կ'աւանդեմ հողիս, մրմնջելով  
(նոյն պահան շերս ինչ զորե ներշնչուհի, շնորհակալ Ղե-  
տար էրեցէն) «Արդ արձակեալ զծառայս ք...» :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՂԵՒՈՆԻ, ՆԵՐՇԱՊՈՒՀ

**ՆԵՐՇԱՊՈՒՀ** — Կ'աղօթե՞ս դեռ, Տէ՛ր Հայր, կարճ  
է ժամանակը. Սրբազան Հայրապետը ո՞ւր է, Սպա-  
րապետը դեռ չեկա՞ւ :

**ՂԵՒՈՆԻ** — Ե՛ս ալ կը սպասեմ, այսօր կանուխ  
եղեր է սպարանքէն :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ**. — Գիտեմ, Հայրապետին հետ էր.  
պիտի գային մինչեւ հիմա :

**ՂԵՒՈՆԻ**. — Ուրեմն սպասե՛նք :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ**. — Իմացա՞ր լիրբին ըրածները.  
անամօ՛թ... :

**ՂԵՒՈՆԻ**. — Վասա՞կը. արդէն ի՞նչ կը յուսաս  
այդ անաստուա՛ծ հրեշէն :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ**. — Շա՛տ բաներ կը յուսայի, բայց  
հիմա՛ :

**ՂԵՒՈՆԻ**. — Զգուշանա՛լ պէտք է, Արծրունի՛ :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ**. — Հապա քովի Զանգա՞կը, քա-  
հանաներուն արա՞տը, հայրենիքին դաւաճա՞նք :

**ՂԵՒՈՆԻ**. — Առաջ անո՛ր պատիժը պէտք է  
տալ, ատ գարշելին շա՛տ մտքեր պղտորած է :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ**. — Կրնամ ըսել թէ՛ վասակի՛ն ալ  
թունատուն ի՛նք է եղեր :

**ՂԵՒՈՆԻ**. — Կը սխալիս Արծրունի՛, վասակ թու-  
նատուի կարօտ չէ՛. ի՛նք արդէն թունաւոր օ՛ձ մըն է... :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ**. — Բայց Զանգա՞կը, այն անար-  
ժա՞նք. օ՛խ, ի՛նչպէ՞ս փռեցի գետինը... :



**ՂԵՒՈՆԻ.** — (այլայլաձ) ի՞նչ կ'ըսես, Արծրունի',  
ի՞նչպէս, իրա՞ւ վերջացուցիր:

**ՆԵՐՇԱՊՈՒՀ.** — (գոհունակ) Վա՛յրկենապէս... ոճ-  
րագործը, Սպարապետին արի՛ւնը պիտի մտնէր...:

**ՂԵՒՈՆԻ.** — Կեցցե՛ս Արծրունի, փա՛նք Քեզ  
ամենակա՛լ Տէր, փա՛նք Քեզ (Բաղկատարաձ)...: Բայց  
ինչո՞ւ կ'ուշանան ասոնք, արդեօք ի՞նչ պատահեցաւ  
(+իչ ղ կասկածաք):

**ՆԵՐՇԱՊՈՒՀ.** — Եթէ դեռ ուշանան, ի՛նչ պիտի  
ընենք հաս:

**ՂԵՒՈՆԻ.** — Քիչ մըն ալ կըստասանք, պէտք է  
գան. (Դրե՛ն աղմուկներ, սոսի յայներ, կարգով ներս կը ղր-  
նն Յովե՛ի կաթողիկոս. Սահակ եղի՛կոյոս, նախարարներ):

Տ Ե Ս Ր Ա Ն Ե

**ՆԱԽՈՐԴՆԵՐԸ, ՅՈՎԱՍԷՓ ԿԱԹՈՂՈՍՈՍ, ԱԱՀԱԿ**

**ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐ, ՎԱՐԴԱՆ**

**ՅՈՎԱՍԷՓ ԿԱԹՈՂՈՍՈՍ.** — Ողջո՛յն ձեզ, ո՛վ սի-  
րելիք:

**ՂԵՒՈՆԻ.** — (Ներշնչունակ) Ահա՛ եկան. (կաթողիկո-  
սին) Աստուած օգնական, Ս. Հայրապետ:

(Առե՛ւել կը Բարձրե՛ն կաթողիկոսին շարժը)

**ՅՈՎԱՍԷՓ ԿԱԹՈՂՈՍՈՍ.** — Օն, արի՛, Սպարա-  
պետ Մամիկոնեան, կամօքն Աստուծոյ ամենակալի և  
զօրութեամբն Յիսուսի Քրիստոսի կարգեցինք զքեզ  
բանակին զօրավար (Դասնալով նախարարներուն) օ՛ն ու-  
րեմն, ո՛վ իշխանք և նախարարք, ողջունեցէ՛ք Հա-  
յոց մեծ սպարապետը...:

**ԱՄՆԵՔԸ.** — (Բրձրձյն) Կեցցէ՛ մեծ Սպարապետը...:

**ՂԵՒՈՆԻ.** — (Եղբարաձ կը Բարձր) Կեցցէ՛ Աւարայրի  
Արծիւը (այս ղ ղոցին ճանաչին վահան, Բարձր ղ Բե-  
երան)

զրոյ առած, քարնի զրոյ առը յը քրոսած, կոտայ կը կոյնի  
Ղեռնդի + ուլ. առ առը կ'առնէ կոտայ վարդանին, ըսելով)  
այս սուրը քեզի' կը յանձնէ Հայրենի' քը, յաղթական  
վերադարձի' ր, Հայոց մեծ Սպարապետ... :

**ՎԱՐԳԱՆ.** — (առը քարն-ցոցած) կ'երդնում  
այս սուրը թուրիս վրայ, կ'ուխտեմ արիւնիս մինչեւ  
վերջին կաթիլը թափել Ս. Եկեղեցիին, Ս. Ազատութեան  
ու Հայրենի' քի' ս համար :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ.** — Ապրէ, Մամիկոնեա'ն, ապրէ'  
Հայաստանի'ն համար :

**ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂՈՍ.** — Եկեղեցին ու հայրե-  
րինի' քը քեզի' կը նային, Ազատութեա'ն Զինուոր...  
օրհնեա'լ ըլլաս դուն, օրհնեա'լ ըլլան զէնքերդ : Զօ-  
րութեանց Տէրը պիտի պահէ Հայոց բանակը :

**ԱՄՆՔԸ.** — Ապրի' վարդան Մամիկոնեան ,  
ապրի' ազատ Հայաստան :

**ՂԵՒՈՆԳ.** — Թո'ղ սատկի'ն մատնիչները...  
(Ս. Դեռ զիսին քոտը կ'ելլեն հեռե-եալ + այլերէ ուլ)

Օ'ն, յԱւառա'յր, օ'ն, յԱւառա'յր :

Իր զենքն առնէ թո'ղ մեկ մի այր,

Հո'ն, հո'ն, Տղմուս զեփն եզերք,

Մե'զ կրսպասեն ծերք ու սրդերք.

Վրե՛ժ կը կանչեն, վրե՛ժ կը մոնչեն

Հայ առիւծներ, որ կը ննջեն.


) կրկ.

Բանակ մ'ունիք վարսուն հազար

Ապրի' վարդան մեր զօրավար :

) կրկ.

(Վարդայրը կ'իջնէ)



# Ա Ր Ա Ր Ե .

Տղմուտի եզերքը, Աւարայրի դաշտը

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Վ.Ա.Ր.Գ.Ա.Ն (Միւսկ, կանախ արձնացած, արշալոյս է, քանակը արշալոյսի ձեւ կը դառնի դեռ) — Ի՞նչ քաղցր է Շաւարշանի գիշերը՝ աչքիս առջեւ կը տարածուի դաշտը, ուր կը ննջէ Հայաստանի բա՛ղդը... : Տըղմուտը՝ պղտոր ալիքներով՝ ոտքիս տակ, անդին՝ սե՛ւ բանակը, թշնամի Պարսկին գազանները, մերինին Եռապատի՛կը... : Ա՛խ, որչա՛փ ուշացաւ Առաւօտը, ե՛լ, ե՛լ, ծագէ՛ շուտով, ու բե՛ր մեզի ցանկալի՛ օրը... : Ե՛լ, ս՛վ արեւ, ե՛լ որ պաշտեն զքեզ քուրմերը, փողերով և թմբուկներով. ե՛լ որ տեսնես քու ճառագայթներուդ տակ շողշողալը մեր բանակի զէնքերուն. ե՛լ, ս՛վ արեւ, ե՛լ, ու զեփիւռի շունչով արթընցս՛ւր իմ քաջերս, որոնցմէ կախուած է Հայութեան ճակատագիրը... : (Երկէ՛ս կը շարժ) Ո՛վ սրտերու գաղտնագէտ, ամենատես՛ս Աչք, Դուն գիտե՛ս որ Պարսիկը չա՛ր է, անիրա՛ւ է... : (Յանկարծ խղճահարո՞ւնէնէ արանջուտի լճի մէջ ձեւ կա՛մայ արշալոյսի վերջիչս՛մովը) Պէ՛տք է վրէժ լուծել, վրէժ այն գազանէն, որ՛մուրեցո՛ւց մեր խիղճը... : ա՛յ, խի՛ղճս, խի՛ղճս, պիտի մեռնի՞մ առանց վրէժս առնելու, եկեղեցի՛իս վրէժը, Հայրենիքիս վրէժը. օ՛հ, սոսկալի՛ խղճի խայթ, մահէ՛ն ալ սոսկալի... : Խղճի խայթէ՛ն կը տանջուի հոգիս, այն սեւ ժամէն ի վեր որ Տիղբոնի մէջ ուրացայ հաւանտքս ուրացայ... (կանգ կ՛առնէ, անլի լարը, անլի խորհրդա՛րը) այսօր, այսօ՛ր, մինչեւ իրիկո՛ւն պիտի

քաւեմ այդ մեղքս, պիտի մաքրեմ իմ կարմիր արիւնովս . . . : (Բաշխման ինչ հետեւեալ, հետեւեալ, Բաշխման ինչ հետեւեալ, ինչ հետեւեալ) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ .

Վ Ա Ր Դ Ա Ն , Յ Ո Վ Ս Է Փ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս , Ղ Ե Ի Ո Ն Դ Ե Ր Է Ց ,  
Ն Ե Ր Շ Ա Պ Ո Ւ Հ , Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ն Ե Ր , Զ Օ Ր Ք Ե Ր

**Յ Ո Վ Ս Է Փ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս .** — Ողջոյն քեզ, Քաջ Մամիկոնեան :

**Ղ Ե Ի Ո Ն Դ .** — Ողջոյն քեզ, կարմիր վարդան :

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ն Ե Ր .** — Ողջոյն քեզ, արի՛ զօրավար :

**Վ Ա Ր Դ Ա Ն .** Դիմացի շարժումը կը դիտէ՞ք . մշուշի մէջ առարկաներ կը խլրտին, կը խոշորնան . ահա՛ կ'առաջանան գէպ ի Տղմուտ (ցոյց դրոշմ հետեւ) :

**Ն Ե Ր Շ Ա Պ Ո Ւ Հ .** — (դեպ ի հետեւ շայելով) Այո՛, այո՛ : Մատենիկն է, մատենիկ գո՛ւնդը :

**Ղ Ե Ի Ո Ն Դ .** — (զօրեւեալ) Որդեակներս, ահա՛ եկաւ վերջին ժամը . ամենքդ հաղորդեցի, գիտէ՞ք . կամաւոր պատարա՞գ պիտի ըլլաք Հայրենիքի Ս . Սեղանին վրայ . դո՛ւք, Հայաստանին ընտիր ընտիր ծաղիկները՛, պիտի բուրէ՞ք յաւիտեան . դո՛ւք, արի՛ մանկտի, Աղգին յոյսը, ապագան՝ ձեր վրայ դրուած է . ձեզի՛ նայիմ, քաջ կռուեցէ՞ք, ձեր կեանքը սուղ, շատ սուղ ծախեցէ՞ք (Խաչը յետեւ հ'օրհնէ Բաշխման) :

**Յ Ո Վ Ս Է Փ Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս .** — Մակարայեցիներուն յաղթանակները կը մաղթեմ ձեզի, քաջարի՛ մանկտի . . . :

**Վ Ա Ր Դ Ա Ն .** — Ս . Հայրապետ, Ս . Հայրեր, իշխաններ, նախարարներ, իմ անձնուէ՛ր զօրականներ . պատերազմներ շատ մղեցի, ձեզի հետ ու ձեր օգնութեամբ միշտ յաղթող եղայ . բայց այսօրուանը՛

չի' նմանիր հասարակ պատերազմներուն, որոնք կը մղուին վեհապետի մը հաճոյքին կամ գահոյքին ու թագի'ն համար. այսօրուանը՝ Լոյսին պատերա'զմն է Խաւարի'ն դէմ. Պարսիկը ջնջի'ւ կ'ուզէ Հայ անունը: Հայկազանց ու Արշակունեաց թաղուած հարստութիւնները դողացին, սարսեցան. ասոնց բոլոր թագակիր գլուխները՝ գերեզմաններուն ծոցէն դուրս ցցուած՝ մեզի' կը նային, Քաջի'ր. . . : Դարերը՝ դողալով պիտի դիտեն այսօրուան ճակատամարտը. անցեալը՝ իր փառքերով ու ապագան՝ իր պատմութեամբ. . . : Եթէ յաղթենք, կը վերականգնե'նք Հայրենիքը. իսկ եթէ մեռնի'նք, անմահ անուն մը կը թողունք ժառանգութիւն ապագայ սերունդին ու անթառամ լուսապսակ մը՝ Քրիստոսի Արքայութեան մէջ. . . :

**ԱՄԵՆՔԸ.** — Կեցցէ՛ Հայոց Սպարապետը. կեցցէ՛ Մամիկոնեանց Առիւծը, (Զ-ի'եր):

**ՆՆՐԾԱՊՈՒՀ.** — Թշնամին շարժեցա՛ւ, կը մօտե'նայ (աշո-կէր, պարեբազի ադարար յայնէր, շօր-կան մը վաշիւ-լ կը հաշի):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

ՆԱԽՈՐԴՆԵՐ, ԱՌԱՆՁԱՐ ԱՄԱՏՈՒՆԻ

**ԱՌԱՆՁԱՐ.** — Սպարապե'տ քաջ, իմ երկու հազարովս յարձակեցայ Պարսիկներուն վրայ, մեծ մասը ջարդեցինք, մնացածը փախա՛ւ:

**ՎԱՐԴԱՆ.** — Յետո՞յ:

**ԱՌԱՆՁԱՐ.** — Օգնական զօրագնդեր հասան մեզի դէմ, և ես հազիւ հոս նետեցի ինքզինքս:

**ՎԱՐԴԱՆ.** — Գունդե՞րդ. դո՞ւն մինակ, հո՞ս:

**ԱՌԱՆՁԱՐ** . — Մինակ չե՛ն, կը կռուին, գէպի հոս կ'առաջանան :

**ԱՄԵՆՔԸ** . — Զէնքի՛, զէնքի՛ :

**ՎԱՐԴԱՆ** . — Ո՛վ իմ քաջեր, կազմ ու պատրաստ . քեզի՛ Արծրունեա՛ց իշխան, քեզի՛ կը յանձնեմ առաջին գունդը, և նիզակակից՝ Մսկաց իշխանը, միւս նախարարներուն հետ . երկրորդ գունդը՝ քեզի՛ կուտամ, ո՛վ իմ կորովի Խորէն Խորխոռունի, քեզ նիզակակիցներ՝ Արսէն Ընծայեցին ու Ներսէհ Քաջբերունին : Դո՛ւն թաթո՛ւլ, Վանանդի առիւ՛ծ, ա՛ռ երրորդ գունդը, և քեզի նիզակակից՝ Տաճատ Գնթունին : Եկո՛ւր նայիմ, եկո՛ւր, ո՛վ իմ սիրական չորրորդ գունդ, եկո՛ւր, իմ անվա՛խ նիզակակից Արշաւի՛ր, և գո՛ւն, հարազատ եղբա՛յրս, Համազա՛սպ, (իւ հօֆօրօն), օ՛ն, արի՛ք, ի զէ՛ն, ի զէ՛ն, իմ քաջազուն ընկերներ, առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ . . . :

**Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ**

**ՆԱԽՈՐԴՆԵՐ, ՇՈՒՇԱՆԻԿ**

**ՇՈՒՇԱՆԻԿ** . — (յառկարժ կը հարէ, սպասադէն, գլուխը սաղասարքը) Հապա զիս մոռցա՞ր, հա՛յր իմ սպարապետ :

**ՎԱՐԴԱՆ** . — Դո՛ւն . . . (խոտմժ, յետք ճակարին) Շուշանի՛կ (դարձեալ կը խորասուշտի, յետոյ կը գոչէ) Երկի՛նք, ա՛ռ, քեզի՛ կը նուիրեմ իմ աղջիկս, միամօր աղջիկս, իմ կեանքս :

**ՎՐՈՅՐ** . — (այս ժըղցին աղչած, լեղուն բանուած, կը նայի, ինքիբն) Ան՛ հո՞ս . . . :

**ՂԵՒՈՆԴ** . — (դուրսը յայնժ) Ապրի՛ս, ապրի՛ս, վարդանի վա՛րդը, Շաւարշանի շուշա՛նը . . . :

**ՎԱՐԴԱՆ** . — Զօրականներ, առէ՛ք ձեզի նոր

նիզակակից մը . և դո՛ւն Շուշանի՛կ , նախայարձակ  
հերոսուհի , սարսափեցո՛ւր թշնամին , թո՛ղ Տղմուտի  
ալիքները դողան քու խաղացքէդ . . . : (Կը դառնայ  
Վարդէ) Իսկ դո՛ւն , Վրո՛յր , թո՛ղ զիս և հետեւէ՛ (ցոյց  
դառնել Շուշանի՛կը ) անո՛ր . սովրէ՛ զոհել կեանքդ հայրե-  
նիքին ազատութեան համար :

**ԱՄԵՆՔԸ .** — Կեցցէ՛ Շուշանիկ :

**ՎԱՐԴԱՆ .** — Շարժեցէ՛ք , ո՛ն , յառա՛ջ , յարձա-  
կի՛նք . . . : (հեռուէն կը պեռնուին գոռոցեր) :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ .** — Մուշկան Նիւսալաւուրտի՛ն վրայ :

**ՂԵՐՈՆԻ .** — (Իւրը յետը) Քուրմերո՛ւն վրայ , փի-  
ղերո՛ւն , փիղերո՛ւն :

**ԱՄԵՆՔԸ .** — Յաղթութի՛ւն , յաղթութի՛ւն :

**ՆԵՐՇԱՊՈՒՀ .** — Վա՛տը , վա՛տը , թշնամիին կող-  
մը անցաւ :

**ՎԱՐԴԱՆ .** — Հայրենի՛քը , վրէ՛ժս (կեց) :

(Ըրբեքայրը կ'ընէ)

## Պ Ա Տ Կ Ե Ր Դ .

(Աւարայրի դաշք . զիւեր .— լուսնկայ : Տղմուտը ներկուած  
արիւնով . նախահամարսին դաշք ծածկուած դիակներով ու կի-  
սամեռ վիճաւորներով) : (Ղեռնիք Երէց , Քեռի , կը Ռոտուի ,  
Վարդան , Վարդան , կանգելով) :

**ՂԵՐՈՆԻ .** — Գիշեր է գիշեր , ու ես կը թափա-  
ռիմ ահա՛ ժամերէ ի վեր , զո՛ւր կը փնտռեմ իմ սի-  
րելեաց հետքերը . ո՛ւր մնացին արդեօք . մէ՛կը չը  
դարձաւ . ըսէ՛ք , ըսէ՛ք , ինչո՞ւ կը լռէք , ո՛ւր մնա-  
ցիք Հայաստանիս պահապան՝ հրեշտակներ . . . ո՛ւր  
էք , ո՞ւր գացիք . ա՛խ . յաւիտեան՝ չը տեսնէին այս  
իմ աչքերս , չը տեսնէին այս պատկերը . ծունկերս

կթուտած, ոտքերս ա՛լ չեն կրնար շարժիլ. (Յանկ-ըժ, փեռին ծաւելով, քեան ճե կե քեկե) ա՛հ դու՞ն էս, Խոր-  
 խոռուենեաց տոհմին ա՛ստղը, կորովի՛դ Խորէն, ու  
 դո՛ւն, Արտա՛կ . . . (կե քե՛քէ քաւի, կե՛ն) Աստուած իմ,  
 ի՞նչ կը տեսնեմ, Գնուենի՛ս, Վահան Գնուենիս ու քովը,  
 ճի՛շդ քովիկը, Վրո՛յրս, Շուշանիկին ապագա՛ն, Մամի-  
 կոնեան սպարապետին թիկնապա՛հը, աւանդ, վար-  
 դագոյն արիւնը սառե՛ր է ճակատը . . . (կե ա՛ղա, հա-  
 աւանդե՛ք) Արշաւի՛ր . . . Վարդանիս աջ բազուկը,  
 դո՛ւն ալ ինկար (կե լ-է, ա՛ւ լ-ւ լ-ւ ա՛ւ լ-ւ) դո՛ւն  
 էս, Համազա՛սպ, Համազա՛սպ. ո՛հ, արիւնի ծովին  
 մէ՛ջ կը լողամ . . . : Չէ՛, չէ՛, այս թափուած արիւնը  
 պիտի խօսի՛ երկինքը. պիտի լուծէ՛ վրէժը . . . : (Այս  
 պահուն, Տղտա՛րի ալիքներուն հետ խառնուած արտա՛ս երգ  
 ճե հեռուէն կը հասնի Անուարի ալիքին. Անուար, գլու-  
 իք վեր կ՛առնէ ալիքը դեմը, քե՛տը կը տեսնուի, արցունք-  
 ներս թշ, զգե՛րը կարճա՛յն : Երգին վերջին վանկերը կը  
 լսուին որոշակի . — «Մեռա՛ւ Վարդան, լա՛յց, Հայաստա՛ն» :  
 Անուար կը ցնցուի, երկու թաղանթները արածած, փեշեր-  
 ուն խաղաղ հովին դե՛մ, կը կռնի, կարճ ճե դե՛մ կը խոր-  
 իսկէ, նորէն կը նստի, կը դառնայ) հէ՛ . . . մեռա՛ւ Վար-  
 դան, (ա՛ կե՛ն, քե՛ն ճե ճե, կե քեկե. Վարդանին աւ-  
 շուշարիան է, գլուխը՝ Անուարի յետո՛սն ճե) Դո՛ւն,  
 դո՛ւն, ո՛վ Տարոնի առիւծ, Աւարայրի արծիւը, ինկա՛ր  
 ուրեմն. ո՛րք մնաց Հայրենի՛քը. ո՛րք, տարաբա՛ղդ  
 Շուշանիկը . . . :

**ՇՈՒՇԱՆԻԿ.** — (Յանկ-ըժ, քե՛ն հի՛ն ճե դե՛մ ներ-  
 տեւել դեդէ Անուար) Ինչո՞ւ որք, պիտի ապրի՛ Հայ-  
 րենիքը, անմահացա՛ն Վարդանանք :

(Վարդանը կ'ընէ)

**Վ Ե Ր Ջ**